



«Միտք» վերլուծական կենտրոն

Հայոց հյուսիսային դարպասները.

ՋԱՎԱԽՔ

ԼՈՌԻ

(հողվածների ժողովածու)

1

Երևան
«Միտք» վերլուծական կենտրոն
2009

ՀՏԳ- 941 (479.25) : 327
ԳՄԴ- 63.3 (2Հ) + 66.4
Հ 282

*Խմբագիր և առաջաբանի հեղինակ՝ քանասիրական
գիտությունների թեկնածու,
«Արևմտահայոց հարցերի ուսումնասիրության կենտրոն»
գիտահետազոտական հիմնադրամի տնօրեն
Հայկազուն Ալվրցյան*

Հ 282 Հայոց հյուսիսային դարպասները. ՋԱՎԱԽՔ, ԼՈՌԻ:
Հոդվածների ժողովածու - Եր.: «Միտք» վերլուծական
կենտրոն, 2009.- 90 էջ:

*Ներկայացվող հոդվածների ժողովածուն իր մեջ ամփոփում է Հայաստանի
հյուսիսային ծայրագավառների մասին տարաբնույթ տեղեկություններ: Այդ
գավառներն այսօր ամբողջովին կամ մեծամասամբ իրերի բերումով ներառ-
ված են ներկա Վրաստանի կազմում: Վերջիններիս պատմական անցյալի և
քաղաքական ներկայի մասին ճշգրիտ և միջազգային իրավական նորմերի լույ-
սի ներքո լուսաբանումը ուղղորդում է Վրաստանի հետ ներկայում և ապագա-
յում հարաբերությունների կառուցման գործընթացում և տալիս շար հարցերի
պատասխաններ:*

*Ձալախք և Լոռի պարմաշխարհագրական տեղանուններն այսօրեղ սրա-
ցել են քաղաքական բովանդակություն և համապատասխանաբար տարածվել
Հայաստանի հյուսիսային մի շարք գավառների վրա:*

*«Հայոց հյուսիսային դարպասները. ՋԱՎԱԽՔ, ԼՈՌԻ» հրատարակությու-
նը, իր մեջ ներառելով համապատասխան թեմաներով աշխարհակրներ, լինելու
է շարունակական:*

ԳՄԴ- 63.3 (2Հ) + 66.4

ISBN 978-99941-2-259-2

© «Միտք» վերլուծական կենտրոն, 2009թ.

ԱՌԱՋԱԲԱՆ



Հայկազուն Ալվրցյան

Վրաստանի անկախացումը երկ-
րի առջև դրեց հարցեր, որոնց
լուծման հնարավորությունները խիստ
սահմանափակ էին, իսկ այդ հարցերը
չլուծելու դեպքում Վրաստանին ան-
խուսափելիորեն սպառնում էր մաս-
նատուժն ու քայքայումը: Այդ հարցերի
մեջ կարևորագույնը, թերևս, ազգային
հարցն է, որը փոքրիկ կայսրության
համար ճակատագրական նշանա-
կություն ունի: Այսօր ակնհայտ է, որ
Աբխազիայի և Չարավային Օսիայի
անկախացումով երկրի մասնատման
առաջին փուլը գործնակա-
նում ավարտված է, սակայն առաջադրված
հարցերը առավել սուր բնույթ են
ստացել, իսկ լուծումների հեռանկարը
դարձել ավելի մշուշոտ ու անկանխատեսելի:

Այտեղ էական է ոչ միայն այն հանգամանքը, որ ազգային հարցը
գոյություն ուներ օբյեկտիվորեն. վճռական նշանակություն ունեցավ
նաև այն, որ ազգային հարցը հորհրդային Միության փլուզման հիմ-
նական պատճառներից մեկն էր: Փլուզումից հետո ձևավորած ազ-
գային հանրապետություններից շատերը, պարզվեց, լուրջ տարած-
քային խնդիրներ ունեն հարևան հանրապետությունների հետ: Ազ-
գային պետությունների ձևավորման, ազգային գիտակցության
զարթոնքի, ԽՍՀՄ-ի շրջանակներում այլ տրամաբանության հենքի
վրա գծված վարչական սահմանների ու օբյեկտիվորեն գոյություն
ունեցող պատմական-ազգաբաշխական քարտեզի հակասական ու
իրարամերձ իրողությունները խթան հանդիսացան նոր բաժանա-
րար գծերի ի հայտ գալուն և պատմական արդարության վերա-
կանգնման համար ծավալվող դիմակայությանը:

Երբ ասում ենք, որ ազգային հարցի լուծման համար Վրաստանի
հնարավորությունները խիստ սահմանափակ են, նկատի չունենք
միայն վարչական-օրենսդրական բաղադրիչը, որը նույնպես թերի է և
անկատար: Բանն այն է, որ Վրաստանի սահմանային տարածքների
մեծ մասը բուն վրացական պատմական տարածքներ չեն. սրանք
Վրաստանի կազմի մեջ են մտցվել Ստալինի քանքերով (Աբխազիա,
Չարավային Օսիա, Աջարիա, Ջավախք, Յուսիսային Լոռի և այլն):

Այս տարածքներում ապրում են բնիկ ժողովուրդները, որոնք էլ փորձում են կամ անկախաճալ և վերականգնել իրենց պետականությունը (Աբխազիա, Աջարիա), կամ վերամիավորվել իրենց ազգակիցների հետ (Հարավային Օսիա), կամ Վրաստանի կազմում ձեռք բերել ինքնավարություն (Ջավախք): Այս համայնապատկերում Վրաստանի իշխանությունների կողմից ազգային խնդիրը ի սկզբանե դիտվեց որպես երկրի ամբողջականությանը սպառնացող հիմնահարց, և անկախության առաջին իսկ օրերից որդեգրվեց «Վրաստանը՝ վրացիներին» կարգախոսը, որը վրաց հասարակության մեջ խրախուսեց արդեն իսկ գոյություն ունեցող ազգայնամոլությունն ու այլամերժությունը՝ այն բարձրացնելով պետական քաղաքականության մակարդակի:

Այս հարցը մեծ չափով պայմանավորում է նաև հարևան պետությունների հետ փոխհարաբերությունների բնույթը: Մեզ տվյալ դեպքում հետաքրքրում է Ջավախքի և ջավախահայության հարցը, որը վերոնշյալի համատեքստում կարևոր խնդիր է ոչ միայն որպես այդպիսին, այլև լուրջ գործոն է հայ-վրացական փոխհարաբերություններում: Եթե այսօր այն դեռևս իրեն զգացնել չի տալիս իր բոլոր դրսևորումների ռազմավարական կարևորության ամբողջությամբ (ազգային, կրթամշակութային, սոցիալտնտեսական, կոմունիկացիոն և այլն), դա դեռ չի նշանակում, որ այն վաղը չի վերածվելու երկու երկրների փոխհարաբերությունները պայմանավորող հիմնական գործոնի՝ ուզեն դա Հայաստանի և Վրաստանի իշխանությունները, թե ոչ:

Նախ նշենք, որ թեև ջավախահայության (նաև՝ վիրահայության) նկատմամբ Վրաստանի իշխանությունների վարած խտրական քաղաքականությունը բխում է ընդհանրապես ազգային փոքրամասնությունների նկատմամբ որդեգրած քաղաքականության տրամաբանությունից, սակայն ունի որոշ առանձնահատկություններ: Բանն այն է, որ հայաբնակ և Հայաստանին սահմանակից Ջավախքը վրաց քաղաքական ղեկավարության (նաև՝ մտավորականության) կողմից միշտ դիտվել է որպես անջատողական ուժ, և ամեն ջանք գործադրվել է այդ «մեծ վտանգը» չեզոքացնելու համար: Եթե մայրաքաղաքում և այլ բնակավայրերում վրաց իշխանությունները բավարարվել են հայերի ուժացմամբ, ապա Ջավախքում առավել արմատական են տրամադրված. այստեղ հիմնականում գործադրվել է հայաթափման քաղաքականություն թե՛ 1918-20 թթ. (թուրք-վրացական դաշինքին զոհ զնաց 50.000 ջավախահայ), թե՛ խորհրդային շրջանում (գործադրվում էին բազմաբնույթ հալածանքների ու

ճնշումների քողարկված մեթոդներ), թե՛ 1991թ. անկախացումից ի վեր (ազգային խտրականության բացահայտ քաղաքականություն ու ճնշումներ հասարակական կյանքի բոլոր բնագավառներում):

Այս քաղաքականությունը հասարակական լուրջ աջակցություն է գտնում, քանզի ուղեկցվում է վրաց հասարակության համար խիստ զգայուն հարցերի շահարկմամբ.

ա. հայերը Վրաստանում անջատողական ուժ են. նրանք ոչ միան Աբխազիայում դա ապացուցեցին, այլև Ջավախքն էլ են ուզում անջատել Վրաստանից:

բ. Հայաստանն ու հայությունն ընդհանրապես և, մասնավորապես, ջավախահայությունը ռուսամետ ուժեր են, ուստի Վրաստանի թշնամիներն են:

գ. Ջավախահայերը եկվորներ են, որոնք ուզում են յուրացնել «բուն վրացական» Ջավախքը և վրացական մշակութային հարստությունները:

Հակահայ այս քաղաքականությունը խարսխվում է նաև վրաց-թուրք-ադրբեջանական ռազմավարական դաշինքի վրա, որը, պայմանավորված լինելով այս երկրների ռազմատնտեսական շահերով, ի վերջո ուղղված է Հայաստանի մեկուսացմանն ու, լավագույն դեպքում, տարածաշրջանում նրա դերակատարության չեզոքացմանը:

Քանի որ ներկայացվող գրքում զետեղված հոդվածները բավարար տեղեկություններ են տալիս Վրաստանի վարած ազգային քաղաքականության մասին և հիմնականում բացատրում դրա պատճառները, մենք չենք անդրադառնա այդ խնդրի մանրամասնություններին, այլ կփորձենք համառոտ ներկայացնել Ջավախքի նշանակությունը հայ-վրացական փոխհարաբերություններում և նրա կարևորությունը հայոց պետականության հեռանկարի համապատկերում:

Ջավախքում վրացական իշխանությունների վարած հայաթափման ակտիվ քաղաքականությունը լուրջ հաջողություններ է արձանագրում: Դրան նպաստում են նաև Արևմուտքի հասկանալի հանդուրժողականությունը և Հայաստանի իշխանությունների, մեղմ ասած, անհասկանալի ու անբացատրելի կրավորականությունը: Ըստ երևույթին այս կեցվածքից է սնվում այն թյուր տեսակետը, թե Ջավախքի հայությունը դարեր շարունակ անսասան է մնացել իր հայրենի հողի վրա, և այսօր էլ, չնայած բազում դժվարություններին, չի լքի իր բնօրրանը: Այսպես մտածողներին հարկ է հիշեցնել Դաշտային Արցախի և Նախիջևանի իսպառ հայաթափումը ոչ վաղ անցյալ

լում: Իսկ մեր օրերում մեկ այլ էթնոսի դուրսմղումով կամ միատար պետական կազմավորումների օրինակների պակաս չկա (Արցախ, Կոսովո, Մերձդնեստր, Հարավային Օսիա, Աբխազիա և այլն):

Թեև Ջավախքի հայաթափումով Վրաստանի իշխանությունները փորձում են վրացականացնել տարածաշրջանը (վրացիների, աջարների, սվանների մասնակի վերաբնակեցում այս շրջաններում), սակայն ակնհայտ է, որ այդ ծրագիրը չի իրականանա մի քանի պատճառով: Դրանցից ամենակարևորն ունի պատմական-հոգեբանական հիմք. 5 -րդ դարից սկսած՝ ընդմիջումներով մոտ երեք դար, Ջավախքը եղել է և 1920-ից ի վեր գտնվում է Վրաստանի կազմում, սակայն այն չի վրացականացել. պատճառները շատ են՝ բնակլիմայակն պայմաններ, էթնիկ-մշակութային առանձնահատկություններ, վրաց տարրի սակավություն, որը այսօր առավել սուր է դրսևորվում և այլն:

Այնինչ մասամբ Ջավախքում և հատկապես Մեսխունիքում առավել կենսունակ են եղել, այսպես կոչված, մեսխեթցի թուրքերը, որոնցից շատերը նախ՝ Հայոց եկեղեցուց հեռացած և հետագայում իսլամացած հայեր են: Այսօր էլ տարածաշրջանը մեսխեթցի թուրքերով բնակեցնելու հեռանկարը ավելի հավանական է, քան նրա վրացականացումը, մասնավորապես որ դրա թե քաղաքական, թե տնտեսական հիմքերն ու հնարավորությունները առկա են, ավելին՝ այդ գործընթացն արդեն սկսվել է: Եթե սրան ավելացնենք Թուրքիայի լուրջ հավակնությունները Աջարիայի և Մեսխեթ-Ջավախքի նկատմամբ և քաղաքական, ռազմական և տնտեսական ոլորտներում արդեն իսկ կատարված (Բաքու-Ջեյհան նավթամուղ և այլ կոմունիկացիոն հանգույցներ, լուրջ ներդրումներ, ռազմական համագործակցություն՝ անհամեմատելի առավելության դիրքերից և այլն) և կատարվող (NABUCCO ծրագիր, Կարս-Ախալքալաք երկաթուղի) քայլերը, պատկերն ավելի ամբողջական կդառնա:

Փաստորեն Վրաստանի իշխանությունների՝ Ջավախքի հայաթափման քաղաքականությունը ուղղակի թե անուղղակի կերպով վերածվում է Ջավախքի թրքացման քաղաքականության: Վրաստանի անհեռատես գործելակերպը ոչ միայն մոտեցնում է այս երկրի վերջնական մասնատումը հոգուտ Թուրքիայի՝ Աջարիայում և հատկապես Մեսխեթ-Ջավախքում, և հոգուտ Ադրբեջանի՝ Գարդաբանում, Մառնեուլում և հարակից շրջաններում, այլև մեծապես վնասում է Հայաստանի և հայության անվտանգությանը՝ լրջորեն հարվածելով նաև հայ-վրացական հարաբերություններին: Անհավանական է թվում, որ գոնե այսօր Վրաստանի իշխանությունները, քաղա-

քական վերնախավը գիտակցեն, որ հայ-վրացական բնականոն հարաբերությունների և երկու երկրների անվտանգ գոյության և զոյակցության համար հայաբնակ և զարգացած Ջավախքը թերևս միակ երաշխիքն է: Ջավախքի հայաթափումը երկու երկրների համար էլ հղի է աղետալի հետևանքներով: Վաղ թե ուշ Հայաստանի իշխանությունները ստիպված են լինելու հենց այս տեսակետից մոտենալ հայ-վրացական հարաբերություններին և վերանայել դրանց ողջ հայեցակարգը, եթե, իհարկե, այն ունեցել են:

Հայ իրականության մեջ Ջավախքը միշտ դիտվել է հայրենի հող, Հայաստանից բռնի օտարված հայրենիքի մասնիկ: Եթե Հայաստանի Հանրապետության և նրա հարևան պետությունների քարտեզին նայենք մեկ այլ հայացքով, կնկատենք, որ ժամանակն է ձերբազատվելու այս պատմական ճշմարիտ, բայց քաղաքականորեն միակողմանի ընկալումից: Հայաստանը արտաքին աշխարհի հետ կապող միակ ոչ թրքաբնակ տարածքը Ջավախքն է, որի թրքացումից հետո Հայաստանը կհայտնվի ամբողջական թրքական շրջափակման մեջ: Կարծում են հարկ չկա մանրամասնելու, թե դա ինչ է նշանակում հայոց պետականության հեռանկարի տեսակետից: Ուստի հայաբնակ Ջավախքը պետք է դիտվի ոչ միայն որպես հայրենիք, այլև, ու հատկապես, որպես հայոց պետականության գոյության ու անվտանգության գլխավոր երաշխիք ու նախապայման:

Հայկազուն Ավդոյան

Ինչո՞ւ է Ախալցխան Ջավախքի վարչաքաղաքական կենտրոն դարձնելն այդքան հրատապ: Ջավախքը խարխափումների լաբիրինթոսում¹

Վահե Սարգսյան



Վահե Սարգսյան

1993-95 թթ. տեղի ունեցավ Վրաստանի տարածքային բաժանման գործընթացը: Վրաստանն այս ընթացքում բաժանվեց 11 երկրամասերի (նահանգների)՝ Աբխազիայի, Աջարիայի, Գուրիայի, Իմերեթիի, Կախեթիի, Մցխետա-Մթիանեթիի, Ռաջա-Լեչխումիի և Քվեմո (Ստորին) Սվանեթիի, Սամեգրելո - Չեմո (Վերին) Սվանեթիի, Սամցխե-Ջավախեթիի, Քվեմո (Ստորին) Քարթլիի, Շի-

դա (Ներքին) Քարթլիի: Եվ քանի որ 1995թ. օգոստոսի 24-ին ընդունված Վրաստանի սահմանադրության մեջ այդպես էլ չլրացվեց երկրի կառուցվածքի (հետևաբար նաև՝ վարչական բաժանումների մասին) գլուխը, նահանգային այս բաժանումները այդպես էլ չստացան իրավաբանական ձևակերպումներ: Պատճառը հասկանալի էր՝ Վրաստանը դեռևս չէր կարգավորել իր հարաբերությունները փաստացի անջատված Աբխազիայի, ինչպես նաև Աջարիայի ու Չարավային Օսեթիայի հետ:

Եթե ներկայումս Վրաստանը, թեկուզ ձևականորեն, Աջարիային շնորհել է որոշ ինքնավարություն, իսկ Աբխազիային գոնե առատորեն խոստանում է իր կողմից արված այդ «զիջումը», ապա այլ է Չարավային Օսեթիայի պարագան. վերջինիս ճակատագիրը Վրաստանի կողմից առայժմ թղթի վրա որոշվել է հետևյալ կերպ. դեռ 1993-1995թթ. տեղի ունեցած երկրի վարչատարածքային բաժանումների հողի վրա մասնատվեց նախկին Չարավային Ինքնավար Մարզը, որի մեծ մասը վրացական մի քանի հարավային շրջանների՝ Խաշուրի, Քարելի, Գորիի և Կասպիի հետ մտցվեց Շիդա Քարթլի

1 Չողվածը հայերեն և ռուսերեն տարբերակներով հրատարակվել է նաև լրատվական-վերլուծական մի շարք կայքերում:

նորաստեղծ նահանգի մեջ, իսկ Ինքնավար Մարզի արևելյան շրջանները մտցվեցին մեկ այլ՝ Մցխետա-Մթիանեթի նահանգի մեջ: Չարավային Օսեթիայի՝ Վրաստանին ենթարկվելու դեպքում վերջինիս սպասում է նման ճակատագիր, երբ թղթի վրայի այս որոշումը կդառնա իրականություն:

Արհեստական (ոչ էթնիկ սկզբունքով կատարված) նահանգային այս բաժանումը մեծապես փոխեց իրավիճակը նաև Սամցխե - Ջավախք – Ծալկա (Թռեղք) (այսուհետ՝ Ջավախք) պատմական հայկական գավառներում: Վրաստանի ղեկավար Է. Շևարճնաձեի՝ 1994թ. հուլիսի 31-ի թիվ 237 հրամանագրով մի նոր տիպի «երկրամաս» է ստեղծվում՝ «հաշվի առնելով, որ երկրում վերջին ժամանակներում ստեղծված ծանր քաղաքական, տնտեսական, քրեածին իրադրության պատճառով Սամցխե-Ջավախեթիում՝ Ադիգեմի, Ասպինձայի, Ախալքալաքի, Ախալցխիսեի, Բորժոմի և Նինոծմինդայի շրջաններում, տեղ են գտել լուրջ դժվարություններ տնտեսության ոլորտում, ձգձգվում են նոր տնտեսավարման, սեփականաշնորհման անցնելու գործընթացները, չեն զգվում և իրացվում բնակչության արտադրած մթերքները, առկա են դժվարություններ էներգակիրների բաշխման գործում, չեն կատարվում սոցիալտնտեսական և այլ հարցերի վերաբերյալ իշխանության և կառավարման բարձրագույն մարմինների որոշումները, թուլացել է դրանց կատարման վերահսկողությունը, ինչը բացասաբար է անդրադառնում բնակչության վիճակի, քաղաքացիների իրավունքների և ազատությունների իրական երաշխիքների վրա»²:

Փաստորեն 1994 թվականից ի վեր Ջավախքի բնակչությունը գտնվում է մի նոր վարչատարածքային միավորի մեջ, որը, չնայած իր ոչ իրավական և, այսպես կոչված, «ժամանակավոր» կարգավիճակին, Ջավախքի վրա թողել է մեծ ազդեցություն և շարունակում ներգործել վերջինիս վրա նաև ներկայումս: Նախ և առաջ՝ հենց նահանգի ստեղծման պահից վերջինիս մեջ չներառվեց հայկական Ծալկայի շրջանը, որը նույն ժամանակ միացվեց Քվեմո Քարթլի նորաստեղծ նահանգին: Այս քայլը նպատակ ուներ մասնատելու Ջավախքի հայությանը, թուլացնելու վերջինիս՝ բացառելով այնտեղ ամուր դիմակայության գոտու ստեղծումը, միաժամանակ դրանով էականորեն փոխվում էր Ջավախքի բնակչության ժողովրդագրական պատկերը:

2 Սարգսյան Վ., Վրաստանի վարչատարածքային բաժանման պատմությունից, «Ջավախքը 1988-2008 թթ.» (հոդվածների ժողովածու), Երևան, 2009, էջ՝ 153-159:

Ինչևէ: Նախկին խորհրդային վեց շրջաններից (Ադիգեմի, Ախալցխայի, Բորժոմի, Ասպինձայի, Ախալքալաքի և Նինոծմինդայի) բաղկացած Սամցխե-Ջավախք նահանգը, ստեղծվելով 1994թ. հուլիսի 31-ին, գոյություն ունի մինչ օրս: Նահանգի ստեղծումով մեծապես փոփոխության ենթարկվեցին նաև Ջավախքի վարչական և այլ հասարակական-պետական հիմնարկներն ու տարբեր հաստատությունները՝ ինչպես կառուցվածքային, այնպես էլ՝ աշխարհագրական վայրի գտնվելու իմաստով, որոնք իրենց այս կամ այն ազդեցություն են թողել և թողնում Ջավախքի վրա: Նկատի ունենալով, որ այդ վարչական հաստատությունները մեծ դերակատարություն ունեն Ջավախքը որպես մեկ ինքնուրույն վարչատարածքային կամ ինքնավար միավոր ձևավորվելու գործընթացում, կարևոր է մանրամասն քննության առնել վերջիններիս հետ կապված առկա խնդիրները: Հավելենք, որ դեռ 1990-ականներից ի վեր Ջավախքի հասարակական-քաղաքական կազմակերպություններն ու առանձին անհատներ, այս կամ այն կերպ առնչվելով նշված խնդիրների հետ, հանդես են եկել տարաբնույթ դիրքորոշումներով և համապատասխան արձագանքներով:



*Քաղաք Ախալցխա:
Սամցխե-Ջավախքի նահանգապետարանը*

հարցերի նկատմամբ: Այս էքսկուրսը մեզ հնարավորություն կտա նկատելու նաև եղած բացթողումներն ու ոչ ճշգրիտ հաշվարկված քայլերը, որոնք ի սկզբանե Ջավախքին դրեցին քառսային ու հակասական վիճակի մեջ, և ստեղծված խառնաշփոթ կացությունից դուրս գալու ելքերը դեռ այնքան էլ տեսանելի չեն:

Նախքան նահանգային կառուցվածքի և վարչական ստորաբաժանումների այս կամ այն առանձնահատկություններին անդրադառնալը՝ հարկ ենք համարում մի փոքր պատմական էքսկուրս կատարել և պարզել, թե Ջավախքի քաղաքականապես ակտիվ զանգվածն ի սկզբանե ինչպիսի դիրքորոշումներ է ունեցել այս՝ Ջավախքի համար ճակատագրական նշանակություն ունեցող

Ջավախքում տվյալ ժամանակահատվածում գոյություն ունեցող և գործընթացների մեջ դերակատար հասարակական ուժը, որը հավակնում էր ստանձնելու նաև քաղաքական գործառույթներ, Ջավախք ժողովրդական շարժումն էր, որը տարբեր շրջաններում համախմբում էր տարբեր միությունների ու հասարակական կազմակերպությունների՝ վերածվելով կառավարող ուժի:

Սակայն 1990-ական թվականների կեսերին արդեն ՋԺՇ-ն ոչ թե գաղափարական համախմբվածությամբ, այլ փոխադարձ անձնական շահերով պայմանավորված մի կառույց էր, որի երրորդ (1993 թ. ապրիլի 10-ին) և չորրորդ (1995թ.)³ կոնֆերանսներում խիստ զգացվեց նրա թուլությունը և առաջնորդների պառակտվածությունը: Շատ գործիչներ հեռացան ՋԺՇ-ից՝ չտեսնելով այնտեղ իրենց հետագա քաղաքական կարիերայի համար հեռանկար: Նրանց մեջ քիչ չէին նաև մտավոր լուրջ կարողություններ ունեցող գործիչներ, որոնք այնքան անհրաժեշտ էին Ջավախքի հետագա ճակատագրի որոշման գործում: Ավելին՝ ՋԺՇ-ն, անընդհատ առաջադրելով սոցիալ-տնտեսական, Վրաստանի կողմից վարվող հակահայ քաղաքականության, ծանր էներգետիկ ճգնաժամին վերաբերող բազմապիսի հարցեր, դրանց հաճախ տալիս էր զգացմունքային բնույթ, այլ ոչ թե մշակված ու կոնկրետ պահանջների տեսք: ՋԺՇ-ի առաջնորդներն իրենց ծրագրերում և առաջ քաշվող ինքնավարության պահանջներում⁴ կոնկրետ պատկերացում անգամ չուներին Ջավախքի տարածքային ընդգրկվածության մասին: Դա պարզ երևում է նրանց ծրագրերի մեջ, որոնցում Ջավախքը մերթ մույնացվում է Ախալքալաքի և Բոգդանովկայի, որոշ դեպքերում՝ նաև Ասպինձայի շրջանների հետ, մերթ «ավելանում են» Ախալցխան, Ադիգեմը, հաճախ՝ նաև Ծալկան⁵:

ՋԺՇ-ի Գաղափարաքաղաքական և արտաքին հարաբերությունների հանձնաժողովի ներկայացրած «Ջավախքի ինքնավարության ստեղծման հիմնական խնդիրներն ու նպատակները» ծրագրային նախագծում⁶, որի մեջ բացակայում են «պահանջվող» ինքնավա-

3 «Ջավախք», թիվ 1 (38), փետրվար, 1997:

4 «Ազգ», 02.08.1995:

5 Տե՛ս Ջավախք ժողովրդական շարժում կազմակերպության խորհրդի՝ Գաղափարական-քաղաքական արտաքին հարաբերությունների հանձնախմբի ծրագրային դրույթներ՝ հաստատված ՋԺՇ-ի նախագահության միստի կողմից, 13-14 հուլիսի, 1994թ., ք. Ախալքալաք:

6 Նույն տեղում:

րության վարչատարածքային սահմանները, հայտնի չէր, թե ինչ կարգավիճակ էր ունենալու այդ ինքնավարությունը, ինչ հիմքերի վրա էր պահանջվում այն և այլն: Հետևաբար շատ որոշումներ ու ծրագրեր դառնում էին սոսկ թղթի վրա մնացող բարի ցանկություններ: ՋԺՀ-ն նաև կոչ էր անում ժողովրդին «անտարբեր չմնալ Հայոց Համազգային Շարժման նկատմամբ»⁷, որն այնքան էլ իրատեսական չէր, քանի որ ՀՀՀ-ն արդեն վաղուց դադարել էր «համազգային» լինելուց՝ դառնալով մի քանի անձանց ձեռքում գտնվող կուսակցություն: Այսպիսի իրավիճակում, երբ Վրաստանն ընդունում էր Ջավախքի հայության շահերին հարվածող նորանոր օրենքներ, տեղում չկար դիմակայող ուժ: Այդ դերը չէին կարող ստանձնել նաև տարածաշրջանում առկա փոքր ու մեծ հասարակական կազմակերպությունները՝ Դեմոկրատների միությունը, Սուրբ Խաչը, Կանաչների միությունը, ինչպես նաև Օդա, Ջայն Ջավախքի, Արշալույս, Ժողովրդավարական միություն, Վրաստանի քաղաքացիների համերաշխության միություն կազմակերպությունները, որոնք գործում էին Ախալքալաքում և Բոզդանովկայում (այժմ՝ Նինոծմինդա)⁸:

Նման պայմաններում ջավախքցիների ցանկացած նախաձեռնություն դատապարտվում էր խիստ մշուշոտ ապագայի: Դա դրսևորվեց նաև Ջավախքում 1995թ. հուլիս ամսին կազմակերպված ստորագրահավաքի ժամանակ, երբ դեռևս չէր ընդունվել երկրի հիմնական օրենքը՝ Սահմանադրությունը: Ստորագրահավաքն իրականում Ջավախքին ինքնավարություն տալու՝ Վրաստանին ներկայացվող պահանջի հիմնավորում չէր: Այն կրում էր ավելի շուտ սոցիալ-

7 ՋԺՀ-ի նախագահության կոչի բովանդակությունից, 20.02.1994թ., ք. Ախալքալաք:

8 «Վրաստան», 19.08.1995: Ավելացնենք նաև, որ 1995թ. հուլիսին Ջավախք ժողովրդական շարժումը դիմեց վերոնշյալ կազմակերպություններին՝ վերջիններիս կոչ անելով համախմբվել և ստեղծել մեկ ընդհանուր կենտրոնացված ղեկավար օրգան (կորդինացիոն խորհուրդ): Կորդինացիոն խորհուրդը կյանքի կոչվեց նույն՝ 1995թ. հուլիս ամսին: Ղեկավար այս մարմինը միավորում էր քաղաքական աշխատանքի բավարար փորձ ունեցող, շրջանում լայն հեղինակություն վայելող 21 ակտիվիստների: Կորդինացիոն խորհրդի նախագահ ընտրվեց Ի. Աբրահամյանը, տեղակալներ՝ Յու. Թառևամազյանը, Ս. Պետրոսյանը, Ն. Մարաբյանը, քարտուղար՝ Ս. Խաչատրյանը: Տե՛ս «Ջավախք», հուլիս 1995, N 6 (12), նույն տեղում, հուլիս, 1995, N 7 (13): Այդուհետ շատ դիմումներ, որոշումներ և այլ փաստաթղթեր ընդունվում էին հենց այս խորհրդի կողմից:

ման բնույթ, որով փորձ էր արվում գիտենալ ժողովրդի կարծիքը՝ ապագա ֆեդերատիվ Վրաստանի կազմում Ջավախքը որպես քաղաքականապես ինքնակառավարվող վարչական միավոր տեսնելու խնդրում (սահմանադրական իրավունքով)⁹: Սակայն հավաքված շուրջ 13.000 ստորագրությունները Ջավախքի կարգավիճակի հարցում ոչինչ չափսի փոխեին Վրաստանի սահմանադրության մեջ¹⁰: Առաջադրելով կենսական հարցեր՝ արհեստական կերպով տարածաշրջանի ժողովրդագրական կազմի փոփոխություն, տնտեսական զարգացման խոչընդոտ, Ջավախքի վարչական ամբողջ կառույցի տեղափոխում Ախալցխա, վարչական շատ հիմնարկների լուծարում, արհեստականորեն բնակչության և վարչական օղակների միջև կապի խիստ վատացում¹¹, որոնք ստեղծվել էին Է. Շևարճնաձեի կողմից թիվ 237 հրամանագիրը ստորագրելուց հետո, և կոպիտ



Տիսարան Ախալցխայից

ձևով փնտվելով այն ու կոչ անելով չենթարկվել նահանգապետին¹²՝ ՋԺՀ-ի ներկայացուցիչները և Ախալքալաքի ու Բոզդանովկայի շրջանների ակտիվի հավաքի մասնակիցները չունեին ինքնավարության վերաբերյալ կամ Է. Շևարճնաձեի կազ-

մավորած նահանգին հակադրող այլ մոդել: Նշենք, որ 1994թ. օգոստոսի 10-ին Բոզդանովկայում հրավիրվել էր «Օդա» բարեգործական ընկերության ընդլայնված նիստ, որտեղ, քննարկելով թիվ 237 հրամանագիրը, խստորեն դատապարտվեց Է. Շևարճնաձեի այս ո-

9 См.- Листок опроса, общественного мнения о статусе Джавахетского региона для внесения в проектной Конституции Республики Грузия. Зմնտ.՝ «Ջավախք», հուլիս, 1995, N 7 (13):

10 «Ազգ», 02.09.1995:

11 Ախալցխան Ախալքալաքից հեռու է մոտ 70 կմ, ճանապարհե խիստ դժվարանցանելի է, քայքայված, չհաշված Ախալքալաքի հեռու հեռավոր գյուղերը և այլն, (տե՛ս «Ջավախք», պաշտոնաթերթ Ջավախք ժողովրդական շարժման, N1(7), փետրվար, 1995):

12 Նույն տեղում:

րոշումը և ընդունվեց նրան ուղղված դիմում¹³: Հստակեցված չէր նաև Ախալցխայի կարգավիճակի հարցը: Հայկական Մեսխունիք (Մեսիք, Սամցխե) գավառի և քաղաքական Ջավախքի տարածքն ընդգրկող այլ շրջանները՝ Ադիգենը, Ախալցխան, մասամբ նաև՝ Ասպինձան, հաճախ մտցվում էին Ջավախք հասկացության մեջ, և պահանջվում էր նրանց տալ ինքնավարություն: Իսկ այսպիսի տարածքում ինքնավարությունը համապատասխանում էր Է. Շևարձնաձեի ստեղծած նահանգին (բացառությամբ Բորժոմի շրջանի, այն էլ՝ որոշ վերապահումներով): Ստեղծվում էր այնպիսի տպավորություն, որ չընդունելով վրացականը՝ ջավախքցիները պահանջում էին իրենց համար ընդունելի չափորոշիչներով ինքնավարության տարբերակ, որն իրականում նույնն էր, ինչ վրացականը. երկրամասում մշակված հայեցակարգի բացակայության պայմաններում իշխանությունների կողմից Ջավախքի առաջնորդների պահանջները մերժելը դառնում էր դյուրին խնդիր:

1990-ական թթ. վերջերին ևս Ջավախքի քաղաքական կյանքում աննախադեպ կերպով (թերևս վերջին անգամ) ակտիվացած ՋԺԸ-ի կողմից ներկայացվող պահանջները գրեթե նույնն էին. Ջավախքը (տվյալ դեպքում Ջավախք աշխարհագրական տերմինի տակ նկա-

13 «Ազատամարտ», թիվ 43, սեպտեմբեր, 1994: Հմմտ.՝ «Ջավախք», սեպտեմբեր, 1994, N 2(4): Լրացուցիչ նշենք, որ Ջավախք ժողովրդական շարժման ներկայացուցիչների, Կոորդինացիոն խորհրդի, շրջանային վարչական այլ աշխատակիցների կողմից Վրաստանի պետության դեկավար Է. Շևարձնաձեին և երկրի խորհրդարանին են ներկայացվել բազմապիսի և բազմաբնույթ այսպիսի նամակներ, խնդրագրեր ու պահանջագրեր, որտեղ դարձյալ ու դարձյալ «ոչ» էր ասվում պետության դեկավարի՝ նահանգային կառուցվածքի վերաբերյալ այսպիսի նախաձեռնությանը: Ջավախքում բազմաթիվ ակտիվիստների հավաքներում նույնպես մշտապես օրակարգի հրատապ հարց է եղել պետության դեկավարի թիվ 237 հրամանագիրը: Միաժամանակ Ջավախքի քաղաքական ակտիվիստների կողմից ժամանակ առ ժամանակ հրապարակվում էին հողվածներ, որտեղ մանրամասն ներկայացվում էր Ջավախքին ինքնավարություն տալու հարցի կարևորությունը: Այս ամենի մասին կարելի է տեսնել տեղական մամուլում: Տե՞ս «Ջավախք», սեպտեմբեր, 1994, N 2 (4), նույն տեղում, հոկտեմբեր, 1994, N 3 (5), նույն տեղում, նոյեմբեր, 1994, N 4 (6), նույն տեղում, հուլիս, 1995, N 6 (12), նույն տեղում, հուլիս, 1995, N 7 (13), նույն տեղում, օգոստոս, 1995, N 8 (14), նույն տեղում, սեպտեմբեր, 1995, N 9 (15), տես նաև՝ «Ջավախք», Ախալքալաքի շրջանի «Արշալույս» կրթամշակութային և բարեգործական կազմակերպության պաշտոնաթերթ, օգոստոս, 1994, N 1:

տի է առնվել Ասպինձայի, Ախալքալաքի և Նինոծմինդայի հատվածները) դուրս բերել Ախալցխայի «լծի» տակից, ինչպես նաև՝ Վրաստանի սահմանադրության՝ Վրաստանի վարչատարածքային կառուցվածքի մասին գլխի քննարկման և որոշման շրջանակներում Ջավախքին տալ քաղաքական ինքնավարություն, Ջավախքի սոցիալտնտեսական, էներգետիկ, կրթական և այլ ոլորտների բարելավում և այլն:

Այս նկատառումներից ելնելով՝ 1997թ. Ջավախքում լրջորեն սկիզբ առավ «հանրաքվե» կոչվող մի գործընթաց, որը ճակատագրական նշանակություն էր ունենալու տարածաշրջանի հետագա զարգացման համար: ՋԺԸ-ն սկսեց բնակչության շրջանում ստորագրություններ հավաքելու գործընթաց: Այդ առթիվ նաև նամակ ուղարկվեց Է. Շևարձնաձեի և Ջ. Ժվանիայի անուններով¹⁴, որտեղ մանրակրկիտ ձևով հիմնավորվում էին Ջավախքը Ախալցխայի վարչական տնօրինության տակ դնելու բոլոր բացասական հետևանքները, նշվում էր նաև Ախալքալաքը, Նինոծմինդան և Ասպինձան Ախալցխայի ենթակայությունից դուրս բերելու և մեկ տնտեսական գոտու մեջ ներառելու նպատակահարմարությունը: Պահանջվում էր նաև այդ երեք շրջաններում մտցնել վարչական կառավարման հատուկ ձև. «Այդ նպատակով, վերոնշյալի հաստատման համար, համաձայն Վրաստանի Սահմանադրության 67-րդ հոդվածի 1-ին կետի (...ոչ քիչ, քան 30 հազար ընտրողներն իրավունք ունեն օրենսդրական նախաձեռնության)՝ Ջավախքի հասարակական-քաղաքական կազմակերպությունների կոորդինացիոն խորհրդի անդամները, այդ շրջանների բնակչության նախաձեռնությամբ, հավաքում են ստորագրություններ»¹⁵ (նշենք, որ Ախալցխայի վարչական ենթակայությունից Ջավախքը դուրս բերելու վերաբերյալ շուրջ 15.000 ստորագրություն էր հավաքվել դեռ 1995թ. հունիսին, որոնք ներկայացվել էին Է.Շևարձնաձեին՝ նրա և Լ.Տեր-Պետրոսյանի 1996թ. Ջավախքում հանդիպման ժամանակ, սակայն վերջինս «այդ ստորագրությունների վրա անգամ չնայեց»)»¹⁶: Իսկ 1997թ. հուլիս-օգոստոսին հավաքվող ստորագրությունների թերթիկն ուներ հետևյալ բովան-

14 Обращение — Координационного совета общественно-политических организации Джавахка: президенту Грузии г-ну Э.А.Шеварднадзе, председателю парламента г-ну З.Жвания, г. Ахалкалаки.

15 Նույն տեղում:

16 «Ջավախք», թիվ 1 (18), փետրվար, 1997, հմմտ.՝ նույն տեղում, թիվ 1, օգոստոս, 1998:

դակությունը (ռուսերեն). «Հարգելի՛ ջավախքցիներ: Ձեր նախածեռնությամբ Ջավախքի հասարակական-քաղաքական կազմակերպությունների կոորդինացիոն խորհուրդը, համաձայն Վրաստանի սահմանադրության 67-րդ հոդվածի առաջին կետի (...30.000 ոչ քիչ ընտրողներն իրավունք ունեն հանդես գալու օրենսդրական նախածեռնությամբ), նախածեռնում է ստորագրահավաք՝ երկրի պառլամենտում հետևյալ հարցերը քննարկելու համար. 1.Ոչ սահմանադրական Սանցիտե-Ջավախք երկրամասի կազմավորման գործընթացի դադարեցում. 2.Երկրի պետական- տարածքային կառուցվածքի մասին սահմանադրության գլխի ընդունման ժամանակ Ջավախքին տալ համապատասխան վարչատարածքային միավորի կարգավիճակ՝ Վրաստանի սահմանադրության շրջանակներում»: Հավաքված բազմահազար ստորագրություններին հետևելու էր հանրաքվեն: Ջավախք ժողովրդական շարժման շուրջ համախմբված Ջավախքի հասարակական-քաղաքական կազմակերպությունների կոորդինացիոն խորհուրդը մեծ ակտիվությամբ էր նախապատրաստվում 1998թ. փետրվարին անցկացվելիք համընդհանուր հանրաքվեին: Այդ առթիվ դիմում հղվեց նաև Հայաստանի և Վրաստանի խորհրդարանական պատվիրակություններին¹⁷, որում մանրամասն նշվում էին Ջավախքի առջև ծառայած սոցիալտնտեսական, կուլտուրլուսավորչական և քաղաքական բնույթի խնդիրները, որոնք գոյություն են ունեցել տասնամյակներ շարունակ: Ստեղծված իրավիճակից դուրս գալու միակ միջոցը Ջավախքի բնակչությունը, ըստ դիմումի, տեսնում էր հետևյալ կոնկրետ հարցով հանրաքվե անցկացնելու մեջ. «Համաձայն էք, որ Ջավախքի տարածաշրջանը Վրաստանի կազմում ունենա վարչատարածքային միավոր»¹⁸:

ՁԺՇ-ն 1997թ. փետրվարին «Ջավախք» թերթի թիվ 1 (18)-ում տպագրեց նաև մի մեծ կոչ՝ ուղղված ջավախքցիներին¹⁹: Կոչում նույնպես բարձրացվում էին Ջավախքում առկա բոլոր հիմնախնդիրները, մանրամասն քննադատության էր ենթարկվում Վրաստանի կողմից վարվող քաղաքականությունը, քննադատվում էին նաև շրջանի ղեկավարները. «Պատվարժան ջավախքցիներ, ստացվում է, որ մարդիկ, ովքեր պատասխանատու պաշտոններ են զբաղեց-

17 Кординационный Совет общественно-политических организации Джавахка, Обращение — парламентским делегациям Армении и Грузии, 7 апреля, 1997г., г. Ахалкалаки.

18 Նույն տեղում:

19 «Ջավախք», թիվ 1 (18), փետրվար, 1997:

նում, չեն ցանկանում Ջավախքը Ախալցխայի ենթակայությունից դուրս բերել: Ախր նրանք մերն են, մեր Ջավախքից են, բայց արի ու տես, որ հանում պաշտոնի մեր տարածքն ու նրա ժողովրդին առ ու ծախի են ենթարկում, ոտնահարում մեր արժանապատվությունը, նպաստում մեր ազգային դիմագծի կորստյանը: Նման վարվելակերպով ի՞նչ պատասխան պիտի տան նրանք մեր ժողովրդին, գալիք սերունդներին»²⁰: Իրոք, Ախալքալաքի շրջանի ղեկավարությունը բացահայտորեն դեմ էր և ամեն կերպ խոչընդոտում էր հանրաքվեի անցկացմանը: Դա է վկայում այն փաստը, որ 1997թ. Փետրվարի 5-ին գյուղական վարչությունների, կոլտնտեսությունների նախագահների և սովխոզների տնօրենների ընդլայնված նիստի ժամանակ, որտեղ լայնորեն քննարկվել էր Կոորդինացիոն խորհրդի առաջ քաշած հանրաքվեի վերաբերյալ հարցը, Ախալքալաքի շրջանային վարչության նախագահ (պրեֆեկտ) Ս.Դարբինյանը կտրականապես արգելել էր (ընդհուպ մինչև պաշտոնից ազատելու սպառնալիքով) մասնակցել այդ ընտրություններին և թույլ չէր տվել վավերացնելու նիստի արձանագրությունը: Կոորդինացիոն խորհրդի անդամների կողմից այս առթիվ բաց նամակ է հրապարակվում՝ ուղղված Ս. Դարբինյանին և նշվում, որ նման ձևով շարունակելու դեպքում վերջինիս նկատմամբ կկիրառվեն համապատասխան միջոցներ²¹:

Այսուհանդերձ, չնայած բազմաթիվ խոչընդոտներին, Կոորդինացիոն խորհուրդը (որի մեջ, բացի Ջավախք ժողովրդական շարժումից, մտնում էին նաև ինչպես Ախալքալաքում, այնպես էլ Բոգդանովկայում գործող Արշալույս, Ջարթոնք, Վետերանների միություն, ժողովրդավարների միություն տեղական հասարակական- քաղաքական կազմավորումները)²², Ջավախքի հարցի լուծումը տեսնում էր հանրաքվե անցկացնելու մեջ. «Մեր կատարած բոլոր քայլերը ցանկալի արդյունքի դեմ չեն հասցրել, դրա համար էլ կոորդինացիոն խորհուրդը անում է հաջորդ վճռական քայլը. դա Ջավախքում համաժողովրդական հանրաքվե-ռեֆերենդում անցկացնելու քայլն է»²³: Վերջինս կոչ էր անում Ջավախքի ողջ բնակչությանը, երկու

20 Նույն տեղում:

21 Координационный Совет общественно-политических организаций и движения Джавахети, Открытое письмо — председателю Ахалкалакского районного правления господину Дарбиняну С.Т., 12 марта, 1997г., г. Ахалкалаки.

22 «Հայաստանի Հանրապետություն», 04.02.1999:

23 «Ջավախք», թիվ 1 (18), փետրվար, 1997:

շրջանների վարչությունների նախագահներին, ձեռնարկությունների տնօրեններին, գյուղական վարչություններին, բուժաշխատողներին, ուսուցիչներին «հրաժարվել բոլոր տեսակի պասիվությունից ու անտարբերությունից, տեղերում ակտիվորեն մասնակցել հանրաքվեի անցկացման նախապատրաստական աշխատանքներին ու հանրաքվեի օրը «Վրաստանի կազմում Ջավախքի առանձին քաղաքական ինքնակառավարման միավոր» ստեղծելուն ասել՝ «ԱՅՈՒ»²⁴: Ջավախքի հասարակական-քաղաքական կազմակերպությունների կողողինացնող խորհրդի կողմից 1997թ. ապրիլին մշակվել էր նաև Ջավախքի հիմնահարցի լուծման մարտավարության մի նախագիծ²⁵, որտեղ Ջավախքի հիմնահարցի լուծման պայքարի քաղաքա-



Վրաստանի ֆինանսների նախարարության եկամտի ծառայության Ախալցխայի տարածաշրջանային կենտրոնի (մաքսային հսկողություն) Վճարման ծառայության բաժանմունքի Ախալքալաքի ծառայության ստորաբաժանման (կենտրոն) նորակառույց շենքն Ախալքալաքում

կիրթ, քաղաքական հանգրվանային ձևերի մի շարք կետերից ուշագրավ էին հետևյալները. «...գ) Վրաստանի կազմում Ջավախքի վարչատարածքային ազգային միավորի ստեղծում, դ) Վրաստանի կազմում Ջավախքի ինքնավարության ձեռքբերում՝ որպես դաշնային միավոր (եթե Վրաստանը գնալու է դաշնային պետություն դառնալու ճանապար-

հով), ե) Ջավախքի հիմնահարցի միջազգայնացում՝ որպես օժանդակ միջոց»²⁶: Իսկ այս ամենի, ինչպես նաև մի շարք այլ հիմնախնդիրների լուծմանն ուղղվելիք միջոցառումների համապարփակ ազ-

գային ծրագրային դրույթներից հետաքրքիր էր հետևյալ կետը. «...է) երկրամասում Վրաստանի ազդեցության լծակների թուլացում և Ախալցխայի, Ծալկայի, Բորժոմի և Ասպինձայի շրջանների հայության ուժեղացում, որոնք Ջավախքի էթնիկական պատնեշն են հանդիսանում»²⁷ (թե ինչու անհրաժեշտ համարեցինք մեջբերել այս կետը, պարզ կդառնա քիչ հետո):

Այնուամենայնիվ, այսքանից հետո Ջավախքում հանրաքվե չանցկացվեց... Ի՞նչն էր պատճառը: Նախ՝ Ջավախք ժողովրդական շարժման նախագահ Ս. Յակոբյանը այդ առթիվ տալիս է հետևյալ պատասխանը. «Պատրաստ էին քվեաթերթիկները, կազմել էինք կողողինացիոն խորհուրդ (խորհրդի մեջ էին մտնում այդ շրջանում Ջավախքի քաղաքական ակտիվիստներից Դ.Վեքիլյանը, Դ.Ռստակյանը, Ս.Պետրոսյանը, Ս.Յակոբյանը, Տ.Կարախանյանը, Ն.Կարապետյանը, Մ.Աբրահամյանը, Խ.Այվազյանը, Ռ.Սահակյանը, Պ.Ստամբուլցյանը, Ժ.Ալվարյանը՝Վ.Ա.)²⁸: Դիմեցինք Վրաստանի կառավարությանը՝ հանրաքվե անցկացնելու թույլատվության համար: Պատասխան չեղավ: ...Հանրաքվե չանցկացվեց, բայց ընդունվեց և տեղական «Ջավախք» թերթում հրատարակվեց «Ջավախքի ինքնավար հանրապետության» Սահմանադրության նախագիծը: Դա սոսկ առանձին մարդկանց մտահղացումն էր, կարծիքը»²⁹: Մեր կողմից ավելացնենք, որ այդ Սահմանադրությունն էլ «Ջավախք» թերթում տպագրվել էր բավականին ուշ՝ 1998թ. օգոստոսյան համարներից մեկում³⁰:

Հետաքրքրական է, եթե Ջավախքի բնակչությունը մինչ այդ, ինչպես տեսանք, իր ստորագրություններով կողմ էր արտահայտվել հանրաքվեին, իսկ Վրաստանի Սահմանադրության 67-րդ հոդվածի առաջին կետով նրան իրավունք էր վերապահվում կայացնելու օրենսդրական նախաձեռնություններ՝ 30.000-ից ոչ քիչ բնակչություն լինելու դեպքում, իսկ Ջավախքի (Ախալքալաքի և Նինոծմինդայի շրջանների) բնակչությունը այդ թվականին, ըստ պաշտոնական տվյալների, շուրջ 97.511 էր³¹, ապա ո՞րն էր թբիլիսիին դիմելու պատճառը: Կամ մի՞թե պարզ չէր, որ թբիլիսին, այսպես թե այնպես, թույլ չի տալու այդ հանրաքվեի անցկացումը. դա առնվազն պարզ

24 Նույն տեղում:

25 Ջավախքի հասարակական-քաղաքական կազմակերպությունների կողողինացնող խորհուրդ, Ջավախքի հիմնահարցի լուծման մարտավարություն (նախագիծ), 25.04.1997թ., ք. Ախալքալաք:

26 Նույն տեղում:

27 Նույն տեղում:

28 «Ջավախք», թիվ 1 (18), փետրվար, 1997:

29 «Հայաստանի Հանրապետություն», 04.02.1999:

30 «Ջավախք», թիվ 2 (20), օգոստոս, 1998:

31 <http://www.abkhazinfo.f2o.ir/g/analytics/EpZFApyIEFDFHxsDHI.shtml> հմնտ.՝ «Конфликты и переговоры», N 3-4, Тбилиси, 1997.

պետք է լիներ Թբիլիսիի կողմից նշանակված շրջանային վարչության նախագահների՝ այս խնդրի վերաբերյալ ունեցած կարծիք, անզիջող դիրքորոշումներից: Հաջորդ էթե Կոորդինացիոն խորհուրդը պետք է հանրաքվեն անցկացներ Թբիլիսիի թույլտվությամբ, իսկ այդ ընթացքում չունենալով այն, ինչ³² էր այդքան նախապատրաստվել, նախապատրաստել նաև ժողովրդին, համընդհանուր աղմուկ բարձրացրել, գրգռել իր դեմ վրացական մամուլը: Իհարկե, սրանք այս գործընթացի կասեցման պատճառների մի փոքր մասն են միայն: Իրականում ամենամեծ պատճառներից մեկը Կոորդինացիոն խորհրդի, ինչպես նաև ՋԺԸ անդամների՝ այս հարցի շուրջ ունեցած տարածայնություններն էին, որոնց պատճառով շուտով Կոորդինացիոն խորհուրդն ու նրա կորիզը կազմող ՋԺԸ-ն անհամեմատ թուլացան և զրեթե դադարեցին գոյություն ունենալուց: Ջավախքի ճակատագրի որոշման կարևոր դերը ստանձնած Կոորդինացիոն խորհրդի և ՋԺԸ ղեկավար անդամների մոտ խիստ կերպով զգացվում էր միասնաբար մշակված հայեցակարգի, քաղաքական ուղու բացակայությունը: Մյուս կարևոր պատճառներից էին դարձյալ Ջավախքի ինքնավարությունն ընդգրկող աշխարհագրական սահմանների, ինչպես նաև քաղաքական շրջանակների ոչ ճիշտ պատկերացումները, հետևաբար նաև՝ այստեղից բխող՝ Վրաստանին ներկայացվող պահանջների՝ միմյանց խիստ հակասական լինելը: Նախ՝ եթե հանրաքվեից առաջ ստորագրահավաքի ժամանակ Կոորդինացիոն խորհրդի անդամների՝ Է.Շևարդնաձեին և Ջ.ժվանիային ուղղված դիմումում «նպատակահարմար էր համարվում նախագահի անձնական լիազոր ներկայացուցչի պաշտոն մտցնել Ախալքալաքի, Նինոծմինդայի և Ասպինձայի շրջանների համար՝ համապատասխանաբար նոր կազմակերպչական-տնտեսական համակարգի տարածքային վարչության և տնտեսավարման մշակումով»³², ապա համարյա բոլոր տեղերում պահանջների մեջ միայն նշվում է Ջավախք տարածաշրջանի մասին, որը պետք է դուրս բերվեր Ախալքախայի վարչական կառավարման համակարգից, այսինքն՝ այս պահանջներից դուրս էր մնում Ասպինձայի շրջանը: Դա է վկայում նաև Ջավախքի հասարակական-քաղաքական կազմակերպությունների կոորդինացնող խորհրդի՝ 1997թ. ապրիլին մշակված վերոնշյալ՝ Ջավախքի հիմնահարցի լուծման մարտավարության նախագիծը, ո-

32 Обращение — Координационного совета общественно-политических организации Джавахка: президенту Грузии г-ну Э.А.Шеварднадзе, председателю парламента г-ну З.Жвания, г. Ахалкалаки.

րով նախատեսվող միջոցառումների ծրագրային «է» կետով Ջավախքի էթնիկական պատմեշ են համարվում Ախալքախայի, Ծալկայի, Բորժոմի և Ասպինձայի շրջանները, որոնցում «պետք էր թուլացնել Վրաստանի ազդեցության լծակները և ուժեղացնել հայերին»³³: Ավելին հանրաքվեն նույնպես նախատեսված էր անցկացնել միայն Ջավախքում (Ախալքալաքի և Նինոծմինդայի շրջաններում): Այս բոլորից բացի խիստ անորոշ էր նաև նախատեսվող հանրաքվեի ժամանակ դրված պահանջը. «Համաձայն եք, որպեսզի Վրաստանի սահմանադրության շրջանակներում Ջավախքի տարածքը՝ Ախալքալաք կենտրոնով, ունենա իր վարչատարածքային միավորը միասնական Վրաստանի կազմում - ԱՅՈ, ՈՉ»³⁴: Այստեղից կարելի է եզրակացնել, որ հանրաքվեն վերաբերում էր ոչ թե Ջավախքի ինքնավարության կարգավիճակ ստանալուն, այլ, փաստորեն, պայքարը գնում էր Ջավախքի մի հատվածը Ախալքախայի վարչական ինքնակառավարման ենթակայությունից դուրս բերելու համար, իսկ թե ինչպիսի՞ կարգավիճակով՝ դա չէր նշվում: «Ախալքալաք կենտրոնով վարչատարածքային միավոր» ձևակերպումը խիստ անորոշ հասկացություն էր, և դրա տակ անհնար էր ինչ-որ բան հասկանալ ինքնավարության մասին: Իսկ եթե նույնիսկ Վրաստանը «հասկանար» հայերի այս պահանջը և Ջավախքը Ախալքախայի ենթակայությունից դուրս բերելուց բացի, նրան տար նաև ինքնավարություն, ապա մեր կարծիքով խիստ անարդարացի կլիներ Ախալքախայի՝ պաշտոնական տվյալներով շուրջ 43% (23.644 մարդ, այն դեպքում, երբ վրացիների թիվը ավելի էր ընդամենը 2044-ով (25.688 մարդ))³⁵ հայություն կազմող և Ծալկայի՝ հայերի բացարձակ մեծամասնությամբ բնակեցված շրջանները թողնել, մեղմ ասած, «բախտի քմահաճությին»: Մյուս կողմից՝ արդեն թուլացած ՋԺԸ-ն, նորից «վերակենդանանալու» ճիգեր գործադրելով, 1998թ. օգոստոսին (հանրաքվեի տապալումից շուրջ կես տարի անց) «Ջավախք» թերթում շարունակում է կոչ անել ժողովրդին՝ պայքարի ելնել՝ դուրս գալու Ախալքախայի ենթակայությունից³⁶, միաժամանակ վերոհիշյալ թերթի նույն անսում լույս տեսած հերթական համարում տպագրվում է «Ջավախ-

33 Ջավախքի հասարակական քաղաքական կազմակերպությունների կոորդինացնող խորհուրդ, Ջավախքի հիմնահարցի լուծման մարտավարության նախագիծ, 25.04.1997, ք.Ախալքալաք:

34 «Ջավախք», թիվ 1 (18), փետրվար, 1997:

35 «Конфликты и переговоры», N 3-4, Тбилиси, 1997.

36 «Ջավախք», թիվ 1 (19), օգոստոս, 1998:

քի ինքնավար հանրապետության ապագա սահմանադրության հիմնադրույթները» վերտառությամբ մի սովորածավալ հոդված, որտեղ Ջավախքի ապագա ինքնավար հանրապետությունն «ընդգրկում էր իր մեջ Ախալքալաքի, Նինոծմինդայի, Ասպինձայի, Ախալցխայի և Ծալկայի շրջանները՝ իրենց այժմյան սահմաններով, ինչպես նաև Բորժոմի շրջանին բռնակցված Չխարուլա, Մուլիթ, Ղզլքիլիսա (Տաբածղուրի) հայկական գյուղերը»³⁷: Բնականաբար հարց է առաջանում, եթե Կոորդինացիոն խորհրդի (կամ ՋԺՇ) անդամների կողմից նախատեսվում էր Ջավախքի Ինքնավար Հանրապետությունն ստեղծել նշված սահմանադրության նախագծի 1-ին կետով նախատեսվող (Ախալքալաքի, Նինոծմինդայի, Ասպինձայի, Ախալցխայի, Ծալկայի շրջաններ և Բորժոմի շրջանի հարավային հայկական գյուղեր) սահմաններում, ապա էլ ինչո՞ւ էին նրանք ձգտում Ջավախքը դուրս բերել Ախալցխայի ենթակայությունից: Նշենք այն տարբերությունը, որ կար Սամցխե-Ջավախք նահանգի և այն ինքնավար հանրապետության միջև, որը ուզում էին ստեղծել ՋԺՇ ներկայացուցիչները. նահանգի մեջ ներառված էր Բորժոմի շրջանը, ինքնավար հանրապետության Սահմանադրության մեջ կային միայն նրա հարավային հայկական գյուղերը, նահանգում չկա Ծալկայի շրջանը, Սահմանադրության մեջ այն մտնում էր որպես ինքնավար հանրապետության մասնիկ: Միաժամանակ նահանգում կա Ադիգեմի՝ Աջարիային սահմանակից շրջանը, որը չէր նախատեսվում մտցնել ինքնավար հանրապետության մեջ: Մյուս էական տարբերությունն այն էր, որ նահանգում նահանգային կենտրոնը Ախալցխա քաղաքն է, սահմանադրությամբ նախատեսվում էր, որ «Ջավախքի վարչական կենտրոնը (մայրաքաղաքը) Ախալքալաք քաղաքն է» (Սահմանադրության 2-րդ կետ)³⁸: Հաջորդ՝ եթե այժմ նահանգի անունը Սամցխե-Ջավախքի է, ապա Սահմանադրությունն առաջարկում էր Ջավախք անունը (Ջավախքի Ինքնավար Հանրապետություն, կրճատ՝ Ջավախք (Սահմանադրության 4-րդ կետ)³⁹: Ինչպես տեսնում ենք, կառուցվածքային առումով այնքան էլ մեծ չէր տարբերությունը ՋԺՇ առաջ քաշած սահմանադրությամբ նախատեսվող և Վրաստանի՝ «1994թ. հուլիսի 31-ից առաջարկվող» տարածքային-վարչական միավորների միջև (եթե հաշվի չառնենք այնտեղի օրենսդրության, կառավարման ձևերի և այլնի միջև եղած տարբե-

37 Նույն տեղում, թիվ 2 (20), օգոստոս, 1998:

38 Նույն տեղում:

39 «Ջավախք», թիվ 2, (20), օգոստոս, 1998:

րությունները), հետևաբար ավելի ճիշտ չէ՞ր լինի, որ վերջիններս ի սկզբանե պայքարեին կենտրոնը Ախալցխայից Ախալքալաք տեղափոխելու, վարչատարածքային և օրենսդրական-կառավարական տարբերությունները վերացնելու ուղղությամբ (այսինքն՝ հասնելն նահանգային ինքնավարության, ինչը նախատեսվում էր իրենց ավելի ուշ առաջ քաշած Սահմանադրության մեջ), այլ ոչ թե տարիներ շարունակ պայքար ծավալվեր՝ մեկուսանալու և օտարվելու Ախալցխայի շրջանից: Այսպիսով՝ մշակված, կոնկրետ ու հստակ պահանջների բացակայության պայմաններում Վրաստանին այլ ելք չէր մնում, քան հաշվի չնստել այս ամենի հետ և դրա փոխարեն հայության աջքերին «թող փչող» ծրագրերի կիսատ-պռատ իրականացման միջոցով փորձեր «լուծված» համարել այստեղի բազմապիսի հիմնախնդիրները:

Ջավախքի նահանգային և որպես ինքնավար տարածաշրջան հանդես գալու խնդիրներին հետագայում անդրադարձավ Սամցխե-Ջավախքի և Քվեմո Քարթլիի հայկական հասարակական կազմակերպությունների խորհուրդը (ստեղծված՝ 2003թ.), որն իր «Ինտեգրում, բայց ոչ ձուլում» նախաձեռնության երեք համաժողովներից⁴⁰ երրորդը (24 սեպտեմբերի, 2005թ.) ամբողջովին նվիրել էր Վրաստանի պետական կառուցվածքում Ջավախքի կարգավիճակի խնդրին: Համաժողովը պահանջում էր Վրաստանից մի շարք քայլերի իրագործում, մասնավորաբար՝

- Վրաստանի պետական կառուցվածքին տալ դաշնային (ֆեդերալ) բովանդակություն, որը բաղկացած կլինի տարածքային միավորներից (entity) և կենտրոնական իշխանություններից.
- Վրաստանի պետական դաշնային կառույցում կենտրոնական իշխանություններին վերապահել Վրաստանի Սահմանադրության հոդված 3-ի (ա) կետի ենթակետերով սահմանված բոլոր լիազորությունները.
- Տարածքային միավորների (entity) կազմում՝ հիմք ընդունելով Վրաստանի բաղկացուցիչ ազգությունների էթնիկական ինքնության պահպանման և զարգացման կարիքներն ու հնարավորությունները.

40 Առաջին համաժողովը (11 դեկտեմբերի, 2004թ.) նվիրված էր խնդրի առարկա տարածաշրջանի սոցիալ տնտեսական խնդիրներին, երկրորդը (2 ապրիլի, 2005թ.)՝ կրթամշակութային խնդիրներին և երրորդը (24 սեպտեմբերի, 2005թ.)՝ Վրաստանի պետական կառուցվածքում Ջավախքի կարգավիճակի խնդրին:

- Սամցխե-Ջավախքի՝ իր ներկա սահմաններով և Քվեմո-Քարթլիի՝ (առավելաբար սահմանակից հայաբնակ բնակավայրերով) վերածունը Վրաստանի պետական ֆեդերալ կառույցի ինքնավարության սուբյեկտներից մեկի՝ ինքնակառավարման լայն լիազորություններով, ներառյալ բնակչության կողմից ազատ ընտրություններով ինքնակառավարման բոլոր մարմինների ընտրության իրավունքով⁴¹:



Տեսարան Ախալքալաքից

Նույն խորհուրդը 2008թ. վրաց-օսական պատերազմից անմիջապես հետո հանդես եկավ Սամցխե-Ջավախքը իր ներկա սահմաններով և Քվեմո-Քարթլիի (առավելաբար սահմանակից հայաբնակ բնակավայրերով) Վրաստանի պետական դաշնային կառույցի ինքնավար սուբյեկտներից

մեկի վերածելու մասին պահանջով⁴²:

Ելնելով վերջին պահանջների բովանդակություններից՝ կարելի է եզրակացնել, որ նոր դարասկզբում Ջավախքի քաղաքական միտքը գնալով հասունացել է. վերջին պահանջումները գնալով համապատասխանում են Ջավախքի իրական շահերին, պատմական արդարությանը և դիվանագիտական տրամաբանությանը: Սամցխե (Մեսխտե) Ջավախք-Ծալկա (Ջավախք) տարածաշրջանի շուրջ ընթացող ներկա զարգացումներում հայեցակարգային բնույթ կրող նմանատիպ հայտարարություններն ու Վրաստանի, ինչպես նաև միջազգային կառույցների առջև դրվող պահանջումները գնալով հաճախակի են դառնում, որը խոսում է տարածաշրջանում ընթացող և խնդրվող գործընթացների մշտական առկայության մասին:

41 Սարգսյան Վ., Սամցխե-Ջավախք-Թռեղքը հայ-վրացական հարաբերությունների հոլովություն /1980-ական թթ. վերջ – 1990-ական թթ./, Երևան, 2006, էջ՝ 354-355:

42 Տես՝ <http://www.panorama.am/am/society/2008/08/20/javaxq/?sw:>

Ելնելով վերոնշյալ պատմական ակնարկից՝ փորձենք ամփոփել Ջավախքի հետխորհրդային վարչատարածքային կառուցվածքի առանձնահատկությունները և այս հիմքի վրա ուրվագծել վերջինիս ներկա և ապագա քաղաքական խորապատկերը: Այս բոլորի համադրումը մեզ հնարավորություն կարող է ընձեռել՝ ներկայացնելու իրական և Ջավախքի զարգացման երաշխիք հանդիսացող տեսլականը, որի միջոցով միմիայն հնարավոր կլինի սկզբնավորելու պատմական արդարության վերականգնումը:

- Ջավախք տարածաշրջանը, ճակատագրի դառն հեզնանքով գտնվելով Վրաստանի կազմում, հետխորհրդային ժամանակահատվածում (1994թ.) ապրեց իր հերթական մասնատումը: Վերջինիցս խլվեց Ծալկայի հատվածը՝ բացասաբար ազդելով տարածաշրջանի՝ որպես մեկ միասնական վարչաքաղաքական միավոր ձևավորվելու գործընթացի վրա:
- ԽՍՀՄ փլուզումից ի վեր Ջավախքի հայությունը, չունենալով տարաբնույթ խնդիրների, այդ թվում՝ տարածաշրջանի վարչատարածքային կարգավիճակի վերաբերյալ հայեցակարգային մոտեցումներ, երկար ժամանակ գտնվում էր հակասությունների և քաղաքական խարխափումների լաբիրինթոսում: Վերջին հանգամանքը հանգեցրել է նրան, որ Ջավախքում մինչ օրս 20-ամյա զարթոնքի (1988-2008թթ.) ժամանակահատվածում չի լուծվել ոչ մի խնդիր:
- 21-րդ դարասկզբին Ջավախքում քաղաքական միտքը սկսել է ապրել իր դրական առաջընթացը: Այն արտացոլվում է տարածաշրջանի խնդիրների շուրջ տարբեր հրապարակումներում, հայտարարություններում, բանաձևումներում և պահանջներում՝ տարբեր հասարակական-քաղաքական կազմակերպությունների՝ հայեցակարգայինին և քաղաքական տրամաբանությանը մոտ մտքերի արծարծմամբ:

Իրականում ո՞րն է շահեկանը: Ինչպես նկատեցինք, Ջավախքի ժողովուրդը սեփական տարածաշրջանի վարչատարածքային բաժանման վերաբերյալ ունեցել է հակասական տեսակետներ. մեկ կողմ է հանդես գալիս Ախալքալաքի որպես տարածաշրջանային կենտրոն դարձնելուն, մյուս կողմից՝ հաղիպում ենք երկարատև պայքարի մի ողջ ընթացքի, որի նպատակն է եղել ազատվել Ախալքալաքի «լծից» և որպես կենտրոն հռչակել Ախալքալաքը: Տվյալ դեպքում Ջավախքը սահմանափակվում էր Ախալքալաքի, Նինոծմինդայի, մասամբ նաև՝ Ասպինձայի շրջաններով: Իրավամբ՝ քաղաքական մտքի տհասությունը երբեմն կարող է հանգեցնել սե-

փական հայրենիքի մասնատմանն ու վերջինիս կորստյանը, ինչը տեղի ունեցավ Ջավախքի պարագայում: Կարճամիտ քաղաքական «գործիչների» անհեռատես գործելակերպը վրացական կողմին լիարժեք հնարավորություն ընձեռեց այս ընթացքում «մարսելու» դեռ խորհրդային վերջին տարիներին «կուլ տված» Ախալցխայի գավառը (Սամցխեն), որի վրացականացման համար Վրաստանը ներդրեց իր բոլոր ուժերը: Քաղաքական Ջավախքը դիտարկելով միմիայն 2-3 շրջաններում և Ախալցխայի ու Ծալկայի հատվածները «հիշելով» խիստ հազվադեպ՝ Ջավախքի քաղաքական ներկայացուցիչները տարածաշրջանի ռազմաստրատեգիական նշանակությունը հասցրել են գրոյական մակարդակի, որն էլ իր հերթին բերել է ամբողջ տարածաշրջանի դերի նվազեցմանը բոլոր իմաստներով:

Ի՞նչն է եղել հայության կողմից Ախալցխայի (Սամցխեի) օտարման բուն պատճառը: 1994թ. Ջավախքի տարածքը վերածելով Սամցխե-Ջավախքի նահանգի և որպես նահանգային կենտրոն դիտարկելով Ախալցխան՝ վրացական իշխանությունները լուծարեցին մնացած բոլոր շրջաններում նախկինում գոյություն ունեցած վարչական հաստատությունները՝ վերջիններս կենտրոնացնելով Ախալցխայում: Տվյալ ժամանակահատվածում արդեն վրացական շունչ ստացած Ախալցխան Ջավախքի մյուս հատվածների համար դիտվում էր որպես օտար և մեծ հեռավորության վրա գտնվող մի քաղաք, որտեղ հայությունն իրեն զգում է «անհարմար կացության» մեջ: Տվյալ պայմաններում, օրինակ, կենցաղային կամ այլ փաստաթղթի համար Ախալքալաքի հեռու գյուղերից բնակչության՝ մինչև Ախալցխա հասնելը տեղիք էր տալիս լուրջ դժգոհությունների, ինչին արձագանքելով էլ քաղաքական գործիչները ծավալել էին վերոհիշյալ «պայքարը»:

Ուրե՞մն: Կենցաղայինից հեռուն չզնացող մտածելակերպի առկայությունը շատ հաճախ կարող է հանգեցնել ողբերգական հետևանքներով պարտությունների, ինչ տեղի ունեցավ Ջավախքի պարագայում: Իբր արձագանքելով բնակչության տրտունջներին՝ Ջավախքի քաղաքագետները, անգիտակցաբար պայքար ծավալելով Ախալցխայի դեմ, ուղղակի և անուղղակի նպաստեցին վերջինիս վրացականացմանն ու օտարմանը Ջավախքի կազմից: Սա մի ողջ դրամա էր՝ տեղի ունեցած ՀՀ-ի և համայն հայության աչքի առաջ, որի հետևանքները դեռ երկար են իրենց զգացնել տալու:

Ո՞րն էր այս կույր գործելակերպի պատճառը: Առաջին հայացքից կարող է իրատեսական թվալ. ինչո՞ւ հանկարծ ամեն հաստա-

տություն տանել Ախալցխա, երբ այդ ամենը կար Ախալքալաքում կամ մյուս նախկին շրջկենտրոններում: Իրոք, բնակչության դժգոհություններն արդարացի էին, այս հիմքի վրա իրենց գործն արդարացի էին համարում նաև տվյալ շրջանի գործիչները, քանի որ արձագանքում էին բնակչության բողոքի ձայնին: Սակայն ինչպե՞ս:



Վարչական շենք Ախալքալաքում

Հարցն իր մեջ պարունակում էր բազմապիսի նրբություններ, որոնց, սակայն, բոլորովին չէին տիրապետում Ջավախքի քաղաքական ներկայացուցիչները: Իրականում Ջավախքի քաղաքական, ռազմաստրատեգիական և մշակութային կենտրոնը մշտապես պետք է լիներ Ախալցխան, որը հանդիսանալու էր Ջավախքի ինքնուրույն զարգացման խորհրդանիշը կամ «մայրաքաղաքը»: Առանց վերջինիս հայեցի գոյության՝ անհնար է Ջավախքի իրական զարգացումը: Վրաստանի ղեկավարությունը, մշտապես գիտակցելով այս իրողությունը, հետևողականորեն վրացականացրել է Ախալցխայի հատվածը: Իսկ նշված պայմաններում այն դարձնելով Ջավախքի վարչական կենտրոն՝ բնականաբար վերջինս լուծում էր միանգամից մի քանի խնդիր.

- Վրացական միջավայր էր տեղափոխում Ջավախքի վարչական-կառավարչական մարմինները, որոնց միջոցով Ջավախքի՝ սեփական մեթոդներով և օրենքներով ղեկավարումն անհամեմատ հեշտացվում էր:

- Լիովին ապահովվում էր տվյալ վարչական ղեկավար մարմիններում ազգությամբ վրացի պաշտոնյաների ներկայությունը: Այդ գործընթացը կարճ ժամանակում տարածվեց նաև կառավարչական ստորին օղակներում, և հայությունն իսպառ զրկվեց Ջավախքի՝ սեփական երկրի ճակատագրի տնօրինման հնարավորությունից:

- Վրացականացված Ախալցխայի նույնքան վրացականացված վարչական մարմինները լիարժեք երաշխիք էին՝ Ջավախքում վերահսկելու ցանկացած գործընթաց և բացառելու վրացական կամքից անկախ հայության յուրաքանչյուր քայլ:

Վարչական օղակները Ախալցխա տեղափոխելով՝ Վրաստանն իրավամբ Ջավախքի կառավարումը պարզապես խլեց հայերի ձեռքից: Եվ այստեղ, ահա, Ջավախքի քաղաքական ակտիվիստները, ստեղծված իրավիճակից սարսափահար, պայքար էին ծավալել՝ վրացականացվող Ախալցխայից «փրկելու» ինչ-ինչ վարչական հաստատություններ: Քաղաքական կամքի բացակայության պայմաններում Ախալցխան փրկելու փոխարեն «փրկվելու» էին ինչ-ինչ վարչական օղակներ:

Իրականում Ախալցխայի դերն ու նշանակությունը Ջավախքի զարգացման և գոյության գործում ինչ-որ տեղ գիտակցել են տվյալ ժամանակի գործիչները: Այդ է վկայում նման բովանդակություն պարունակող գրությունների գոյությունը, սակայն քաղաքական մթնոլորտում տիրող քառու մշուշով էր պատել ամեն ինչ: Ջավախահայերի վերոնշյալ գործողությունները լիովին համեմատելի է խորտակվող նավի վրա գտնվող խուճապահար անձնակազմի այն քայլերի հետ, երբ վերջիններս անընդհատ տեղափոխվում են նավի խորտակվող մասերից այլ մասեր՝ սեփական գոյությունները երկարացնելու համար: Երկարացնելու, սակայն՝ մի կարճ ժամանակով ընդամենը...

Ջավախքի քաղաքական գործիչների վերոնշյալ ջայլամի քաղաքականությունը հանգեցրեց նրան, որ միջև վերջ այդպես էլ չձևավորվեց Ախալցխան վերահայացնելու, Ջավախքը ինքնավար ճանապարհով տանելու և Ախալցխան տվյալ ինքնավարության վարչական կենտրոն (մայրաքաղաք) հռչակելու ուղղությունը: Միայն այս ճանապարհով կարելի էր փրկել Ջավախքի խորտակվող նավը: Իսկ ինքնուրույն զարգացող տարածաշրջանի համար վայրկյանների խնդիր էր տարբեր շրջաններում տեղակայել վարչական մարմիններ: Ինչ է, ներկայումս Արցախում մի ոստիկանական կամ հարկային վարչություն և կա, թե՛, ասենք, Գագրայի կամ Օջամչիրի քաղա-

քացիները սովորական փաստաթղթի համար հասնում են մայրաքաղաք Սուխում:

Վերոնշյալ քաղաքականությունը (կարելի է ասել՝ քաղաքականության ընդհանրապես բացակայությունը) հանգեցրեց նրան, որ ներկայումս հայության համար առժամանակ խորտակված են և՛ Ջավախքի Ախալցխայի (Սամցխեի) հատվածը, և՛ վերջինիս նահանգային վարչական մարմիններում հայության ընդգրկման հույսերը: Իսկ նման պայմաններում, երբ Ջավախք տարածաշրջանի տերը, ամենավերին օղակներից մինչև ստորին օղակները, վրացին էր, վրացականացման հերթը հասնելու էր նաև Ջավախքի Ախալքալաք-Նինոծմինդա-Ծալկա հատվածին, որը իրեն ուշացնել չտվեց:

Ջավախքի նահանգային-վարչական կառուցվածքը ներկայումս մոտավորապես նույնն է՝ որոշ կառուցվածքային փոփոխություններով: Նահանգային կենտրոն Ախալցխան, վրացի պաշտոնյաների բանակով, իր ձեռքում է կենտրոնացրել գրեթե յուրաքանչյուր վարչական հաստատություն: Ջավախքի տարբեր մասերից հնչող հայության ձայնն այդպես էլ լսող չկա այնտեղ:

Ախալցխայում է կենտրոնացված տարածաշրջանի հարկային համակարգը՝ Վրաստանի ֆինանսների նախարարության եկամտի ծառայության Ախալցխայի տարածաշրջանային կենտրոնը (մաքսային հսկողություն): Առանձին շրջանների, օրինակ՝ Ախալքալաքի հարկային տեսչության (վերջինիս պաշտոնական անվանումն է՝ «Վրաստանի ֆինանսների նախարարության եկամտի ծառայության Ախալցխայի տարածաշրջանային կենտրոնի (մաքսային հսկողություն) Վճարման ծառայության բաժանմունքի Ախալքալաքի ծառայության ստորաբաժանում (կենտրոն)»⁴³) ղեկավարը ընդամենը հանդիսանում է Ախալցխայի՝ տվյալ հիմնարկի վրացի ղեկավարի տեղակալը: Ախալցխայում է գտնվում Վրաստանի Ներքին գործերի նախարարության⁴⁴ Սամցխե-Ջավախքի գլխավոր վարչությունը, իսկ առանձին շրջաններ ունեն իրենց վարչությունները, որոնք բոլորը ենթակա են Ախալցխային: Նույնկերպ Ախալցխայում է գտնվում Վրաստանի ՆԳՆ պարեկային ոստիկանության ղեկարտամենտի

43 Ministry of finance of Georgia revenue service Akhaltsikhe regional center (tax inspection) Payers service division Akhalkalaki service unit (center).

44 Վրաստանի Ներքին գործերի նախարարության կառուցվածքային ստորաբաժանումների մասին տես՝ <http://police.ge/SQEMA/STRUQTURA.html> կայքէջում:

Այդպիսի հաստատություններից են մունիցիպալիտետների (շրջանների) կրթական ռեսուրս կենտրոնները, տեղական ինքնակառավարման մարմինները, անձնագրային վարչությունները և այլն: Ի դեպ՝ վերջին հաստատությունը երկար տարիներ եղել է ՆԳՆ համակարգում և գտնվել Ախալցխայում: Բնակչության դիմում-բողոքների արդյունքում երկար տարիներ ի վեր իբր եղել է որոշում, որ Ախալքալաքում, ի թիվս այլ վարչությունների, ստեղծվեր նաև անձնագրային վարչություն: Սակայն տարիներ շարունակ Ջավախքի բնակչությունը շարունակում էր արտերկիր մեկնելու անձնագիր ստանալ Ախալցխայից, իսկ Ախալքալաքում տրվում էին միայն տեղական անձնագրեր⁴⁷: Իսկ այս կապակցությամբ Ախալքալաքի ոստիկանության անձնագրային բաժնի աշխատակիցները «մշակել էին» «ժողովրդի վիճակը թեթևացնելուն ուղղված» մի մեխանիզմ. վերցնելով քաղաքացուց մոտ 120-150 դոլար (այն դեպքում, երբ անձնագրի պետական արժեքը մոտ 35 դոլար էր), վերջիններս անձնագրերն Ախալցխայից շտապ կերպով հասցնում էին Ախալքալաք:

Իրավիճակը փոխվեց, երբ Վրաստանում 2003թ. վարդերի հեղափոխությունից հետո տեղի ունեցած կառուցվածքային փոփոխությունների հետևանքով անձնագրային վարչությունը ՆԳՆ-ից անցավ Արդարադատության նախարարության իրավասության ներքո: Այդ ընթացքում անձնագրային վարչությունները տեղակայվեցին, բացի նահանգային կենտրոններից, նաև այլ շրջաններում⁴⁸:

Ջավախք տարածաշրջանը, հետխորհրդային ժամանակահատվածում վարչատարածքային, ինչպես նաև պետական հաստատությունների տեղաբաշխման այսպիսի ճակատագրի արժանանալով, այսօր էլ դեռևս գտնվում է անորոշ վիճակի մեջ: Հայկական շրջանակներում Ջավախքի նկատմամբ հայեցակարգի բացակայությունը անժամկետորեն կարող է երկարացնել այդ անորոշ վիճակը:

47 «Երկիր», 02.09.1998:

48 Ղեկավարության է, որ 2005թ. մարտ ամսին Ախալքալաքի անձնագրային վարչության բացումը, Ջավախքի քաղաքական ուժերից՝ «Միասնական Ջավախք» ժողովրդավարական դաշինքը (հիմնվել է 2005թ.) համարում է իր՝ այդ ուղղությամբ մղած պայքարի արդյունք: Տես՝ Սարգսյան Վ., Շարժումների, միությունների և հասարակական կազմակերպությունների դերը Սանյիտե-Ջավախք-Օալկա տարածաշրջանի 20-ամյա (1988-2008թթ.) քաղաքական կյանքում, «Ջավախքը 1988-2008 թթ.» (հոդվածների ժողովածու), Երևան, 2009, էջ՝ 240:

Ջավախքին հարկավոր է մշակութային վերածնունդ¹...

Վահե Սարգսյան

«Հայրենի Ջավախքը իր երևելի զավակներով միշտ զարդարել ու հարստացրել է մեր մշակույթը քեզ հիպոթյան և քեզ արվեստի ու գրականության ասպարեզում: Ես, որպես ջավախքցի, ուրախ և հպարտ եմ...»

Կարպ Խաչվանքյան

*«Հ ժողովրդական արտիստ
«Ջավախք» հայրենակցական-բարեգործական միության
շարաքարերը «Ասպնջակի» հրատարակման առթիվ («Ասպնջակ» 25 մարտի, 1991թ., թիվ 1)*



Էդուարդ Թամարյան

Տարբեր էթնիկ հանրություններ համաշխարհային քաղաքակրթությունների մեջ իրենց տեղը որոշել և գոյությունն են ապահովել՝ դրսևորելով քաղաքակրթության այս կամ այն տեսակը:

Հայ ազգն, իբրև քաղաքակրթության տեսակ, դարեր ի վեր ընտրել է մշակույթն՝ իր բոլոր ոլորտներով: Հայ ազգն, իբրև մշակութաստեղծ ազգ, իր «գործունեության» համար որպես տարածք ընտրել է Հայկական լեռնաշխարհը:

Այն մենք անվանում ենք մեկ բառով՝ ՀԱՅՐԵՆԻՔ: Ջավախք տարածաշրջանն այդ հայրենիքի հյուսիսային հատվածն է, որը հյուսիսում հասնելով մինչև Թռեղքի լեռներ՝ ճակատագրի բերումով այսօր չի գտնվում Հայոց նորանկախ պետականության կազմում: Սա-

1 Հոդվածը հրատարակվել է նաև լրատվական-վերլուծական մի շարք կայքէջերում:

կայն այն իր էքոնոսով հայկական է: Հետևաբար՝ Ջավախքի հայ էքոնոսն իր գոյության հիմքում պետք է ունենա զարգացող մշակույթ և համապատասխան պայմաններ: Սակայն այդ պայմաններն այսօր ամբողջովին «պայմանավորված» են վրացական պետական քաղաքականությամբ, որի՝ հայության ու հայ մշակույթի հանդեպ վարած քաղաքականությունը, մեղմ ասած, վերջին շրջանում դարձել են բարբարոսական:

Սույն ակնարկով փորձ ենք անելու ներկայացնել մի մարդու ծավալած գործունեությունը, որը մեծ նպաստ է բերում Ջավախքի հարուստ մշակույթի մի մասնիկը հանդիսացող գուսանական երգի պահպանման ու զարգացման գործին՝ իր երգարվեստի միջոցով «Ջավախք» անվանումը հնչեցնելով աշխարհասփյուռ հայության շրջանակներում:

Երգահան Էդուարդ Թամարյանը ծնվել է Ծալկայի² Նարդևան գյուղում 1957թ.: Գյուղի միջնակարգ դպրոցում դեռ 4-րդ դասարանից սկսել է երգել:



Էդուարդ Թամարյանը Ջավախքի Գանչա գյուղում կազմակերպված «Տերյանական օրվա» ամենամյա հանդիսությունում (2008թ., հուլիսի 20)

2 Ծալկայի պատմական, քաղաքական, ժողովրդագրական, կրթամշակութային անցյալի, ներկայի և ապագայի զարգացումների մասին առավել ամբողջական տես՝ Սարգսյան Վ., Սամցխե-Ջավախք-Ծալկա հայկական տարածաշրջանի խամրող «արևելքի»՝ Ծալկայի ժողովրդագրական և կրթական վիճակը, Ջավախքը 1988-2008թթ., հոդվածների ժողովածու, Երևան, 2009, էջ՝ 159-186:

Էդիկ Թամարյանին դեռ վաղ տարիքից բախտ է վիճակվել հանդիպելու հայ մեծ գուսան Հավասուն³, երբ նա իր հոր՝ Կիրակոս Թա-

3 Մոտավոր հաշվումներով Հավասին գրել է 2000 երգ և 1500 քառյակ, 130-ի չափ էլ հորինել է մեղեդիներ: Գուսան Հավասին՝ **Արմենակ Պարսամի Մարկոսյանը**, ծնվել է 1896 թվականին Ծալկայի շրջանի Այազմա գյուղում, հողագործ գյուղացու ընտանիքում: Երեք տարեկան հասակում ծաղիկ հիվանդությունը Արմենակին զրկում է տեսողությունից: Որդուն բուժելու ծնողների գործադրած ջանքերը ապարդյուն են անցնում... Երեխան ընդմիշտ մնում է տեսողությունից զրկված: Արդեն տասներկու տարեկան հասակում Արմենակը, ընկերակցելով տեղի աշուղների հետ, շրջագայում է գավառի գյուղերում: Հայրը անձամբ ճանաչում էր Ախալքալաքի գավառի Սուլդա գյուղի նշանավոր աշուղ Թիֆիլուն և որդուն ուղարկում է նրա մոտ՝ սովորելու: Արմենակը Սուլդայում մնում է մոտ երկու տարի, վարպետը նրան հռչակում է աշուղ և տալիս է աշուղական անուն՝ **Հավասի**: Հավասի «հավաս» բառից է, որը հայերեն թարգմանվում է մի քանի ձով՝ ցանկություն, տրամադրություն, սեր, բայց ոչ եռանդ: Հավասին իր անսահման գոհունակությունն է հայտնում սիրելի վարպետին և նրա կնոջը՝ Հիսնիին: 1929 թվականին, Հավասին արդեն ընտանիք կազմած և երկու երեխայի հայր, մշտական բնակություն է հաստատում Ախալքալաքում: Այստեղ երիտասարդ գուսանի համար մի նոր ասպարեզ է բացվում: Ժողովրդական գուսանական երգերի սիրահար ջավախեցիները նորեկ գուսանի նկատմամբ մի առանձին հոգատարություն են ցուցաբերում: Հավասին բոլոր գյուղերից հրավեր է ստանում, չի մերժում և սիրով այցելում է: Բախտի բերումով գուսանը ընկերակցում է տեղի նշանավոր երաժիշտներ Ջուբակահար Աշո Գրիգորյանի և դուդուկահար Հարութ Դավթյանի (Սամսրցի Արութ) հետ: Ի պատիվ այս երկուսի, պետք է ասել, որ նրանք խոշոր դեր են խաղացել Հավասու երաժշտական ունակությունների զարգացման գործում: Հավասու երգերը առաջին անգամ տպագրվել են Ախալքալաքի շրջանային, իսկ այնուհետ՝ «Պրոլետար» («Սովետական Վրաստան») հանրապետական թերթերում: 1944 թվականին մեկնեց, դարձավ մայրաքաղաքի մշտական բնակիչ: Ստեղծագործական աշխատանքի մի նոր շրջան է սկսվում գուսանի համար. համերգներով հանդես է գալիս հանրապետության շրջաններում, գյուղերում, մշակույթի տներում, ելույթներ է ունենում ռադիոյով, հեռուստատեսությամբ, երգերը տպագրվում են թերթերում և ամսագրերում: Մեկը մյուսի հետևից հրատարակվում են գուսանի ստեղծագործությունները՝ «Նոտայագրված երգեր» (1947թ.), «Բուրմունք» (1950 թ.), «Երգերի ժողովածու» (1958 թ.), «Իմ քնարը» (1961 թ.), «Գուսան Հավասի» (1983 թ.) և այլն: 1978 թվականի փետրվարի 22-ին դադարեց բաբախելուց մեր ժամանակի նշանավոր գուսան Հավասու սիրտը: (Կենսագրությունը՝ Դ. Բագրատունու: Նյութը վերցված է <http://www.javakhkmusic.com/> կայքէջի՝ գուսան Հավասուն նվիրված բաժնից):

մարյանի ուղեկցությամբ մեկնեց հայրենի Նարդևան գյուղում գտնվող գուսանի քրոջ տուն, ուր գուսանը առաջին անգամ լսեց Է. Թամարյանի հիասքանչ ձայնը: «Խոստացիր, որ կշարունակես երգել, ապրե՛ս»՝ սա էր մեծ գուսանի արձագանքը, երբ մանկահասակ էդիկը նրա մոտ կատարեց «Խոսիր իմ սազը» երգը»

Է. Թամարյանի հուշերի մեջ է 1972թ., երբ գուսան Հավասին իր կնոջ՝ Վարդուշի հետ ելույթ ունեցավ Նարդևանում: Մեծ գուսանին ժողովուրդը ցնծությամբ դիմավորեց. դահլիճի լեփ-լեցուն լինելու պատճառով հանդիսատեսը տեղափոխվեց գյուղի մշակույթի տան բակը, որտեղ գյուղի բնակիչները, իրար միացնելով տրակտորների թափքերը և կազմելով բեմ, ունկնդրեցին գուսան Հավասուն: Այստեղ հնչած գուսանի երգերից՝ «Խելքի բան չէ, բախտի բան է», «Կխոսի», «Էլ ու՞մ երգեմ», «Ով որ ունի՝ երնեկ նրան», «Ալագ-յագ», «Կարոտել եմ ես» և այլ երգեր, հետագայում մշակել, գործիքավորել և հայ նորոյա սերնդին է ներկայացնում Է. Թամարյանը:

8-րդ դասարանից մասնակցել է փառատոների՝ դառնալով դափնեկիր: 1976-1978թթ. ծառայել է խորհրդային բանակում: Բանակային կյանքը նույնպես չի խոչընդոտել Է. Թամարյանին՝ նվիրվելու հայ երգին: Ծառայության ժամանակ Ուրալի զինվորական շրջանում հիմնել է «Կովկասի ազգային անսամբլ» խումբը, որը արժանացել է բարձրաստիճան սպաների զովասանագրերին ու դիպլոմներին: Վերադառնալով Երևան՝ Է. Թամարյանը դիմում է ներկայացնում՝ մասնակցելու «Երիտասարդ ձայներ» փառատոնին, որին մասնակցելով դառնում է դափնեկիր:

Շուտով արժանանալով գուսան Շահենի, Աշոտի, Իգիթի, Բագրատի և մի շարք կոմպոզիտորների զովասանքներին՝ մեկ տարի անց ընդգրկվում է գուսան Շահենի խումբ և շուրջ չորս տարի երգում այնտեղ:

Դեռ վաղ տարիներից Է. Թամարյանը բախտ է ունեցել ներկա գտնվելու մեծանուն գուսան Հավասու՝ Ջավախքում (Ծալկա, Ախալքալաք, Ախալցխա) տված համերգներին: Ավելին՝ գուսանը միշտ զովասանքով է խոսել Էդուարդի հնչեղ ձայնի մասին:

Հավատարիմ լինելով իր մեծ ուսուցչին՝ գուսան Հավասուն, Է. Թամարյանը ներկայումս հավաքում է գուսանի դեռ չերգված երգերը և ի մի բերում: Երգեր, որոնք նոր շունչ են ստանալու Է. Թամարյանի կողմից. նա մինչ այժմ ունի չորս CD ալբոմներ, երեք տեսահոլովակներ:

Հետագա տարիներին Է. Թամարյանը վերադառնում է հայրենի

Ջավախք՝ Ծալկայի Նարդևան գյուղ, ուր տարիներ շարունակ ուրախացնում ու իր հնչեղ ձայնով ոգևորում էր մշակութային ասպարեզում սով ապրող ջավախքցիներին:

Դեռ խորհրդային տարիներին՝ 1984-1990թթ., Ծալկայի մշակույթի տանը ստեղծվել էր «Արևիկ» ինքնագործ խումբը, որի ղեկավարն էր Է. Թամարյանի ուսուցիչներից՝ Արշալույս Նորբեկյանը (գ. Նարդևան): «Արևիկը» հանդես է եկել Վրաստանի բազմաթիվ քաղաքներում, բազմաթիվ մրցանակաբաշխություններում գրավել առաջին տեղը: Հայաբնակ-հունաբնակ Ծալկայում այն ներկայացնում էր հայկական գուսանական երգարվեստը՝ հունականի կողքին: Նշենք, որ այս տարիներին Ծալկայի մշակույթի տանը գործել է նաև հունական երգի «Ակրոպոլիս» խումբը: Հետխորհրդային տարիներին, երբ հույները զանգվածաբար լքեցին Ծալկան, աստիճանաբար լեռեց նաև հունական երգի ձայնը: Հայկական 13 գյուղերի հայություն-



«Ջավախքի դոդախներ» անսամբլը (2006թ., ք. Երևան)

նը չլքեց իր պապենական հայրենիքը: Վերջինս մինչ օրս հերոսաբար կառչած է իր հողին: Սակայն 1990թ. մինչ օրս լռել է նաև «Արևիկը»: Ծալկայի հայության երգն այսօր լսվում է արտերում, մարգագետիններում և այլուր: Իսկական բեմերից երգելու և պարելու հնարավորությունից Ծալկայի հայ նոր սերունդը իսպառ զուրկ է: Իսկ շրջանային մշակութային կյանքն այսօր զարթոնք է ապրում: Տարբերությունը միայն նրանում է, որ այն այլևս հայկական չէ. Ծալկայի շրջկենտրոնն ու նախկին հունաբնակ գյուղերի մեծ մասն այսօր

«զարդարում է» Աջարիայից ու հեռավոր Սվանեթիայից այստեղ բերված վրացա-աջարա-սվանական տարրը: Վրացական հատուկ քաղաքականությունը և հայկական գործունի բացակայությունը Ծալկայի հայկական երգն ու պարը փոխարինեց վրացականով... Մի մշակույթ, որը երբեք չի եղել այնտեղ⁴...

2005թ. Էդուարդ Թամարյանի ստեղծագործական կյանքում պետք է նշանավորվեր «**Ջավախքի ղողանջներ**» համույթի ստեղծումով: Համույթի ստեղծմանը մեծապես աջակցել է Երևանում գործող «Ջավախք» հայրենակցական-բարեգործական միությունը⁵, որի ղեկավար, ներկայումս ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Շիրակ Թորոսյանը մշտապես իր հոգածության կենտրոնում է պահել համույթի հետագա գործունեությունը: «Ջավախքի ղողանջները» հետագա տարիներին մի քանի տասնյակ համերգներ է տվել Երևանում և ՀՀ տարբեր նարգերում՝ ամենուր ներկայացնելով Ջավախք

4 Մինչ ԽՍՀՄ փլուզումը Ծալկայում եղել է միայն մեկ վրացական գյուղ՝ Ռեխան, որը հիմնադրվել է 1829-1830-ական թվականներին, տես՝ նույն տեղում, էջ՝ 174-175, 181:

5 «Ջավախք» հայրենակցական բարեգործական միությունը հիմնադրվել է 1990թ. հունվարին, Երևանում՝ ԽՍՀՄ Սահմանադրության 51-րդ, ՀԽՍՀ Սահմանադրության 49-րդ և իր Կանոնադրության հիման վրա: Վերջինիս նպատակն է նպաստել հայ, վրացի և մյուս ժողովուրդների բարեկամության ամրապնդմանը, Վրաստանի տարածքում գտնվող Սամցխե-Ջավախք-Ծալկա տարածաշրջանի և մերձակա վայրերի հայաստանաբնակ հայության ազգապահպանությանը, միավորել այդ տարածքների մշակութա-կենսա-ցաղային և սոցիալ-տնտեսական պայմանների բարելավմանն ուղղված հայաստանաբնակ հայրենակիցների ջանքերը: Վերջինս ժամանակի ընթացքում Երևանից տարածվեց նաև ՀՀ այլ նարգեր ևս (տես՝ Կանոնադրություն «Ջավախք» հայրենակցական բարեգործական միության, ընդունված «Ջավախք» հայրենակցական բարեգործական միության համայնքային ներկայացուցիչների հիմնադիր ժողովում, 20.01.1990թ., ք. Երևան, հմնտ.՝ Սարգսյան Վ., Սամցխե-Ջավախք-Թեղթըր հայ-վրացական հարաբերությունների հոլովություն /1980-ական թթ. վերջ – 1990-ական թթ./, Երևան, 2006, էջ՝ 210): Կազմակերպության կողմից հիմնադրվել, հրատարակվել ու Ջավախքում ոչ մեծ չափերով բաժանվում էր «Ասպնջակ» թերթը («Ասպնջակ» թերթի առաջին համարը (թիվ 1) լույս է տեսել 1991թ. մարտի 25-ին: Թերթի վերջին համարը (թիվ 98) լույս է տեսել 2006թ. հուլիսին): Սկսած 2006 թվականից՝ «Ասպնջակի» փոխարեն «Ջավախք» հայրենակցական բարեգործական հասարակական կազմակերպությունը սկսեց հրատարակել «Հայրենիք» թերթը («Հայրենիքի» առաջին (թիվ 1 (99)) համարն սկսեց լույս տեսնել 2006թ. հոկտեմբերի մեկից):

տարածաշրջանի հզոր մշակույթը, վերջինիս գուսանների անմար երգերը:

2007թ. տարեվերջին Երևանի «Արամ Խաչատրյան» մեծ համերգասրահում ջավախահայության համար իսկական տոն էր. այդ օրը «Ջավախքի ղողանջներ» համույթը հանդես եկավ իր անդրանիկ համերգով՝ նվիրված համույթի հիմնադիր և գեղարվեստական ղեկավար Էդուարդ Թամարյանի ծննդյան 50 և ստեղծագործական գործունեության 35 ամյակներին⁶:

«Ջավախքի ղողանջներում» ընդհանուր թվով ընդգրկված են 12 կատարողներ: Ցավոք, խմբում գրեթե չկան ջավախքցի երաժիշտներ: Է. Թամարյանի մեծ ցանկությունն է, որ «Ջավախքի ղողանջներում» ընդգրկվեն նաև ջավախքցի երիտասարդ երաժիշտ-կատարողներ, սակայն վերջիններիս երաժշտական գիտելիքները ցավոք չեն համապատասխանում սահմանված չափանիշներին, իսկ երաժշտական կրթության ձեռք բերման համար մեծ ծախսեր են անհրաժեշտ: Դրա փոխարեն համույթի հետ ամենուր շրջում է «Ջավախք» անվանումը, որն արդեն կարևոր հանգամանք է Ջավախքի՝ որպես հայության պատմական հայրենիքի անունն ամենուր հնչեցնելու համար:

Է. Թամարյանի նպատակն է «Ջավախքի ղողանջների» միջոցով կամրջել հայության բնօրրան Ջավախք տարածաշրջանը Մայր պետության՝ ՀՀ-ի հետ: Ներկա պայմաններում, երբ վրաց պետական քաղաքականությունը, մեկուսացվածության մեջ պահելով Ջավախքի հայությանը, պարտադրելով վրացական լեզուն ու մշակույթը, զրկելով սեփական մշակույթը ազատորեն զարգացնելու հնարավորությունից, ձգտում է ամեն գնով վրացականացնել Ջավախքը, յուրաքանչյուր մշակութային գործչի գործունեությունն՝ ուղղված Ջավախքի մշակութային կյանքի վերարթնացմանը, կարելի է համարել հերոսական գործ: Ջավախքի Ծալկայի հատվածը ևս, հայ մշակույթի ու պատմական հայրենիքի մի մասնիկը լինելով, հայ ազգին տվել է բազմաթիվ մեծեր: Մեր պարագայում այդ հսկան գուսան Հավասին է, որի աշակերտ Էդուարդ Թամարյանը, այսօր ամենուր հնչեցնելով գուսանի քաղցրահնչյուն մեղեդիները, կապող օղակ է դարձել նրա և նոր սերնդի միջև, մի օղակ, որի ամրությունից է կախված հայ նոր և գալիք սերունդների հայ մնալը:

6 Հոբեյանական համերգի կայացման, «Ջավախքի ղողանջներ» համույթի ստեղծման և Էդուարդ Թամարյանի գործունեության մասին տես՝ «Հայրենիք», թիվ 5 (106), 20-31 հոկտեմբեր, 2007:

Ծալկան հետխորհրդային տարիներին արագորեն հունաթափ ու հայաթափ եղավ: Հայության պահպանության միակ երաշխիքը ոչ այնքան սոցիալական, որքան մշակութային հիմնահարցի լուծումն է: Հայ մարդը իր հայ մնալու, ինչպես նաև սեփական հողի վրա արժանապատվորեն ապրելու երաշխիքը չունենալով, հեռանում է դեպի ՀՀ և այլ վայրեր: Այս պայմաններում հրատապ հարց է վերակենդանացնել Ծալկայի մշակութային կյանքը: Այդ ուղղությամբ իր կատարած քայլերով վերջին տարիներին աչքի է ընկել «Ջավախք» հայրենակցական-բարեգործական միությունը, որի ջանքերով 2007թ. «Ջավախքի դոկանցներ» համույթը ժամանեց Ծալկայի Այազմա գյուղ՝ մասնակցելու հայ մեծ գուսան Հավասու ծննդյան 110 ամյակի առթիվ կազմակերպված տոնակատարություններին:



«Արամ Խաչատրյան» համերգասրահ (2007թ., ք. Երևան)

Էդուարդ Թամարյանն իր գործով, իր արվեստով այսօր շենացնում է Ջավախքը: ՀՀ-ում, ՌԴ-ի մի շարք քաղաքներում և այլուր իր կատարումներով յուրաքանչյուր հայի, յուրաքանչյուր ջավախքցու մեջ արթնացնում է պապենական երկրի կանչը, արթնացնում է իսկական հայի հայրենասիրական ոգին: Նրա երգը բոլորին մղում է այդ խորհրդավոր ու շատերի կողմից լքված երկիրը, նրա երգը շատ շատերի մոտ շարունակում է արթնացնել խիղճը, և շատերն են արդեն հասկացել, որ հայն ապագա ունի միայն սեփական հայրենի-

քում, որ հայը ՌԴ-ում դատապարտված է ապրելու միայն ստամոքսային կյանքով, որ հոգևոր արժեքները միայն Ջավախքում են անթեղված...

«Մենք պետք է հաղթենք մեր երգերով: Մեր հզոր երգերով: Մեր վերջին՝ «Ջավախք» երգը, որի բառերի հեղինակը բանաստեղծ, հրապարակախոս և Ջավախքի արժանավոր զավակ Հակոբ Սրապյանն է, ունի բազմաթիվ խորհուրդներ: Այն և՛ կարոտ է, և՛ հզորություն, և՛ հաղթանակող պար, և՛ Ջավախքի լուսավոր ու հայաշունչ ապագայի մի հզոր տեսլական: Երգը ներկայացնում է Ջավախք աշխարհը՝ իր բոլոր գույներով, ներկայացնում է Ջավախք աշխարհը՝ Ախալցխայից մինչև Ծալկա... Կուզենայինք, որ այն ունենար նաև իր տեսահոլովակը, որը նաև պատկերների տեսք կտար այս ամենին: Բայց ամեն ինչ, ցավոք, կապված է ֆինանսական խնդիրների հետ: Մենք դեռ ունենք նաև մեկ սրբազան ու վեհ նպատակ՝ ստեղծել Ջավախք աշխարհի օրհներգը, որը միավորող, ոգևորող ու պայքարի տանող միջոց պետք է դառնա աշխարհասփյուռ ջավախահայության շրջանակներում», մեզ հետ զրույցում նշում է Է. Թամարյանը: Նա՝ որպես գուսաններ Հավասու և Շահենի աշակերտ, այն կարծիքին է, որ Հավասին և Ջավախքի մյուս մեծերն այսօր ևս հանդիսանում են մեր մեծ ուսուցիչները:

Եվ իրոք, Ջավախքի նշանավոր գուսանների՝ Սիայու (Ղազար Կարապետյան, 1835 – 1903 թթ., գ. Կարծախ), Թիֆիլու (Եղո Մանուկյան, 1845 - ? թթ., գ. Սուլդա), Մաթինի (Հարություն Թումասյան, 1820 - ? թթ., գ. Խանդո), Ֆիրադու (Մարգար Պապոյան, ? -1921 թթ., գ. Դադեշ), Սուխանու (?????, գ. Գումբուրդո), Ջիվանու (Սերոբ Լևոնյան, 1846 – 1909 թթ., գ. Կարծախ) և Հավասու (Արմենակ Մարկոսյան, 1896 – 1978 թթ. գ. Այազմա)⁷ երգերի, խրատների, պատգամների միջոցով այսօր ևս դաստիարակվում է ջավախահայ նոր սերունդը: Հավասու և մնացած գուսան-աշուղների համերգները

7 Տես՝ Քելիշեան Զ., Ջավախքի աշուղները, Հայրենի Ջավախք, Պեյրուկ-Լիբանան, 2002, էջ՝ 193-198: Ջավախքի գուսանների և աշուղների կենսագրականները, վերջիններիս ստեղծագործությունները և այլ մեծաքանակ նյութեր կան նաև 2009թ. հունվարի մեկից բացված «Ջավախքի երգարան» եռալեզու (հայերեն, ռուսերեն և անգլերեն) կայքէջում, որի ինտերնետային հասցեն է՝ <http://www.javakhmusic.com/>: Ավելացնենք, որ կայքէջը պարունակում է նաև Ջավախքի հին և նորօրյա աշուղների երգերի, ինչպես նաև այդ երգերի՝ տարբեր երաժիշտների կատարումներով մեծաքանակ տեսահոլովակներ և ձայնահոլովակներ:

տարիներով հանդիսացել են Ջավախքի և հատկապես Ծալկայի հայեցի գոյության շարժիչ ուժը, որոնք, ցավոք, բացակայում են մեր օրերում⁸: Ջավախքի ժողովուրդն այսօր սեփական վերագտնումի, սեփական վերածննդի կարիքն ունի, և այդ գործում մեծ է հատկապես արվեստագետ մարդկանց դերը:

Ծալկան, բացի գուսան Չավասուց ունեցել է նաև մեկ այլ հրաշալի երգիչ-գուսան: Դա Նարդևան գյուղից Գաբրիել Նազլոյանն էր, որի զրնգուն ու թովիչ ձայնի առաջ մշտապես խոնարհվել է նաև մեծ գուսանը: Հրապարակի վրա է Գ. Նազլոյանի երգերի ժողովածուն՝ նույն գյուղից գրող Վահան Թամարյանի խմբագրմամբ⁹: Հետաքրքրական է, որ Գ. Նազլոյանը ևս կույր է եղել, ինչպես Չավասին:

Իսկ այսօր «Չավասու օրվա» տոնակատարություններին Ծալկայի Այազմա գյուղ են ժամանում վրացական երգի-պարի խմբերը... Վերջիններս ի լուր աշխարհի ներկայացնում են Ծալկայի «մշակույթը»: Ծալկայի իրական/հայկական մշակույթը դեռ սպասում է իր ներկայացնողներին:

...Այսօր Ծալկայի բոլոր 13 հայկական գյուղերում ապրում են տաղանդավոր մանուկներ, որոնք հնարավորություն չունեն դրսևորելու և հղկելու իրենց տաղանդը: Ծալկայի հայ մշակույթը պահպանելու և զարգացնելու վերջին միջոցը՝ հայ նորօրյա սերունդը, ցավոք, երկար չի կարող սպասել...

8 Ջավախքի մերօրյա եզակի աշուղներից՝ Աշուղ Ալիկ Ջավախքի (Ալիկ Քսպոյան) կյանքին և ստեղծագործական գործունեությանը կանդրադառնանք մեր մյուս հրապարակումներում:

9 Տես՝ Նազլոյան Գ., Շնորհաց ձեռք, Երևան, 1999:

Ջավախքում ստեղծվելիք հայկական պետական բուհը հայության համար պետք է դառնա համազգային խնդիր¹

Վահե Սարգսյան

«Վերջին փարիների իրադարձությունները կարծես բացեցին մեր աչքերը, մեր ունկերից հանեցին քնկոտության դարավոր խցանը: Եվ մեր մարմնում հստակվեց մի պարզ ճշմարտություն՝ բարեկամությունը սրբազան զգացմունք է, այն չի սրեղծվում հարկադրանքով, առավել ևս՝ բռնությամբ...»

*Մերուժան Շիպակցյան
(1931- 2006)*

*ԽՍՀՄ Ժողովուրդների միության անդամ,
գրող, հրատարակախոս,
Ջավախքի նվիրյալ մտավորական*

Սամցխե (Մեսխունիք)-Ջավախք-Ծալկա (այսուհետ՝ Ջավախք) տարածաշրջանի կրթամշակութային կյանքի «մահվանը» բազմիցս անդրադարձել ենք²: Խոսվել է նաև հանրակրթական ոլորտի հիմնախնդիրների և այդ ուղղությամբ Վրաստանի վարած քաղաքականության մասին³: Ներկա ուսումնասիրության մեջ փորձ ենք անելու մանրակրկիտ ձևով ներկայացնելու Ջավախք տարածաշրջանի բուհական կյանքին վերաբերող խնդիրները: Մի համազամանք, որը մեծ դեր ունի Ջավախքի երիտասարդ սերնդի ճակատագրի որոշման գործում:

Ջավախք տարածաշրջանում պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների հիմնադրման հարցը հայ-վրացական

1 Հոդվածը հայերեն և ռուսերեն տարբերակներով հրապարակվել է նաև լրատվական-վերլուծական մի շարք կայքէջերում:

2 Տես՝ «Հայ-վրացական կրթամշակութային հարաբերությունների հետխորհրդային գոյության վախճանը. Սամցխե-Ջավախք-Ծալկայի մշակութագրերում», «Ջավախքը 1988-2008թթ.», (հոդվածների ժողովածու), Երևան, 2009, էջ՝ 91-109:

3 Տես՝ «Սամցխե-Ջավախքի ժողովրդագրական և կրթական 20-ամյա կյանքը 1988-2008թթ.», «Ջավախքը 1988-2008թթ.», (հոդվածների ժողովածու), Երևան, 2009, էջ՝ 288-314:

պաշտոնական հանդիպումներում սկսվեց շոշափվել 1990-ական թթ. կեսերին, երբ ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը 1996թ. հունիսին Վրաստան կատարած իր այցի շրջանակներում եղավ նաև խնդրո առարկա Ջավախք տարածաշրջանում⁴: Չնայած Լ. Տեր-Պետրոսյանի 1996թ. այցը ընդհանրապես ուղղված չէր տարածաշրջանի զարգացմանն ու կնճռոտ խնդիրների լուծմանը, այլ կրում էր նախընտրական բնույթ, այնուամենայնիվ այցը եզակի էր այն իմաստով, որ հենց տեղում նախագահների մակարդակով պայմանավորվածությամբ ձեռք բերվեց տարածաշրջանում բացել ինչպես Թբիլիսիի, այնպես էլ Երևանի բուհերի մասնաճյուղեր⁵։ Սակայն, ինչպես պարզ դարձավ հետագայում, պայմանավորվածությունը ի կատար ածվեց միակողմանի. 2002թ.



Աչից չափս՝ Վրաստանի Նախագահ Էդուարդ Շավարձնաչեն, Վրաստանի ՆԳՆ Ախալքալաքի վարչության ներկայիս պետը Սամվել Պետրոսյանը, ՀՀ Նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը (ք. Ախալքալաք, 1996թ.)

փետրվարի 7-ից մինչև 2007թ. ուսումնական տարվա ավարտը (հինգ տարի) Ախալքալաքի նախկին պրոֆտեխուսումնարանի շենքում գործեց Իվ. Ջավախիշվիլու անվան ԹՊՀ-ի Ախալքալաքի մասնաճյուղը։ Տխրահոջակ այդ մասնաճյուղը ևս մի չհաջողված փորձ էր՝ փոխելու տարածաշրջանի ժողովրդագրական պատկերը։ Մասնաճյուղում, ուր ուսուցումն իրականացվում էր միայն վրացերենով,

4 Լրացուցիչ նշենք, որ Հայոց նորանկախ պետականության պատմության մեջ առաջին և, ցավոք, վերջին դեպքն էր, երբ նախագահն այցելում էր Սամցխե-Ջավախք-Ծալկա տարածաշրջան. ՀՀ երկրորդ նախագահ Ռ. Քոչարյանը, չնայած շատ հարցերում իր որդեգրած ազգային քաղաքականությունը, այնուամենայնիվ, տասը տարիների ընթացքում չայցելեց տարածաշրջան՝ իր քաղաքականության մեջ այդպես էլ չկարողանալով կարևորություն տալ վերջինիս դերին ու նշանակությանը։

5 «Ազգ».07.06.1996:

բազմապիսի արտոնություններով սովորում էին ոչ թե տեղացի, այլ Վրաստանի մյուս տարածաշրջաններից եկած ուսանողներ, որոնք, մասնագիտանալով տարբեր ոլորտներում, տեղում նշանակվելու էին տարբեր աշխատանքների։ Ախալքալաքի մասնաճյուղի «առաքելությունը» պերճաշուք կերպով ներկայացնում է հենց ինքը՝ մասնաճյուղի տնօրեն, պատմաբան Ռոին Կավրեիշվիլին. «Այս մասնաճյուղը առաջին հերթին, ինչ խոսք, ծառայում էր ինտեգրմանը։ Այստեղ տեղական բնակչության հետ միասին գալիս էին ուսանողներ Վրաստանի այլևայլ տարածաշրջաններից՝ մասնավորապես Սամտրեդիից, Ասպինձայից, Կախեթից, Բաթումից... Մինչ այդ տեղի վրացի բնակչությունը չէր ճանաչում Վրաստանի այլ մասերի բնակչությունը։ Համալսարանի շնորհիվ նրանք բարեկամացան, շատերը ընտանիքներ կազմեցին։ Արևմուտքից ժամանած մասը մնաց Ախալքալաքում. նրանք բաշխվեցին դպրոցներում աշխատանքի։ **Այնպես որ՝ համալսարանը իր գործը կատարում էր** (ընդգծումը մերն է՝ Վ.Ս.)։ Լուսավորության նախարարության նոր նախագիծը, հավանաբար այս գործը կշարունակի»⁶։ Իսկ այդ «նոր նախագիծը» վերաբերում էր միասնական բակալավրական ծրագրով քոլեջի ստեղծմանը, որն այժմ Ախալքալաքում արձակում է իր առաջին ծիլերը։



Թբիլիսիի պետական համալսարանի Ախալքալաքի երբեմնի մասնաճյուղի շենքը

Հակառակ սրան՝ տարածաշրջանի երիտասարդությունը շարունակում է հայկական և որակյալ կրթություն ստանալու համար բախել Երևանի կամ հայաստանյան այլ բուհերի դռները։

Նշենք, որ հայկական պետական բուհերի փոխարեն հետխորհրդային շրջանում Ջավախք տարածաշրջան են մուտք գործել հայաստանյան և այլ ոչ պետական բուհերի մասնաճյուղերը կամ զանա-

6 http://www.bagin.info/default.asp?Lang=_Am&NewsID=888&SectionID=0&Date=07/19/2008&PagePosition=17

զան միջին մասնագիտական հաստատություններ: Պարզ է, որ վերջիններս հետապնդում են ոչ թե ինչ-ինչ ազգային կամ ռազմավարական նպատակներ, այլ այդ ճանապարհով ձգտում են հնարավորինս ավելացնել իրենց շահույթները:

Այդպիսիներից Երեվանի Տնտեսաիրավագիտական Համալսարանը (ԵՏԻ) արդեն երկար ժամանակ է, ինչ համալսարանի տեսքով իր մասնաճյուղն ունի նաև Ջավախք տարածաշրջանի Ախալքալաք քաղաքում:

Վերջին տարիներին Ախալքալաքում գործում է նաև Իլյա Ճավճավաձեի անվան «Ցոդնա» համալսարանը: Այն ևս մասնավոր հաստատություն է և ընդհանրապես հեռու է ուսուցման համապատասխան որակ ապահովելուց:



Թբիլիսիի պետական համալսարանի Ախալքալաքի մասնաճյուղի շենքը

Քըրք Քըրքոյանի անվան Երեվանի նախկին Տնտեսաիրավագիտական Համալսարանը (ԵՏԻ) քուլեջի կարգավիճակով գործող մասնաճյուղ ունի նաև Ջավախքի Նինոծմինդա (Բոգդանովկա) քաղաքում, որը վերջին շրջանում վերագրանցվում է բժշկականի: Քուլեջի տնօրինության խոսքերով եթե վերագրանցման հետ բարդություններ չառաջանան, ապա այս տարվա 2-րդ կիսամյակից քուլեջը կսկսի գործել: Քուլեջի տնօրինությունը ցանկացողներին կարող է օգնել՝ ընդունվելու նաև Երևանում: Միջնակարգ կրթություն ունեցողների համար ուսման տևողությունը երկու տարի է, իսկ ինժեներական կրթական վկայական ունեցողների համար ուսման տևողությունը սահմանված է երեք տարի: Ուսման վճարը տարեկան կազմելու է նախկին՝ 150 ԱՄՆ դոլարի փոխարեն 250 դոլար:

Քաղաքական Ջավախքի մաս կազմող մեծամասամբ հայաբնակ Ծակայուն նույնպես իսպառ բացակայում են հայկական պետական կամ ոչ պետական բուհերը: Տեղի քաղաքական ակտիվիստ-պաշտոնյաների կողմից պետական կամ մասնավոր բուհ հիմնելու ուղղությամբ անգամ չի եղել որևէ նախաձեռնություն:

Նշենք, որ արդեն 17 տարի նույն՝ Վրաստանի այլ վայրերից խնդրո առարկա տարածաշրջան վրացի երիտասարդների վերաբնակեցման քաղաքականություն է իրականացնում նաև ԹՊՀ-ի Ախալցխայի (Մեսխեթի) մասնաճյուղը⁷, իսկ Ախալցխայի միակ հայկական բարձրագույն ուսումնական հաստատությունը՝ Ախալցխայի գյուղատնտեսական տեխնիկոմի հայերեն լեզվով ուսուցմամբ հաշվապահական ֆակուլտետը, փակվել էր դեռևս Ջ. Գամսախուրդիայի իշխանության օրոք: Ջ. Գամսախուրդիային ուղղված դիմումի մեջ Ախալքալաքի շրջխորհրդի գործկոմի ներկայացուցիչները բողոքում էին, որ «...Ջավախքի հայ երիտասարդությունը, փաստորեն, դրանով զրկվում է Ախալցխայում սովորելու հնարավորությունից...»⁸:

Հետաքրքրական է, որ ԹՊՀ-ի Ախալցխայի (Մեսխեթի) մասնաճյուղում իրականացվել է խաբկանքի նմանվող մի հետաքրքրական գործընթաց, որը մինչ օրս թյուր մեկնաբանությունների տեղիք է տվել հայկական և վրացական շրջանակներում: Այդ շրջանակներից հաճախ կարելի լսել այն մասին, որ ԹՊՀ-ի Ախալցխայի (Մեսխեթի) մասնաճյուղում կա հայկական բաժին: Եթե իրոք կա այդպիսի բաժին, ապա պետք է, որ հայ ուսանողությունն այնտեղ սովորեր տարբեր մասնագիտություններ (իրավագիտություն, տնտեսագիտություն, լրագրողական արվեստ և այլն), սակայն մեր ուսումնասիրություններն իսպառ հօդս են ցնդեցնում այդ խաբկանքը: Իրականում «հայկականության գոյությունը» ԹՊՀ-ի Ախալցխայի (Մեսխեթի) մասնաճյուղում եղել է օտար լե-

7 http://www.bagin.info/default.asp?Lang=_Am&NewsID=793&SectionID=0&Date=07/31/2008&PagePosition=21, վերջինս նույնպես հայտվել է փակման եզրին, դրա դեմ հանդես եկած Ախալցխայից վրացի բնակիչներից Վրաստանի կենտրոնական իշխանություններին հասցեագրվել է նաև ուղերձ: 2007 թվականին լուծարվեց նաև նույն քաղաքականությունն իրականացնող ԹՊՀ-ի մեկ այլ՝ աղբբեջանաբնակ Սառնետլիում գործող մասնաճյուղը, տե՛ս՝ http://www.bagin.info/default.asp?Lang=_Am&NewsID=1610&SectionID=0&Date=07/31/2008&PagePosition=1

8 Обращение президенту Республики Грузия гос. Звиаду Гамсахурдия (դիմումն անթվագիր է – Վ.Ս.):

զուների ֆակուլտետում՝ հայոց լեզվի և գրականության ուսումնասիրման լսարանի տեսքով: Վերջինս կարելի է համեմատել, օրինակ, ԵՊՀ ռոմանոգերմանական ֆակուլտետում իսպաներենի կամ իտալերենի ուսումնասիրման ծրագրի հետ: Այս ամենի եզրակացությունը հետևյալն է. Ջավախքի հայությանն իր պատմական հայրենիքում ստիպում են սեփական ազգային լեզուն (հայոց լեզուն) դիտել իբրև օտար լեզու... Այս է ԹՊՀ-ի՝ Ջավախքում ներկայացվածության ողջ «փայլն» ու իմաստը:

Այսպիսի պայմաններում, բնականաբար, իրեն և սեփական ազգային արժանապատվությունը հարգող յուրաքանչյուր հայ երիտասարդ ոտք չի դնի այս հաստատություն: Եվ իրոք՝ գործընթացները հանգեցրին նրան, որ վերջին՝ 2008-2009թթ. ուսումնական տարում հայ ուսանողների համապատասխան թվաքանակի բացակայության պատճառով այլևս չբացվեց ԹՊՀ-ի Ախալցխայի (Մեսխեթի) մասնաճյուղում հայ ուսանողի ստորացման խորհրդանիշ՝ «հայոց լեզվի և գրականության ուսումնասիրման» վերոհիշյալ լսարանը: Այնտեղ ստիպված դասավանդող տեղի հայ ազգանվեր երիտասարդ դասախոսներն էլ հեռացան այնտեղից:

Բացի ԹՊՀ-ի Ախալցխայի (Մեսխեթի) մասնաճյուղից (որը վերջին շրջանում համալսարանից վերածվել է ինստիտուտի), Ախալցխայում գործում են նաև ընդհանուր թվով 4 վրացական քոլեջներ: Համեմատենք Սամցխե-Մեսխունիք գավառի (Ախալցխայի գավառ) հայ և վրացի բնակչությունը. 2002թ. Վրաստանի պաշտոնական տվյալներով Սամցխեի կազմում գտնվող չորս մունիցիպալիտետներում (Նախկին Ադիգենի, Ախալցխայի, Բորժոմի և Ասպինձայի շրջաններ), միասին վերցրած, ապրում են 86.305 վրացիներ և 22.974 հայեր: Հայկական և վրացական բուհերի հարաբերակցությունը համեմատության մեջ դնելով ազգային հարաբերակցության հետ՝ պարզորոշ կարելի է ուրվագծել Վրաստանի խտրական և միակողմանի քաղաքականությունը նաև այս ոլորտում: Պատկերը կամբողջանա, եթե այս բոլորը դիտարկենք Սամցխե-Ջավախք-Ծալկա ամբողջական տարածաշրջանի համատեքստում. տարածաշրջանի ժողովրդագրական ցուցանիշները հետևյալն են. 230.198 ընդհանուր բնակչության թվակազմ (100%), որից՝ 124.198 հայեր (54%), 97.995՝ վրացիներ (42,6%), մնացածն՝ այլազգիներ (3,6%): Այս թվային հարաբերակցության հիմքի վրա գոյություն ունեցող վրացական պետական և մասնավոր բուհերի և միջին մասնագիտական հաստատությունների գոյությունը՝ մեկ կողմից, հայկական մեկ մասնավոր և խղճուկ բուհի մասնաճյուղի գոյությունը՝ մյուս կողմից, ևս

վրացական իշխանությունների վարած խտրական քաղաքականության լավագույն օրինակ են:

ՀՀ կրթության ու գիտության նախարարության կողմից բազմիցս արված՝ Սամցխե-Ջավախք-Ծալկա տարածաշրջանում հայ վրացական համատեղ բուհի հիմնելու մասին առաջարկները շարունակում են քաղաքավարի մերժվել վրացական իշխանությունների կողմից: Այդ մասին պարզորոշ հայտարարվել է և Վրաստանի նախկին ԿԳ նախարար Ա. Լոմայայի⁹, և ներկա նախարար Գ. Նոդիայի կողմից: Սամցխե-Ջավախք-Ծալկա տարածաշրջանի երիտասարդության՝ մայրենի լեզվով տեղում բարձրագույն կրթություն ստանալու հույսերը վերջնականապես մարտնչում հատկապես Գ. Նոդիա – Ս. Սեյրանյան վերջին՝ 2008թ. հունիսյան հանդիպումից հետո¹⁰, երբ հայկական կողմը կրկին հանդես եկավ նման առաջարկով, որին ի պատասխան՝ Գ. Նոդիան նշեց, «որ մինչ օրս Վրաստանը միջպետական համալսարան ունենալու նախադեպ չի ունեցել, եւ նման կրթօջախ

9 Դեռ 2007թ. նոյեմբերին Վրաստանի ԿԳ նախարար Ալեքսանդր Լոմայան հայտարարել է, որ Վրաստանում հայկական դպրոցներ և բուհեր չեն բացվելու, քանզի դրա ոչ մի անհրաժեշտություն չկա: Այդպես է նա մեկնաբանել Հայաստանի Գիտության և կրթության նախարար Լևոն Մկրտչյանի հայտարարությունը, որը գտնում է, որ Վրաստանում անհրաժեշտ է բացել մի քանի հայկական դպրոցներ և հայ-վրացական բուհ: Սամցխե-Ջավախքում հայ-վրացական բուհ բացելու մասին հայկական կողմի պահանջների կապակցությամբ Լոմայան հայտարարել է, որ ներկայումս Վրաստանում չկան մասնագետներ, որոնք կկարողանան դասավանդել այդ բուհում: Նախարարը հայտնել է, որ Ի. Ճավճավաձեի անվան համալսարանում (համալսարանը նախկինում կոչվում էր Ս. Սաբա-Օրբելիանու անվան Թբիլիսիի պետական մանկավարժական համալսարան) գոյություն ունի հայոց լեզվի և գրականության ամբիոն: Այն հայալեզու դպրոցների համար մանկավարժներ է պատրաստում: Լոմայայի խոսքերով՝ Վրաստանի քաղաքացիները ցանկանում են բարձրագույն կրթություն ստանալ Վրաստանի պետական լեզվով, իսկ նրանք, ովքեր ցանկանում են կրթություն ստանալ հայերենով, գնում են Հայաստան և այնտեղ են կրթություն ստանում: Տես՝ <http://www.panorama.am/am/education/2007/08/22/krtutyun/>:

10 2008թ. հունիսի վերջին ՀՀ այցելեց Վրաստանի ԿԳ նախարար Գիա Նոդիան: Բազմաթիվ լրատվամիջոցներ անդրադարձան այս այցի շրջանակներում տեղի ունեցած քննարկումներին ու ստորագրված պայմանագրերին, սակայն ոչ մի ՁԼՄ տեղեկատվություն չի տվել այն մասին, որ հարևան երկրների նորանկախ պատմության մեջ Վրաստանի ԿԳ նախարարը ՀՀ էր այցելում առաջին անգամ:

հիմնելը կարող է ներպետական իրավաբանական դաշտին չհամապատասխանել»¹¹: Հանդիպման ժամանակ տեղի ունեցած բանակցություններից պարզ է դառնում, որ կողմերը փոխադարձ համաձայնության չեկած հարցերի շուրջ ստեղծել են աշխատանքային խմբեր¹². հայ-վրացական համալսարան բացելու գործընթացը նույնպես «քննվելու է» աշխատանքային խմբերի կողմից...¹³:

**Անհրաժեշտ է հայկական պետական բուհի հիմնում
Ախալցխայում: Ինչու՞ հենց այնտեղ:**



Իլյա Ճավնավաչեի անվան «Յորնա» համալսարանը տեղակայված է այստեղ (ք. Ախալքալաք)

Ներկայումս շատ է խոսվում հայ-վրացական պետական բուհի հիմնման մասին Ջավախքում: Սակայն եթե հարց առաջադրվի այն մասին, թե Ջավախքի ո՞ր քաղաքում, ապա կարելի է լսել տարբեր, ընդ որում՝ իրարամերժ կարծիքներ: Շատերի կողմից հիմնավորվում է այն տեսակետը, որ այդ արդեն «մեծ մեսիան» հիշեցնող բուհը պետք է բացվի Ախալքալաքում՝ որպես

Ջավախքի հայահոծ հատվածի կենտրոն:

Ախալցխայում հայկական պետական բուհ բացելու մասին մեր հիմնավորումները հետևյալներն են.

- Ջավախք տարածաշրջանի ապագան անհնար է տեսնել առանց Ախալցխայի (Մեսխունիքի) հատվածի, որի սիրտը հենց Ախալցխա քաղաքն է: Մյուս կողմից՝ Ախալցխայի գավառն (Մեսխունիք գավառ) իր պատմական անցյալով և քաղաքական ներկայով Ջավախքի անբակտելի մասն է: Ուստի՝ իրատապ խնդիր է Ախալցխայի հայկական դիմագծի պահպանումն ու զարգացումը:

11 <http://yerkir.am/newspaper/?id=884>

12 Տե՛ս՝ նույն տեղում:

13 http://www.bagin.info/default.asp?Lang=_Am&NewsID=1520&SectionID=0&Date=07/22/2008&PagePosition=2

- Ախալցխայի հատվածը Ջավախքի և ՀՀ-ի համար ունի ռազմաստրատեգիական անփոխարինելի նշանակություն, որի հայկական լինելը վերջիններիս հնարավորություն է տալու ապագայում Աջարիայի վրայով ծով դուրս գալու:
- Առանց Ախալցխայի անհնար է Ջավախքում ձևավորել հայկական հզոր գործոն, որը հնարավորություն կունենա վերածվելու ինքնուրույն միավորի: Այս իմաստով անիմաստ է խոսել Ջավախքի ինքնավարության կամ վերջինիս հարցի արդարացի լուծման մասին, եթե Ախալցխան դադարի հայկական լինելուց:
- Ախալցխան Կրաստանի՝ խորհրդային և հետխորհրդային շրջանի վարած ժողովրդագրական քաղաքականության զոհն է, և որպես այդպիսին՝ այն լիովին համեմատելի է խորհրդային տարիներին ադրբեջանացած Ադրամի, Խոջալուի, Հյուսիսային Արցախի և մյուս շրջանների հետ: Ուստի Ախալցխա-Մեսխունիքի հայկական դիմագծի վերականգնումը հայության համար, վերոնշյալներից գատ, բարոյական խնդիր է:

Ախալցխայի վերահայկականացման մի ճանապարհն այնտեղ հայկական պետական բուհի հիմնումն է:

Հավելյալ նշենք, որ խորհրդային տարիներին, երբ քաղաքում գործում էր Ախալցխայի գյուղատնտեսական տեխնիկումի հայերեն լեզվով ուսուցմամբ հաշվապահական ֆակուլտետը, քաղաքը լցված էր հայ ուսանողներով, հանրակացարաններում, վարձով բնակարաններում, զբոսայգիներում վերջիններս հավելյալ եռուզեռ էին հաղորդում քաղաքին. Ախալցխայում հայկական շունչն էր ամենուր: Սա այն դեպքում, երբ եղածը մի բուհ չէր, այլ՝ մի հասարակ միջին մասնագիտական հաստատության նույնքան հասարակ մի հաշվապահական բաժին: Չ. Գամսախուրդիան, փակելով այն, վերջակետ դրեց այդ ամենին: Հայությունն այս ամենին հակադարձեց «վրաց թագավորին» ուղղված մի խղճուկ բողոքագրով...

Այն մտավախությունները, որ Ախալցխան հեռու է Ախալքալաք-Ծալկա հատվածից, որի պատճառով Ջավախքի այս հատվածի ուսանողությունը կարող է ունենալ ինչ-ինչ դժվարություններ, հեռու են իրականությունից. 250-300 կմ ճանապարհ կտրող-անցնող և Երևան հասնող Ախալքալաք-Ծալկայի ուսանողի համար բոլորովին դժվար չէ անցնել այդ ճանապարհի մի մասը և հասնել Ախալցխա: Հարկ համարենք հիշեցնելու, որ այս դեպքում Ախալցխայի ուսանողությունը բուհ կընդունվի հենց տեղում:

Ջավախքում պետական բուհի հիմնումը միայն ուսանողներից տեղում կրթվելու հնարավորության ընձեռում չէ. այն լրացուցիչ

խթան է՝ Ջավախքում պրոֆեսորադասախոսական, գիտական և այսպիսով՝ մոտավորական խավի վերածնունդի գործուն: Հատուկ քաղաքականության շնորհիվ դեպի Ջավախք կգործուղվեն համապատասխան մասնագետներ՝ ՀՀ-ի և սփյուռքի տարբեր հաստատություններից: Այդ նույն քաղաքականությունը կամային հատկանիշներ կծնավորի նաև ծագումով Ջավախքից, ներկայումս ՀՀ-ի տարբեր բուհերում դասավանդող դասախոսների մեջ, որոնց մոտ ի վերջո կգարթեն խիղճը և պապենական զգացումները՝ ծննդավայր-հայրենիքին օգտակար դառնալու իմաստով: Ի վերջո՝ ո՞վ չի ցանկանա, թեև ուզ ժամանակի մի փոքր հատված, գործել կամ դասավանդել հրաշագեղ Ախալցխայում, որն իր մաքրությամբ, իր պատմական անցյալով, իր դրախտային բնաշխարհով աննկարագրելի մի վայր է...



Երևանի Տիգրաս-Ախալաղախական համալսարանի (ԵՏԻ) Ախալքալաքի մասնաճյուղը

Ինչու՞ է վրացական կողմը կտրականապես մերժում անգամ հայ-վրացական պետական համալսարանի հիմնումը: Պատասխանը պարզ է. հայ ուսանողությունը, չնչին բացառություններով, նախընտրելու է հայկական բաժինները, կրկին անտեսվելու

է վրացերենը, կրկին վրաց ղեկավարությունը կանգնելու է գլխացավանքների առջև: Այսպիսի բուհում մոտավորապես տեղի է ունենալու այն ամենը, ինչն այսօր տեղի է ունենում Ջավախքի հանրակրթական դպրոցներում: Սա այն բնական գործընթացի արդյունքն է, երբ Թռեղքի լեռներից հարավ՝ Ջավախքում բնակվող հայի համար վրաց քաղաքական և հոգևոր մշակույթն օտար է և հարյուրամյակներ շարունակ չի ընկալվում որպես այդպիսին: Եվ Վրաստանն այսօր անխնայ պայքարում է ոչ միայն դպրոցների, այլ նաև հատուկ նախապատերազմների վրացականացման համար, և վերջինից սպասել նոր գլխացավանքի կամ բուհի հիմնում՝ առնվազն միամտություն է:

Եզրահանգումներ.

- Ջավախքում հայկական պետական բուհ այսօր գոյություն չունի: Եղած հատուկ նախադրյալները համալսարաններն ընդամենը խաբկանք են:
- Ջավախքում վրացական պետական և մասնավոր բուհերի գոյությունը տարածաշրջանը վրացացնելու քաղաքականության մի մասն է, որն արտացոլում է Վրաստանի՝ այս հարցում խտրական և հայաթափման քաղաքականությունը:
- Հայկական կողմի քաղաքականությունը և ձեռնարկած քայլերը՝ Ջավախքում պետական հայկական բուհի հիմնման ուղղությամբ, եղել են խիստ թերի, վախվորած և անարդյունավետ:
- Ջավախքում պետական հայկական բուհի ստեղծման վայր անպայման պետք է դիտարկել տարածաշրջանի վարչաքաղաքական, մշակութային և ռազմավարական կենտրոն քաղաք Ախալցխան:
- Ջավախքում հայկական պետական բուհի ստեղծման ուղղությամբ Վրաստանի բռնած անգիջում դիրքորոշումն իսկ այդ գործընթացի կարևորության, Ջավախքի հայկականության պահպանման և զարգացման գործում վերջինիս ունեցած անփոխարինելի դերի ապացույցն է:
- Ջավախքում ստեղծվելիք հայկական պետական բուհը, երբ օրակարգի վրա տարածաշրջանի հայկական լինել-չլինելու հարցն է, Ջավախքի և համայն հայության համար պետք է դառնա համագային խնդիր:

Զաբախա-Ջավախքը՝ Հայոց Հայրենիք¹...

*Էդուարդ Աբրահամյան
պատմական գիտությունների թեկնածու*



Էդուարդ Աբրահամյան

Հայ ազգն իր պատմության ընթացքում ունեցել է մեծ ձեռքբերումներ: Դրանց հետ մեկտեղ՝ մեծ թիվ են կազմում նաև կորուստները, որոնք եղել են պետականության, մշակութային արժեքների, ազգաբնակչության, վերջապես նաև՝ հայրենիքի տեսքով:

Նկատի առնելով այն իրողությունը, որ հայկական շրջանակներում մինչ օրս դեռ չեն ձևավորվել հայեցակարգային մոտեցումներ խնդրո առարկա տարածաշրջանի շուրջ, ավելին՝ վերջինիս մասին հայ հանրությունն ունի հակասական և իրարամերժ պատկերացումներ, հարկ ենք համարում մեր խոսքում տալ վերջինիս քաղաքական սահմանումը. ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ (ՀՅՈՒՄԻՍԱՄՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ) ԳԱՎԱՌՆԵՐ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՍԱՍՑԻՆԵՆ (ԱԽԱՆՏԻԱՄՅԻ ԳԱՎԱՌ, ՆԵՐԿԱ ԱԴԻԳԵՆԻ, ԱԽԱՆՏԻԱՄՅԻ ԵՎ ԱՍՊԻՆՉԱՄՅԻ ՇՐՋԱՆՆԵՐ), ՋԱՎԱԽԵՐ (ԱԽԱՆՏԻԱՄՅԻ ԳԱՎԱՌ, ՆԵՐԿԱ ԱԽԱՆՏԻԱՄՅԻ ԵՎ ՆԻՆՈՇԻՆԴԱՄՅԻ ՇՐՋԱՆՆԵՐ) ԵՎ ԾԱԼԿԱՆ (ԹՈՒԵՂԸ ԳԱՎԱՌ ԵՎ ՋԱՎԱԽԵՐ ԳԱՎԱՌԻ ՀՅՈՒՄԻՍԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՏՎԱԾ, ՆԵՐԿԱ ԾԱԼԿԱՄՅԻ ՇՐՋԱՆ), ԱՅՈՒՐՅԵՏԵՎ ՄԻՎՈՐՈՎՈՒՄ ԵՆ ՄԵՎ ՔՍՂԱՔԱՎԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ, ՈՐԸ ՍՏԱՆՈՒՄ Է «ՋԱՎԱԽԵՐ» ԱՆՎԱՆՈՒՄԸ: Այսուհետև Ջավախք քաղաքական անվանումը տարածվում է վերոնշյալ պատմական հայկական գավառների վրա՝ ամբողջապես: Այն տառադարձված անվանաձևն է ուրարտական Արգիշտի թագավորի՝ Վանի

նշանավոր արձանագրության մեջ հիշատակած Զաբախա երկրի: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Զաբախայի համար Արգիշտի թագավորը կոնկրետ չի նշում վարչական սահմաններ և այս անվանման տակ պարզապես ընդգծում է Այրարատյան աշխարհից հյուսիս գտնվող տարածքների միավորումը իր թագավորությանը, մենք լիովին հիմք ունենք Զաբախա-Ջավախք՝ պատմական այսպիսի վաղեմություն ունեցող անվանաձևը տարածելու ոչ միայն Ախալքալաքի և Նինոծմինդայի (որը հետագա պատմական գործընթացների արդյունք է), այլ նաև՝ վերոնշյալ Սամցխե-Ջավախք-Ծալկա ամբողջական տարածաշրջանի վրա:

Ինչպես պատմագիտության, այնպես էլ պետական շրջանակներում ամբողջ հետխորհրդային շրջանում այդպես էլ չձևավորվեց Ջավախքի վերաբերյալ միասնական և հասարակ ժողովրդին մատչելի հայեցակարգ: Խնդրո առարկա տարածաշրջանի վերաբերյալ այդպիսի հայեցակարգի բացակայությունն է՝ ինչպես ՀՀ պետական և հասարակական շրջանակներում աղճատված դիրքորոշումների և վախժվորած քայլերի, նույնպես և Ջավախքի հայ ազգաբնակչության շրջանում վերջին քսանամյա զարթոնքի տարիներին ոչնչի չհասնելու պատճառը:

Վերջին քսանամյակում (1988-2008թթ.), երբ իսկական տերերի կողմից ազատագրվեցին խորհրդային կուսակցական մարմինների տնօրինած բազմաթիվ էթնիկական միավորներ (պատմական Արցախ, Աբխազիա, Հարավային Օսեթիա, Մերձդնեստր և այլն), Ջավախքի հայությունը չհասավ ոչնչի: Նույն խնդիրները, որոնք գոյություն ունեին 1988-ից սկսած և 1990-ական թվականներին, գրեթե պատճենահանված տեսքով գոյություն ունեն նաև այսօր՝ 2008թ.: Սրա հիմնական պատճառն այն է, որ և այդ տարածաշրջանի, և Հայաստանի Հանրապետության, և աշխարհասփյուռ հայությունը միայն վերջին շրջանում է սկսել «ծանոթանալ» հայության պատմական այդ հայրենիքին: Հայության բոլոր շրջանակներում մինչ օրս հատուկներ մարդիկ ունեն հստակ պատկերացումներ Ջավախքի խնդրի բուն էության, Ջավախքի պատմական և քաղաքական սահմանների վարչական ընդգրկվածության, պատմական անցյալի և քաղաքական ներկայի մասին: Այս ամենը մշտապես դարձել են հայկական կողմի քսանամյա պարտությունների պատճառը, միաժամանակ շարունակում են խոչընդոտ հանդիսանալ այս ուղղությամբ հայեցակարգային քայլեր կատարելու համար:

Պատմական, ազգային-քաղաքական և միջազգային իրավունքի հողի վրա մշակված քայլերի բացակայությունը հայկական կողմի

¹ Հոդվածը որպես ներածական տպագրվել է հետևյալ գրքում. Սարգսյան Վ., Ջավախքը 1988-2008 թթ., հոդվածների ժողովածու, Երևան, 2009, էջ՝ 6-12, ինչպես նաև նույն գրքի ռուսերեն հրատարակման մեջ, տես՝ Джавахк в 1988-2008 гг., сборник статей, Ереван, 2009, с. 6-12: Հոդվածը հայերեն և ռուսերեն տարբերակներով հրատարակվել է նաև լրատվական-վերլուծական մի շարք կայքէջերում: Արտատպվում է անմշակ կրճատումներով:

համար հաղիսացել է մշտական պարտությունների աղբյուր, իսկ վրացական կողմն այն օգտագործել է իբրև մահակ՝ այս միջոցով տնօրինելով խնդրո առարկա տարածաշրջանի հայության ճակատագիրը: Նույն հանգամանքը Հայաստանի Հանրապետությանը ստիպել է լինել Վրաստանի հակահայ քայլերը անտեսողի դիրքերում, որը բխել է վերջինիս՝ դեպի արտաքին աշխարհ ելքը մեծապես Վրաստանից կախված լինելու հանգամանքից: Սակայն վերլուծությունները ապացուցում են հակառակ իրողությունը. Ջավախք տարածաշրջանն ու տեղի հայությունը ՀՀ անվտանգության երաշխավորն են նույնիսկ ավելի, քան ազատագրված Արցախը: Վրաց-հայկական մշտապես լարված հարաբերությունների պայմաններում Վրաստանը դեռևս վերջնականապես չի փակել ՀՀ՝ դեպի արտաքին աշխարհ ելքի ճանապարհները, քանի դեռ իր պատմական հայրենիքում կա Ջավախքի 150.000 հայությունը: Ավելին՝ այս տարածաշրջանն է ապագայում լինելու դեպի ծով և այլ երկրներ դուրս գալու ՀՀ միակ ելքը, որը կարելի է կոչել «կյանքի ճանապարհ»:

Ջավախքը բոլորովին այլ իրականության մեջ է գտնվում, քան այն կարելի է պատկերացնել, և վերջինիս խնդիրը բոլորովին այլ տեղում է թաքնված, քան մենք լսում ենք ամենօրյա հայտարարություններում կամ հրապարակումներից շատերում:

Հայի բարոյական սահմաններից դուրս է Ջավախքը համեմատել սփյուռքի այլ գաղթօջախների հետ կամ այն անվանել «վիրահայ համայնք»: Ջավախքը Լիբանանի Բուրջ Հանուդը չէ, այն ԱՄՆ-ի Գլենդեյլը չէ, այն ՌԴ Կրասնոդարի մարզը չէ, ոչ էլ Իրանի Նոր Ջուղան, այն պատմական հայրենիքի իմաստով՝ Նախիջևան, Արցախ ու Արևմտյան Հայաստան է: Այն արժեք, ռազմավարական գործելակերպ ու խոստումնալից ապագա պիտի լինի յուրաքանչյուր հայի համար:

Ելնելով վերոշարադրյալ մտքից՝ նույնկերպ անբարոյական է Ջավախի հայությանը, նմանեցնելով բազմաթիվ երկրների հայության հետ, մղել ինտեգրման (անգլ. թարգմանաբար՝ «ծուլում», «սերտաճում»): Այս միտքը ծագել է խնդրին անտեղյակ մարդկանց դատարկաբանությունների արդյունքում: 1829-1830 թվականներից լինելով Ցարական Ռուսաստանի տիրապետության տակ գտնվող վրացապատկան նահանգների (Թիֆլիս, Քութայիս), այնուհետև Խորհրդային ու նորանկախ Վրաստանների տիրապետությունների տակ՝ խնդրո առարկա տարածաշրջանի հայությունը կինտեգրվեց գրեթե մեկ մագաչափ: Ո՛չ: Ջավախքի հայությունը այս 180 տարիների ընթացքում ճշմարտացիաբար չի զգացել իրեն Վրաստանի կազ-


մում այնպես, ինչպես դրանից առաջ շուրջ 200 տարի չի «ինտեգրվել» Օսմանյան կայսրությանը:

Լինելով հայկական տարբեր պետականությունների կազմում՝ Ջավախքը 13-16-րդ դարերում ունեցել է իր գրեթե անկախ իշխանապետությունը, որի հիմնադիրները հայ մշակավոր սպարապետական տոհմի՝ Ջաքարյանների ներկայացուցիչներն էին, նստավայրը՝ Թմկա անառիկ բերդը: Ջավախքի՝ մինչ օրս «լարված օջախ», «թեժ գոտի», «բռնկվող անկյուն», «ապստամբական շրջան» լինելու հանգամանքները պարզապես հետևանք են վերջինիս՝ դեռ 16-րդ դարի վերջերին կորցած պետական ինքնիշխանության, և ապացույցը՝ այն վերականգնելու համար մղվող «անթեղված», բայց ամեն պահի արթնանալու պատրաստ պայքարի:

Ցավոք Խորհրդային տարիներին ձևավորվեց և մինչ օրս գերակայող է մի «ավանդույթ», ըստ որի՝ Ջավախքի բազմահազար հայեր իրենց գիտական, պետական-հասարակական, մշակութային լուծման լայնորեն ներդնում են հիմնականում ՀՀ-երևանում: Եթե առաջին հանրապետության տարիներին դա հասկանալի և ըմբռնելի էր, երբ պետական առաջին դեմքերը այս տարածաշրջանից էին և իրենց գործելակերպով Ջավախքը համարում էին Հայաստանի մաս, ապա Խորհրդային և մանավանդ ներկա պայմաններում Ջավախքում առկա «երևանյան» մտածելակերպը առնվազն կործանարար է վերջինիս համար: Հատուկ քաղաքականության առկայության պայմաններում ծագումով Ջավախքից, ներկայումս ՀՀ հասարակական-քաղաքական, գիտական, ուսանողական և մշակութային բնագավառի բազմահազար ներկայացուցիչներ կլքեն իրենց երևանյան տաքուկ գրասենյակները և կլծվեն Ջավախքի զարգացման գործին: Նրանք ներկայումս գիտակցաբար կամ անգիտակցաբար չեն գնում այդ քայլին, քանի որ քաղաքական պարտադրանքի բացակայությունը վերջիններիս մեջ դեռ չի ձևավորել այդպիսի կամային հատկություններ: Իսկ ազգային մտածելակերպի բացակայությունը, որպես չարաբաստիկ օրինակ, իր հերթին անխնա տարածվել է նաև Ջավախքում: Տարածաշրջանի բազմահազար ներկայացուցիչներ այսօր շենացնում են Ռուսաստանն ու այլ երկրներ և սեփական հայրենիք-ծննդավայրը սկսել են դիտարկել որպես կորսվող ուխտատեղի: Կործանարար է այսօր այն գործընթացը, որին լծվել են ՀՀ մի շարք հասարակական-քաղաքական և հատկապես ռուսաստանյան գործարար շրջանակների ներկայացուցիչներ: Դա սեփական հայրենիքից սեփական ժողովրդին էվակուացնելու գործընթացն է, երբ հերոսի կեցվածքով այս մարդիկ, լավ պայմաններ ստեղծելով ջավախք-

ցիների համար, վերջիններիս զանգվածաբար տեղափոխում են ՀՀ, Ռուսաստան և այլն: Այդպիսի «հերոսությունները» 1980-ականների և ադրբեջանացիներին Հյուսային Արցախը, երբ տեղի հայությանը դավաճանաբար տեղափոխեցին ՀՀ՝ իբրև ապահով վայր:

Կարելի է արդարացնել ժամանակին տարբեր կայսրություններ կամ քաղաքակրթություններ զարդարող պոլսահայերին, թիֆլիսահայերին, բաքվահայերին, ռուսաստանահայերին, եվրոպահայերին, պարսկահայերին ու ամերիկահայերին: Վերջիններս մեղավոր չէին այնքանով, որ չկար Հայոց պետականություն՝ սեփական հայրենիքում, ուստի անհովիվ ոչխարի նման անհետացան: Նրանցից մնաց միայն հոշոտված և հոշոտվող գերեզմանաքարերի կամ էլ օտար հողի վրա կառուցած եկեղեցիների և պալատների քարաբեկորներ: Այժմ կա աշխարհասփյուռ հայության հովիվը՝ Հայոց պետականությունը: Այժմ անբարոյական է պետական դրոշի տակ հայկական միասնական մտածելակերպի բացակայությունը:



Մանցիտ-Ջավախք-Ծալկա
տարածաշրջանն այսօր

դած վրացական տիրապետությունները երկարատև, սակայն, միևնույն է, ժամանակավոր երևույթներ են: Ջավախահայի մեջ անսասան է այն բնագրական մտածելակերպը, որ ինքն ապրում է Հայկական Լեռնաշխարհում՝ հայի պապենական հայրենիքում: Այդ բնագրը վերջինիս միջից 200 տարիների ընթացքում չի կարողացել ջնջել մուսուլմանական հզոր կրոնը, էլ ուր մնաց՝ վրացական առանց այդ էլ թույլ հոգևոր գործոնը: Ասվածիս վառ ապացույցը հետևյալն է. Թռեղքի լեռներից հյուսիս ապրող հայության ինտեգրումը կամ, որ նույնն է, ձուլումը տարիների խնդիր է: Այդպես ձուլվեցին Կախեթի հայերը, այդպես այսօր ձուլվում են Բորժոմի, Բակուրիանի, Խաշուրի, Թբիլիսիի, Գորիի և այլ վայրերի հայերը: Սա-

Ջավախահայության՝ Վրաստանին չինտեգրվելու, վրաց լեզվի և վրաց մշակույթի ազդեցությունը հարյուրավոր տարիներ չկրելու հանգամանքը ապացույցն է այն բանի, որ վերջիններիս համար, ինչպես նախկինում թուրքական, այնուհետև սրան հաջոր-

կայն նույն լեռներից հարավ՝ Ծալկայից մինչև Աջարիայի սահմանները բնակվող հայությանն անհնար է սովորեցնել վրացերենը, եթե անգամ վրացական և միջազգային կազմակերպությունները այդ գործում ներդրեն միլիոնավոր դոլարներ: Այստեղի հայությունը մտածում է նույն մարդու նման և նույն կերպ իրեն զգում իր հայրենիքում: Միևնույն է, Վրաստանը օտար է և չի ընկալվում այս միջավայրում այնպես, ինչպես դարերով հայ ժողովուրդը չի ընկալել հռոմեացու, բյուզանդացու, պարսիկի, մոնղոլ-թաթարի կամ օսմանացու տիրապետությունը: Ծիծաղելի կլիներ, եթե, օրինակ, գտնվելով Օսմանյան կայսրության պետականության կազմում, արևմտահայերը մեղադրվեին օսմանյան ցեղերի միջավայր չինտեգրվելու մեջ: Ավելի ճիշտ՝ դրանում այսօր մեղադրվում են արևմտահայերը, և որը դիտվում է վերջիններիս ոչնչացման պատճառ: Բայց այդ մեղադրանքը ներկայացվում է... պաշտոնական Թուրքիայի կողմից: Այսօր ջավախահայերին չինտեգրվելու մեջ մեղադրող բոլոր շրջանակները վարվում են նույն կերպ, ինչպես ցեղասպանված արևմտահայերի մասին խոսում է Թուրքիան:



Թմկա անտիկ բերդը Ջավախքում

մանյան կայսրությունը, Ցարական Ռուսաստանը կամ Վրաստան պետության այս կամ այն տեսակը: Այս առումով բնորոշ են Ջավախքի մեծ բանաստեղծի՝ Վահան Տերյանի տողերը.

Բարբարոսներ շատ կգան ու կանցնեն անհետ,
Արքայական խոսքը մեր կմնա հավետ...

Ծաղիկը քնքուշ է այնքան ժամանակ, քանի դեռ գտնվում է հուսալի տիրոջ ձեռքերում, երբ այն դառնում է անպաշտպան, և երբ վտանգված է նրա գոյությունը, այն վերածվում է փշի: Ջավախքն, իրավամբ, այսօր նման է փշակալած ծաղկի: Այն տիպի է Վրաստանի համար, քանի դեռ հայկական է: Ցավոք, այն փուշ է նաև ՀՀ որոշ շրջանակների համար, քանի որ այդ շրջանակներն իրականում տեր չեն զգում այդ տարածաշրջանին և վերջինիս մատնել են բախտի քմահաճույքին:

Կարճամիտները շահարկում են այն մտածելակերպը, թե պետք չէ լացուկոծ անել, քանի որ ծանր վիճակն առկա է նաև ՀՀ տարբեր մարզերում, և հնարավոր չէ ՀՀ-ն թողած՝ բեռներով ոսկի տանել Ջավախք: Այդ մարդկանց պետք է հիշեցնել մի պարզ միտք. եթե հայը լքում է Լոռին, ապա դրանով ինչ-որ տեղ չի հայազրկվում հողը, այն կարող է դարձյալ հայկական լինել, ասենք՝ քսան կամ հիսուն տարի անց, քանի որ այստեղ առկա է հայկական պետականությունը: Իսկ Ջավախքը լքող ամեն հայի տեղը լրացվում է վրացա-թուրքական տարրով, ինչը խոսում է այս տարածքների հայրենագրկման կամ «նախիջևանացման» մասին: Տարբերությունը այս չէ միայն: Այս տարածքներով է «շնչում» այսօրվա ՀՀ-ն: Մեկ նախադասությամբ ասած՝ Ջավախքի հայաթափությանը հակադարձ՝ մեծանալու է Հայաստանի Հանրապետության կոկորդի խոխոռոցը:

Տարբեր ազգությունների հայրենիքների սահմանները գծվել են երբեմնի կամ ներկա հզոր քաղաքական շահերի բախման միջավայրում: Այս գիրքը, որպես Հայոց պատմության շարունակական շղթա, կրկին ապացուցում է ճշմարտությունն այն մասին, որ հայ ազգը հարատև է իր բնական սահմաններում, և այդ սահմաններն անհնար է փոփոխել: Մեծ կամ փոքր քաղաքականությունների ցանկացած հաջողություն «այդ ոլորտում» խիստ ժամանակավոր է:

Վրաստանի էթնոժողովրդագրական քաղաքականությունը երկրի քարթվեական և ոչ քարթվեական ժողովուրդների նկատմամբ¹

*Էդուարդ Աբրահամյան
պատմական գիտությունների թեկնածու*


Տարիներ շարունակ էթնիկ քաղաքականությունը, որպես Վրաստանի արտաքին քաղաքական գործընթացների անբախտելի մաս, միշտ գտնվել է փոխակերպման գործընթացում: Այսօր ակնհայտ է դառնում, որ չնայած որոշ մեթոդոլոգիական հիմունքների ամբողջական փոփոխության, Վրաստանի վերջնական նպատակը էթնիկ քաղաքականության պլանում ծուլման ճանապարհով էթնիկ փոքրամասնությունների ամբողջական դուրսմղումն է և վրացականացումը:

Էթնիկ քաղաքականության մեթոդների ներմուծումը ազգային փոքրամասնությունների նկատմամբ հաճախ խիստ տարբերվում են միմյանցից, սակայն հետապնդում են միևնույն նպատակը՝ վրացականացում կամ, ինչպես ընդունված է այն անվանել միջազգային պրակտիկայում, էթնոմշակութային ծուլում պետության ողջ սոցիոմին: Էթնիկ քաղաքականության եվրոպական տեսության մեջ դրվում է մի քանի խնդիր, համաձայն որոնց՝ էթնիկ խումբը, որն ապրում է պետության կազմում, որտեղ նա ազգային փոքրամասնություն է կազմում, մշակութային և տարածքային ինքնավարության իրավունք ունի, բայց միաժամանակ պարտավոր է մասնակցել պետության կառուցման և զարգացման բոլոր ոլորտներին: Միևնույն ժամանակ արևմտյան շատ երկրներում ծուլման գործընթացները միանգամայն բնական երևույթ են, իսկ որոշ տեղերում՝ նաև նորմալ երևույթ, որը տեղի է ունենում ազգային փոքրամասնությունների էթնոմշակութային ծուլման վերջնական փուլում:

Վրացական իրականության մեջ սոցիոմշակութային ծուլման գործընթացները տեղի են ունենում յուրահատուկ ձևով: Թբիլիսյան ղեկավարության էթնիկ քաղաքականությունը, փաստորեն, ունի երկու ուղղվածություն՝ մահմեդական և քրիստոնեական ժողովուրդների նկատմամբ վարած քաղաքականություն:

¹ Հոդվածը հայերեն և ռուսերեն տարբերակներով հրատարակվել է նաև լրատվական-վերլուծական մի շարք կայքէջերում:

Եթե քրիստոնեություն դավանող էթնիկ փոքրամասնությունների նկատմամբ Վրաստանը վարում է սոցիոնշակութային ծուլման աստիճանական քաղաքականություն՝ սեփական էթնոնշակութային նախաձեռնությունների և սովորույթների մոռացության ճանապարհով, ապա մահմեդականների նկատմամբ հաճախ իրականացվում է ուղղակի ճնշման քաղաքականություն: Նման քաղաքականությունը նպատակ է հետապնդում մուսուլման փոքրամասնությունների համար տնտեսական և կոմունիկացիոն դժվարություններ ստեղծել:



լու: Չնայած այս ամենին՝ ամեն ինչ չէ, որ այսպես կատեգորիկ է: Վրաստանի էթնիկ քաղաքականության մեջ մահմեդական փոքրամասնությունների նկատմամբ տարվում է նաև անհամասեռ քաղաքականություն: Եթե ադրբեջանական փոքրամասնությանը վրացական ղեկավարությունը ամբողջապես անտագոնիկ է տրամադրված՝ փորձելով ինչ-որ ձևով պակասեցնել նրանց քանակը երկրում, ապա աջարներին համարում է էթնիկ վրացիներ և փորձում է նրանց սփռել ամբողջ երկրով մեկ՝ ավելի արագ ուղղափառացման և վրացականացման համար: Այս գործընթացները արդեն կիզակետային փուլում են:

Աջարների ակտիվ բնակեցում է տեղի ունենում այն շրջաններում, որտեղ համապարփակ կերպով ապրում են էթնո-դավանաբա-

նական փոքրամասնություններ, որոնց վրացիները չեն համարում էթնիկ վրացիներ: Այսպիսով, գտնվելով ոչ քարթվելական ժողովուրդների շրջապատում, աջարների մոտ ուղղափառացման և վրացականացման գործընթացները ավելի ակտիվ են ընթանում, քան եթե նրանք ապրեին Կախեթում կամ Իմերեթիում: Գտնվելով մի ժողովրդի շրջապատում, որի վեկտորային էթնոդավանաբանական զարգացումը կապվում է ոչ թե Վրաստանի, այլ հարևան պետությունների հետ՝ աջարները նրանց հետ կապերում իրենց նույնացնում են վրացիների հետ: Միաժամանակ իրենք՝ աջարները, երկրի ադրբեջանցիների և հայերի համար դիտվում են որպես վրացիներ, այլ ոչ թե առանձին էթնոդավանաբանական հասարակություն:

Այսպիսով՝ Սամցխե-Չավախք-Ծավկա տարածաշրջանում (հայաբնակ) և Քվեմո-Քարթլիում (ադրբեջանաբնակ) իրականացվում է, այսպես կոչված, էթնիկ վրացիների (աջարներ և սվաններ) պարբերական բնակեցում, որոնց թվաքանակը յուրաքանչյուր շրջանում կազմում է 3-4 հազ. մարդ: Վրացական իսթեբլիշմենթը, իրականացնելով վերաբնակեցման քաղաքականություն աջարների նկատմամբ, ելնում է ոչ միայն ակտիվ վրացականացման պատկերացումներից, այլև վերջին հերթին խնդիր է դրվում նվազեցնել թուրքիայի ազդեցությունը Աջարիայում: Չնայած այն բանին, որ թուրքիան Վրաստանի կարևորագույն դաշնակիցն է, Թբիլիսին չցանկանալով և անվստահությամբ է ընդունում թուրքական էթնոկոմունական քաղաքականությունը Վրաստանում: Միաժամանակ Անդրկովկասի և Հյուսիսային Կովկասի, այսպես կոչված, թուրքական նախազծերում Թբիլիսին թուրքիայի համար գլխավոր միջնորդն ու դաշնակիցն է, հատկապես տարածաշրջանում Մոսկվայի ազդեցության թուլացման գործում:

Վրաստանի աջարների և թուրք-ադրբեջանցիների համար թուրքիան երկար տարիների ընթացքում հանդիսացել է անվտանգության երաշխավոր և «մեծ եղբայր է եղել»: Աջարիայում Ասլան Աբաշիձեի ղեկավարման տարիներին թուրքիան ոչ միայն խոշոր չափերով ներդրումներ էր անում, այլև նպաստում էր շրջանի թուրքացմանը՝ աջարների մահմեդական իդենտիֆիկացիայի բարձրացման ճանապարհով: Իսկ հիմա վրացական ղեկավարության օրակարգում խնդիր է դրված վերացնել աջարական ինքնավարությունը, որպեսզի իրավական պլանում նվազեցնի քաղաքական ինքնավարման կամ էլ տարածքի բաժանման հավանականությունը: Այս ասպեկտում Վրաստանի ղեկավարությանը խանգարում է Հարավային Օսեթիայի և Աբխազիայի արտաքին քաղաքական իրավիճակը, ո-

րոնց խոստանում էին տարածքային-քաղաքական լայն ինքնավարություն երկրի կազմում, և Աջարիայի լուծարումը բացասաբար կազդի դրա վրա:

Էթնիկ փոքրամասնությունների դուրսնղման քաղաքականության հիմունքները ստեղծել է Վրաստանի՝ ազգայնական տրամադրվածություն ունեցող առաջնորդ Ջվիադ Գամսախուրդիան 1990-1992 թթ.: Երկրից Կախեթի օսերին, ռուսներին, հույներին և ավարներին դուրս մղելու հաջող փորձերը ներկայումս գտնվում են ակտիվացման փուլում՝ հաշվի առնելով վերջին շրջանում Վրաստանի արտաքին և ներքին քաղաքականության մեջ ազգայնականության աճը: Հարկ է նշել, որ ազգայնականության ժայթքումը երկրի քաղաքականության մեջ չի կրում համախմբված բնույթ, այլ նպատակ է հետապնդում նվազեցնել Ռուսաստանի և նրա դաշնակիցների ազդեցությունը Ռուսաստանում՝ զուգահեռաբար հզորացնելով սեփական պետությունը երկրի առավելագույն վրացականացման և մոնոէթնիկացիայի ճանապարհով՝ մինչև արևմտյան ռազմաքաղաքական կազմակերպություններ մտնելը:

Այսօր Վրաստանի էթնիկ մահնեղականներին դուրս մղելու գործընթացները իրականացվում են ադրբեջանցիների, քիստիցիների և ավարների նկատմամբ: Էթնիկ փոքրամասնություն կազմող քրիստոնյաների նկատմամբ աստիճանական դուրսնղումը իրականացվում է հայերի վերաբերյալ: Եթե ավարների և ադրբեջանցիների նկատմամբ Կախեթում հարուցում են տնտեսական դժվարություններ, ապա Սամցխե-Ջավախք-Ծալկայի հայերի, Քվեմո-Քարթլիի ադրբեջանցիների և Ախմետի շրջանի քիստիցիների նկատմամբ դուրսնղման քաղաքականությունը իրականացվում է պարբերական սպանությունների ուղով, որն իր հերթին երկրում անապահովության նթնդրոտ է ստեղծում: Միաժամանակ կատարվում է, այսպես կոչված, էթնիկ վրացի-աջարների, իսկ որոշ ժամանակ անց նախատեսվում է նաև թուրք-մեսխեթցիների զանգվածային բնակեցում: Հայերի և ադրբեջանցիների վերաբերյալ վրացական իշխանությունների հիմնական խնդիրներից մեկը վրացական անկլավներում և այլ մեծ բնակավայրերում նրանց համախումբ բնակության վայրեր ստեղծելն էր, որոնք, որպես օրենք, տեղակայված էին ռազմավարական նշանակություն ունեցող ճանապարհների և բարձրությունների վրա:

Այսօր էթնիկ տարածքները վրացիներով բնակեցնելու փորձերի ժամանակ թբիլիսյան իսթերիչմենթը իր առաջնային խնդիրն է համարում աջարների, սվանների, վրացիների բնակեցումը այն բնակավայրերում, որոնք գտնվում են գլխավոր ավտոմայրուղիների

մոտ, ֆիզիկական առանձնացման դեր են խաղում շրջանների միջև, որտեղ բնակվում են այս կամ այն էթնիկ փոքրամասնությունները: Սրա վառ օրինակը կարող է հանդիսանալ վրացական քաղաքականությունը հայաբնակ Սամցխե-Ջավախք-Ծալկա տարածաշրջանի Նինոծմինդայի շրջանի ռուս դուխոբորների բնակավայրերի նկատմամբ: Որոշ բնակավայրերից ռուսների ակտիվ միգրացիայի ֆոնի վրա վրացական ղեկավարությունը փորձում է դրանք վերաբնակեցնել թուրք-մեսխեթցիներով, որոնց կոչում են «էթնիկ վրացիներ», ինչով և ֆիզիկապես փորձում են զատել Սամցխե-Ջավախք-Ծալկան ԳԳ-ից: Միաժամանակ էթնիկ հայերի համար ստեղծում են տարբեր խոչընդոտներ, որոնք ցանկություն են հայտնում ձեռք բերել ռուս դուխոբորների տները: Իր հերթին թբիլիսին հայերի նկատմամբ վարում է անգամ ակտիվ ծուլման քաղաքականություն՝ եկեղեցիների, դպրոցների, մշակութային կենտրոնների աստիճանական վրացականացման, ինչպես նաև խառնամուսնությունների խթանմամբ, ինչը կարելի է տեսնել Ախալցխայում և Թբիլիսիում:

Իսկ ինչ վերաբերում է ադրբեջանցիների իրավիճակին, ապա Ս.-Սահակաշվիլիի՝ իշխանության գալուց հետո Քվեմո-Քարթլիում այն ավելի է վատացել: Բան այն է, որ ադրբեջանցիների հանդեպ Վրաստանի էթնիկ քաղաքականության մեջ գործում է դուրսնղման ստանդարտ տարբերակը՝ տնտեսական անտանելի պայմաններ ստեղծելու ճանապարհով: Անհերքելի փաստ է հողային նոր բաժանումը, որի արդյունքում փաստորեն Քվեմո-Քարթլիում ողջ հողը տրվել է վրացի-վարձատուներին և ընդամենը նրա մի փոքր մասնիկն է բաժանված մնացած ադրբեջանցի բնակիչներին: Սրա արդյունքում արդեն տասնյակ հազարավոր ադրբեջանցիներ լքել են Վրաստանը և արտագաղթել Ադրբեջան, որտեղ ղեկավարությունը նրանց բնակեցնում է երկրի ավարաբնակ և լեզգիաբնակ վայրերում: Ինչպես տեսնում ենք, Վրաստանի նման դիրքորոշումը կարելի է բնութագրել որպես «քաղաքակիրթ դեպորտացիա»: Միաժամանակ թբիլիսին պլանավորում է այս բնակավայրերը բնակեցնել թուրք-մեսխեթցիներով, որնց հիմնական մասը իր տնտեսական, էթնոմշակութային և քաղաքական զարգացումը կապում է ինչպես Թուրքիայի, այնպես էլ Ադրբեջանի հետ:

Բազմանշանակ է երկրի օսերի նկատմամբ վարած քաղաքականությունը. որոշ դեպքերում նրանց պարզապես ստիպում են լքել երկիրը, բայց մյուս վայրերում, օրինակ՝ Թբիլիսիում, օսական միությունները օգտագործում են «վրաց-օսական անքակտելի բարեկամությունը» պրոպագանդելու համար: Իրականում Վրաստանի

եզակի էթնիկ փոքրամասնությունները, որ որոշ չափով չեն ենթարկվում խտրականության, կարելի համարել քրդերին և հրեաներին, որոնց թվաքանակը 1989 թվականի համեմատությամբ կրկնակի չափով նվազել է:

Վրաստանը յուրահատուկ քաղաքականություն է վարում վայնախական փոքրամասնության նկատմամբ, որ բնակվում է Կախեթի և Ախմետի շրջաններում: Ե.Շևարձնաձեի իշխանության տարիներին Վրաստանի վայնախական ժողովուրդները՝ չեչեններ-քիստինցիները և բացբիյցները, օգտագործվում էին Ռուսաստանի դեմ կրոնական ծայրահեղականության արտահանման համար: Այսօր բացբիյցները գտնվում են լիակատար ասսիմիլյացիայի և վրացականացման փուլում, իսկ քիստինցիները իրենց հերթին վտանգ են դարձել Վրաստանից նոր բաժանման համար: Միաժամանակ Վրաստանն իր անդրկուլիսյան քաղաքականության մեջ ամեն կերպ փորձում է պահել թշնամությունը մի կողմից՝ ինգուլչների և օսերի, մյուս կողմից՝ չեչենների և ավարների միջև՝ հանդիսանալով Կովկասում թուրքական և արևմտյան շահերի հենակետ, որոնց հիմնական խնդիրը ռուսական քաղաքականության թուլացումն է՝ Դյուսիսային Կովկասում միջէթնիկական կոնֆլիկտների ստեղծման ճանապարհով:

Ինչպիսի՞նք կարող են լինել կարճաժամկետ և երկարաժամկետ հեռանկարների հնարավոր զարգացումները:

Ակնհայտ է մի բան. Վրաստանի փոքր ժողովուրդները գտնվում են ծանր կացության մեջ և որոշ ժամանակի ընթացքում նրանք ամբողջապես կվերանան երկրի դեմոգրաֆիկ քարտեզից: Սամցխե-Ջավախք-Օալկայի հարցը նույնպես սուր է դրված, սակայն ի տարբերություն Երևանի՝ թբիլիսին ակնհայտորեն փորձում է լուծել այս հարցը շրջանից հայերի մասնակի դուրսնղման և ամբողջական վրացականացման ուղով:

Քվեմո-Քարթլիի ադրբեջանցիների հարցում վրացական ղեկավարությունը կանգ չի առնի, մինչև ամբողջությամբ չվտարի այդ էթնիկական տարրը երկրից, միակ բանը, որ դեռ փրկում է Քվեմո-Քարթլին դեթնիզացիայից, համեմատաբար բարձր ծնելիությունն է: Բացի այդ՝ վրացական կողմը պարբերաբար կխաղարկի «ինգիլոյան քարտեզը», որի համար նա արդեն 12 տարի հող է նախապատրաստում: Ինչպես հայտնի է, Ջաքաթալայի և Կախեթի շրջաններում էթնիկ վրացիներ են բնակվում, որոնց թբիլիսին աջակցում և զարգացնում է հնարավորության սահմաններում: Ակնհայտ է, որ Վրաստանի ղեկավարությունը, ի տարբերություն Սամցխե-Ջավախք-

Օալկայի հայերի, Քվեմո-Քարթլիի հարցում հասկանում է, որ այդպես հեշտորեն դուրս մղել և ձուլել աճող ադրբեջանական բնակչությանը չի կարող, և Ադրբեջանում վրացական սոցիում ստեղծելու փորձը, ի դեմս ինգիլոյների, նպատակ ունի հետագայում տարածքների փոխանակում կատարել, եթե ադրբեջանական փոքրամասնությունը հանկարծ փորձի ակտիվաճալ տարածաշրջանից անջատվելու ճանապարհով:

Իհարկե, շատ խնդիրների ժամանակավոր լուծում կարող է դառնալ շրջանների տարածքային ինքնավարությունը երկրի դաշնայնացման ճանապարհով, բայց ելնելով ինքնավար ձևավորումների նկատմամբ բացասական վերաբերմունքից ինչպես շարքային վրացիների, այնպես էլ երկրի իշխանությունների կողմից՝ դաշնայնացման պահանջները չեն կարող արդյունավետ լինել: Ավելին, ոչ վրացական երկրների արտագաղթը ամեն տարի ավելանում է, իսկ այն տարածքները, որ նրանք զբաղեցնում են, ենթարկվում են մասնակի դեմոգրաֆիկ փոփոխությունների: Միջին ժամկետի հեռանկարում, եթե Վրաստանում էթնոկրոնական գործընթացները շարունակվեն նման տեմպերով, Սամցխե-Ջավախք-Օալկա և Քվեմո-Քարթլի սուբյեկտները չեն առանձնանա Վրաստանի մյուս շրջաններից գրեթե ոչնչով, իսկ մնացած ոչ վրացական բնակչությունը ամբողջությամբ կծուլվի վրացական հասարակությանը՝ կորցնելով սեփական էթնոմշակութային և ինչ-որ չափով նաև քաղաքական ինքնությունը:

Վերջին շրջանում մամուլում և տարբեր ՁԼՍ-ների վերլուծական նյութերում հաճախ է խոսվում Քվեմո-Քարթլիի (ադրբեջանաբնակ շրջան) և Սամցխե-Ջավախք-Օալկայի (հայաբնակ շրջան) դեմոգրաֆիկ իրավիճակի փոփոխությունների մասին, սակայն միաժամանակ բաց է թողնվում կարևոր և այսօրվա դրությամբ խիստ արդիական մի հարց՝ Վրաստանի էթնիկ քաղաքականության հարցը քարթվելական ժողովուրդների նկատմամբ: Անկախությունից սկսած և մինչև վերջին ժամանակներս Վրաստանում ընթանում են պետական փլուզման գործընթացներ ոչ միայն ազգային, այլև ցեղային հիմքի վրա: Մի կողմից՝ մետրոպոլիայի, մյուս կողմից՝ մենգրելների, սվանների, աջարների միջև փոխհարաբերությունները էթնոմշակութային անտագոնիզմի երկար պատմություն ունեն, որտեղ մեծ դեր են խաղում նաև տնտեսական և աշխարհագրական գործոնները:

Սվանները, ինչպես և մենգրելները, քարթվելալեզու ժողովուրդներ են, սակայն ի տարբերություն թբիլիսիի, Գորիի և Քութայիսի վրացիների՝ մենգրելները և սվանները ծայրահեղ տարբերություն-

ներ ունեն ոչ միայն մշակութային և արհեստագործական, այլև՝ լեզվական մակարդակում: Բնակվելով աշխարհագրական տեսանկյունից դժվարամատչելի վայրերում՝ մենգրեյների և սվանների մոտ էթնոգենեզը, ինչպես նաև հասարակության զարգացումը, տեղի էր ունենում մյուս վրացիներից զատ, որի արդյունքում անտիկ և վաղ միջնադարյան շրջանում Կովկասում կարելի էր տեսնել քարթվելական երեք տարբեր պետություններ, որոնք միջոցառումներով քաղաքականություն էին վարում միմյանց նկատմամբ: Բազմադարյան էթնոքաղաքական զարգացման արդյունքում սվանների, մենգրեյների և աջարների աշխարհայացքը սկսեց զարգանալ վրացիներից զատ: Այս ժողովուրդները առանձնանում էին վրացիներից այն աստիճան, որ 19-րդ դարում՝ ռուսական տարածքում վրացական սոցիոմի գարգացման շրջանում, մենգրեյները և սվանները, ինչպես նաև աջարները չէին համարվում վրացական ժողովուրդներ, այլ համարվում էին առանձին ժողովուրդ ինչպես թբիլիսիի և Կախեթի վրացիների, այնպես էլ կովկասյան տարածաշրջանի ոչ քարթվելական ժողովուրդների համար:

Աջարական էթնոգենեզը արմատապես տարբերվում է մենգրեյների և սվանների զարգացումից: Կա մի տեսություն, որ ներկայիս աջարները քարթվելալեզու կոլխիդա ցեղի սերունդներն են, որոնք, ունենալով համավրացական թույլ ինքնագիտակցություն, Վրաստանի հիմնական մասի՝ Օսմանյան կայսրության կազմի մեջ մտնելուց հետո ընդունեցին սուննի մահմեդականություն և օսմանյան դեկավարության ձեռքում դարձան հակաքրիստոնեական քաղաքականության գործիք: Ազատվելով երկակի ինքնագիտակցությունից և, փաստորեն, ունենալով թուրքական աշխարհայացք՝ աջարները ակտիվորեն սկսեցին օգտագործվել վրացական ապստամբությունները ճնշելու և Կովկասյան լեռնաշղթայի հարավային լեռներում վրացական իշխանությունների կղզյակների դեմ Օսմանյան կայսրության պայքարում:

Խորհրդային շրջանում Վրաստանում բոլշևիկյան դեկավարությունը իր դիրքորոշումը չփոխեց աջարների նկատմամբ, որի հիմնադիրները մենշևիկ դեկավարներն էին: Դեմոգրաֆիկ պլանում լինելով ակտիվ աճող սուբէթնոս՝ աջարները վրացական ինքնանույնացման և քրիստոնեության ընդունման համար սկսեցին Աջարիայի համախումբ բնակավայրերից տեղափոխվել Վրացական ՍՍՀ-ի խորքերը, որը հասկանալի պատճառներով չէր կարող չափանալուց հեռանալ թուրքիային: ԽՍՀՄ փլուզումից հետո՝ Է.Շևարձնաձեի իշխանության շրջանում, տարածաշրջանը դե-ֆակտո ինքնուրույն էր և

անգամ մինչև «վարդերի հեղափոխությունը» տարածաշրջանում տիրում էր մուսուլմանական էլիտայի համար գրավիչ և Ասլան Աբաշիձեի կողմից ներծծված Աջարական իսլամական հանրապետություն ստեղծելու միկրոկլիմա: Պաշտոնական Անկարան առաջին լավ հնարավորություններ ունի համատեղ օգտագործել աջարական գործուն, ինչպես նաև թուրքամետ դիրքորոշում ունեցող բնակչությանը ամբողջապես: Բացի այդ՝ Թուրքիան ակտիվ կերպով քաղաքական խաղի մեջ է մտցրել մեսիսթական քարտեզը: Սրանով թուրքական դեկավարությունը ոչ միայն ֆիզիկապես առանձնացնում է հայերին արտաքին աշխարհից, այլև կհասնի թբիլիսիի քաղաքականությունը թուլացնելու իր նպատակին, որը փորձում է ինտեգրել աջարական սուբէթնոսը վրացական հասարակությանը:

Այսպիսով՝ Աջարիայի հարևան շրջանները թուրք-մեսիսթիզմներով բնակեցնելը նկատելիորեն կկանգնեցնի աջարների վրացականացման գործընթացները, քանի որ մեսիսթի թուրքերի համախումբ բնակեցումը, որոնք կրոնով և մտածելակերպով, ինչպես նաև սեփական աշխարհայացքով նման են աջարներին, լայն հնարավորություններ կստեղծեն Վրաստանի մահմեդականների անջատ զարգացման համար, կամրապնդվի թուրքական միկրոկլիման՝ ինչպես Քվեմո-Քարթլիում:

Վրաստանի քաղաքականությունը աջարների հանդեպ հստակ նախագծված է և առնչվում է զարգացող վրացական պետականության բոլոր ոլորտներին: Այս քաղաքականությունը կյանքի է կոչվում ինչպես հասարակությունում, այնպես էլ բանակում, կրթական համակարգում, կրոնական գործընթացներում: Թբիլիսիի հետևողական քաղաքականությունը հանգեցնում է աջարական սոցիոմի ինտենսիվ տրանսֆորմացիայի՝ մինչև լիակատար վրացականացում, որն այսօր գտնվում է կիզակետում:

Վրացական իսթերիչմենթի էթնոկրոնական քաղաքականությունը աջարների նկատմամբ երկու ուղղություն ունի.:

1. Ամմիջապես աջարական ինքնավարության կազմում աստիճանական վրացականացման գործընթաց:

2. Ինքնավարությունից աջարների աստիճանական դուրսմղման քաղաքականությունը Աջարիայի որոշ շրջաններում «նստվածքների» պատճառով և աջարների վերաբնակեցումը Վրաստանում հայերի և ադրբեջանցիների կոմպակտ բնակավայրերում:

Վերջին 15 տարիների ընթացքում Աջարիայում կտրուկ նվազել է աջարների թվաքանակը և համապատասխանաբար աճել է վրացական բնակչության թվաքանակը, որոնք մեծամասամբ ժամանում են

Աղիգենից, Քութայիսից, Գորիից և Ջուզղիդիից (մենգրելներ): Բացի այդ՝ Մ. Սահակաշվիլու՝ իշխանության գալուց հետո Աջարիայում սկսվեց եկեղեցիների և ժամատների շինարարության բում, իսկ Պատրիարք-Կաթողիկոս Իլյա 2-րդը դարձավ ինքնավարության հաճախակի հյուրը: Միաժամանակ հեռուստատեսությունը և ռադիոն դադարեցրեցին բոլոր հեռարձակումները, որոնք պատմում էին մահմեդական կրոնի մասին, և նոր հաղորդաշար սկսվեց «Ajaria TV»-ով, որտեղ պատմվում էր աշխարհի բոլոր կրոնների մասին: Աջարական հասարակությունը աստիճանաբար սկսում է տոնել նաև քրիստոնեական տոներ, որոնք Վրաստանում ներկայացվում են որպես ազգային:



Քարտեզի հեղինակ՝ Գ. Մ. Բաղալյան

1989 թվականից սկսած Աջարիայում սկսվեց բնակչության ակտիվ քրիստոնեացում, իսկ 2002 թվականից գործընթացը կրկնակի թափ ստացավ: Վրացալեզու մահմեդական բնակչության քրիստոնեացմանը նպաստեց նաև տեղական օրենսդիր մարմինը, որը անուղղակի կերպով ստիպում էր երիտասարդ մուսուլման աջարներին վերադառնալ իրենց քրիստոնեական արմատներին՝ դեմոկրատացման և լիբերալացման ճանապարհով: Այս տեսկետից վրացականացման և քրիստոնեացման գործում մեծ դեր են խաղում նաև Աջարիայում անցկացվող դպրոցական բարեփոխումները: Բացի այդ՝ զբոսաշրջային բնագավառների զարգացումը և կապիտալի ներդրումների ակտիվացումը խթան հանդիսացան երկրի մյուս շրջաններից այս շրջան բնակչության միգրացիայի համար: Ունենալով բարձրագույն կրթություն՝ նրանք հիմնականում աջարներին մղում

են դեպի առավելապես ծառայողական ոլորտի ավելի ցածր աստիճաններ: Սա կասեցնում է աջարական հասարակության ինքնավարացումը և հիմնականում դառնում է նրա էլիտայի՝ արտասահման արտագաղթի պատճառ:

Այսօր Աջարիայում էթնոշակութային մթնոլորտը այնպիսին է, որ քրիստոնյա վրացիները, որոնք ինքնավարության վարչական ղեկավարության մեջ ունեն որոշակի տեղ, նպաստում են մի իրավիճակի կայացման, երբ աջար մահմեդականը համարվում է գրեթե երկրորդ տեսակի մարդ: Սա աջարին ստիպում է դառնալ լիիրավ վրացի, այսինքն՝ քրիստոնյա, մոռանալ իր բարբառը և դառնալ սոցիոմի լիիրավ անդամ: Ինքնավարության էթնիկ աջարները մոտ 180-200.000 մարդ են, բայց նրանց թվաքանակը աստիճանաբար նվազում է: Բացի այդ, եթե 1991 թվականի տվյալներով մահմեդական աջարների թվաքանակը ինքնավարությունում ամբողջ բնակչության 70 տոկոսն էր կազմում, ապա Աջարիայի Ինքնավար Հանրապետության վիճակագրական ղեկարտամենտի տվյալներով 2006 թվականի վերջին տարածաշրջանում մնացել էին ընդամենը 30 տոկոս մահմեդական և 63 տոկոս քրիստոնյա վրացիներ: Վրացական էթնոկրոնական քաղաքականության ուղղվածությունը աջարների նկատմամբ կայանում է նրանց դեպի քաղաքականապես այնպիսի անբարենպաստ շրջաններ դուրսմղման մեջ, ինչպիսիք են Սամցխե-Ջավախք-Ծալկան և Քվեմո-Քարթլին: Չնայած այն բանին, որ Վրաստանի ղեկավարության՝ հայաբնակ և ադրբեջանաբնակ շրջանները նոսրացնելու պլանները մշակվում էին դեռևս 90-ականներին, սակայն աջարների վերաբնակեցումը Սամցխե-Ջավախք-Ծալկայում և Քվեմո-Քարթլիում ակտիվ կերպով սկսեցին միայն 2002-2003 թվականներին: Քվեմո-Քարթլիում էներգատրանսպորտային կոմունիկացիաների շինարարության սկզբի հետ երկրի ղեկավարությունը ակտիվ կերպով որպես աշխատուժ օգտագործում էր աջարներին, որոնց համար Քվեմո-Քարթլիի տարբեր շրջաններում տներ էին ձեռք բերում:

Յուրահատուկ ուշադրություն է պետք դարձնել Քվեմո-Քարթլիի հայաբնակ շրջանում՝ Ծալկայում էթնիկ գործընթացների զարգացմանը: Այստեղ վրացալեզու բնակչության թվաքանակը Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի կառուցման շրջանում աճել է 3 անգամ և կազմում է ավելի քան 8000 մարդ, մինչդեռ 2002 թվականին վրացիների թվաքանակը կազմում էր մոտ 2500 մարդ: Վրացալեզու էթնիկ տարրի ակտիվ արտագաղթի համայնապատկերում հայկական բնակչությունը շարունակում է լքել տարածաշրջանը, և նման մի-

տունի շարունակվելու դեպքում արդեն մի քանի տարի հետո Ծալկայում վրացիները մեծամասնություն կկազմեն: Ելնելով այն բանից, որ հունական բնակչությունը գրեթե ամբողջովին լքել է տարածաշրջանը և բնակություն է հաստատել Հունաստանում՝ ամբողջական բնակավայրեր թողնելով լքված, նոր աջար եկվորները պարզապես ներխուժել են և բնակություն հաստատել տներում:

Սամցխե-Ջավախք-Ծալկան վրացալեզու ժողովուրդներով բնակեցնելու թուրքական ղեկավարության քաղաքականությունը առաջ տանելու նպատակով բարենպաստ պայմաններ են ստեղծվում Ադիգենի շրջանից վրացիների արտագաղթի համար դեպի Ախալցխա: Իր հերթին, թույլ չտալով ձեռք բերել դուխոբորների լքված տները Նինոսմինդայի երեք շրջաններում, վրացական ղեկավարությունը արհեստական կերպով առանձնացնում է հայաբնակ շրջանը ՀՀ-ից՝ սահմանամերձ շրջաններում դուխոբոր աջարների և թուրք-մեսխեթցիների վերաբնակեցման ճանապարհով:

Այս տարի վրացական ղեկավարությունը ձեռնարկեց Աջարիայից դուրս եկող գլխավոր ավտոմայրուղիների հիմնավոր վերանորոգմանը: Ծրագիրը իրականացվում է արևմտյան դոնորների օժանդակությամբ, իսկ երկրի ղեկավարությունը արդեն նշել է շրջանները, որտեղ ավտոճանապարհների մայրուղիները չեն վերականգնվելու նման շրջանների մեջ են մտնում այն բնակավայրերը, որտեղ ապրում են հայերը: Նոր ավտոմայրուղիները պետք է անցնեն հիմնականում վրացաբնակ բնակավայրերով՝ նպատակ ունենալով կոմունիկացիոն առումով առանձնացնել հայերին:

Ադրբեջանաբնակ Քվեմո-Քարթլի տարածաշրջանում Վրաստանի իշխանությունները յուրահատուկ քաղաքականություն են իրականացնում, որը հիմնված է բնակչների մեղմ դուրսմղման վրա՝ գյուղատնտեսական բնագավառում թուրքալեզու բնակչությանը «սեղմելու» ճանապարհով: Արտավայրերը տարածաշրջանի բնակչությանը վերաբաժանելիս վրացիներին իշխանությունները տրամադրեցին երկու- երեք անգամ ավելի հողատարածք, այն դեպքում, երբ ադրբեջանական բնակչությունը միջինը մի քանի անգամ ավելի մանր և խոշոր եղջերավոր անասուններ ունի, քան նահանգի հայ և վրացի բնակչությունը: 2006 թվականից սկսած տարածաշրջանում պաշտոնապես արգելվեց որսը, իսկ գետերում ձկնորսությունը կրճատվեց մի քանի անգամ: Վրաստանից ադրբեջանցիների ակտիվ արտագաղթը ուղեկցվում է վրացալեզու ժողովուրդների պլանավորված վերաբնակեցմամբ: Բացի նահանգից ադրբեջանցիներին դուրս մղելու փորձերից՝ երկրի ղեկավարությունը անապահո-

վության մթնոլորտ է ստեղծում թուրքալեզու քաղաքացիների համը՝ ժամանակ առ ժամանակ այս կամ այն պատճառներով կազմակերպելով գյուղացիների կամ եզերների սպանություններ: Վրաստանի մեկ այլ «վրացալեզու» ժողովուրդ են համարվում մենգրելները (մինգրելներ), նրանց տարածքը տեղակայված է Սև ծովի մերձափնյա տարածքում: Մենգրելների էթնիկ բնակությունը հասնում է հյուսիսից մինչև Սվանեթիա, իսկ արևմուտքում՝ մինչև Աբխազիա: Մենգրելների թվաքանակը հասնում է 350.000-ի՝ ներառելով Աբխազիայի մոտ 40.000 մենգրելներին: Նրանք ունեն առանձին լեզու, այբուբեն, վրացիներից առանձնանում են իրենց սովորույթներով: Խորհրդային շրջանում Լ.Պ. Բերիայի անմիջական հրամանով մենգրելական դպրոցներում ստեղծվեցին վրացական լեզվի և գրականության ստանդարտ կուրսեր, վրացականացված այբուբեն: Ի տարբերություն աջարների՝ մենգրելները մեծամասամբ իրենց վրացի չեն համարում, բայց պետք է ամրագրել վրացական ղեկավարության հաջող էթնիկ քաղաքականությունը, որի արդյունքում այս ժողովուրդը նույնպես գտնվում է լիակատար ձուլման փուլում: Երկրի ղեկավարությունը այստեղ էլ աջարների նկատմամբ տարվող քաղաքականությունն է կիրառում՝ տարբեր խնդիրների հարուցմամբ նպաստելով մենգրելների արտագաղթին իրենց բնակավայրերից, միաժամանակ մենգրելական մտավորականության և վրաց երիտասարդության հետ կազմակերպելով համավրացական շարունակական հանդիպումներ՝ նպաստում է լիակատար ինտեգրացիային և մենգրելական ինքնագիտակցության մոռացմանը:

Չուլման քաղաքականության մեջ հիմնական շեշտը դրվում է կրթական գործոնի վրա: Երիտասարդության մեջ չկա սեփական լեզուն սովորելու ցանկություն, քանի որ այսօր վրացերենն իմանալը ավելի ձեռնտու է՝ հատկապես հեռանկարում ունենալով երկրի խոշոր քաղաքներում բարձրագույն կրթություն ստանալու հնարավորությունը: Բացի այդ՝ նկատվում է բնակչության հոսք տարբեր շրջաններ: Չնայած այն բանին, որ աբխազական կողմը ժամանակ առ ժամանակ փորձում էր ինչ-որ կերպ բարձրացնել Աբխազիայի մենգրելների ինքնագիտակցությունը, Սամեմգրելյուում (Վրաստանի մենգրելական շրջանը) գործելու մեթոդները և ֆինանսները դրա համար խիստ քիչ են, իսկ մոտեցումը՝ բավականին դիլետանտական: Չնայած Վրաստանի մենգրելական հասարակության ակտիվ վրացականացմանը՝ Աբխազիան դարձել է միակ երկիրը, որը չի խանգարում մենգրելական լեզվի ու պոեզիայի դասավանդմանը և զարգացմանը: Այսօր թերթ է հրատարակվում մենգրելական լեզվով,

որը շատ հաճախ հասնում է մինչև Ձուգդիդի՝ վրացի մենգրելների մայրաքաղաք: Հետաքրքրական է այն, որ չնայած վրացական իշխանության խիստ ճնշմանը, մենգրելական հասարակության մեջ կան զանգվածներ, որոնք փորձում են դեմ դուրս գալ ձուլմանը և վրացական ամեն ինչին հակադրում են իրենցը, տեղականը, ազգայինը: Այս ամենը դրականորեն է ազդում նաև մենգրելական-աբխազական հարաբերությունների վրա, որոնք, չնայած վրացական կողմի սադրանքներին և կեղծումներին, գտնվում են բարիդրացիական մակարդակում: Մենգրելական հասարակության վերնախավն այսօր մեծավ մասամբ տեղափոխվել է Վրաստանի խոշոր քաղաքներ և հիմնականում բնակվում է Թբիլիսիում՝ զբաղեցնելով տարբեր պաշտոններ պետական հաստատություններում կամ էլ զբաղվում է միջին և խոշոր բիզնեսով: Նրանցից շատերը այնքան են հեռացել իրենց մենգրելական արմատներից և ինքնությունից, որ կողմնորոշվում են Ի. Ճավճավաձեի հայտնի ասացվածքով. «Ես եղա Մենգրելիայում և այնտեղ գտա Վրաստանը»: Այլ խոսքով ասած՝ քեիլիսյան մենգրելները վստահ են այն բանում, որ մենգրելական լեզուն պետք է անհետանա, և որ նրանք բոլորը վրացիներ են, իսկ բոլոր մշակութալեզվաբանական տարբերությունները ձևավորվել են ցարական «հակավրացական» քաղաքականության արդյունքում:

Նոր դեկավարների՝ իշխանության գալու պահից սկսած՝ մենգրելական հարցում դրվել էր այս ժողովրդի զանգվածային ինտեգրացման քաղաքականությունը: 2004-2006 թթ. փակվեցին հասարակական-գեղարվեստական «Իրիտոնի» ամսագիրը և գիտահասարակական «Այա» ամսագիրը, որը լույս էր տեսնում մենգրելական լեզվով: Այնուհետ՝ մի քանի ձերբակալություններից հետո, «գործի դրվեց» այսպես կոչված «Սամենգրելո» ազգայնական շարժումը, որն ընդամենը պահանջում էր հավասարեցնել դպրոցներում մենգրելական լեզվի դասավանդման կարգավիճակը վրացականին:

Չնայած քարթվելական ժողովուրդների նկատմամբ վրացական նույնական քաղաքականությանը, ինչպես ընդունում են արևմտյան վերլուծաբանները, մենգրելների մեջ առայժմ պահպանվել է ճնշման զգացումը և թերարժեքության բարդույթը Կենտրոնական և Արևելյան Վրաստանի վրացիների նկատմամբ: Ինչպես գրում են արևմտյան հետազոտողները, մենգրելական ժողովրդի մեջ նկատվում է «յուրայինների» և «օտարների» հստակ տարանջատում, միաժամանակ անելանելիության զգացումը ավելի շատ կարող է խորացնել էթնոլեզվաբանական անտազոնիզմը եկվոր վրացիների նկատմամբ: Տեղական մենգրելները մինչև հիմա իրենց շրջապա-

տող քարթվելներին կոչում են «քոթրու», այսինքն՝ «վրացիներ», ինչի պատճառով կարելի է եզրակացնել, որ նրանք իրենց բնավ էլ վրացի չեն համարում: Շատ մենգրելներ վստահ են, որ նրանց պատմությունը և էթնոգենեզը զարգացել է համավրացականից անջատ, և որ նրանք ընդհանուր շատ բան ունեն ոչ թե վրացիների, այլ աբխազների հետ: Ընդհանուր համատեքստում, սակայն, մենգրելական սուբէթնոսը ակտիվ կերպով ենթարկվում է վրացականացման՝ երիտասարդության ինքնաիդենտիֆիկացիայի և մտածողության աստիճանական փոփոխման ճանապարհով:

Ընդհանրացնելով վերը ասվածը՝ մշենք միայն, որ Վրաստանի բազմաբնույթ էթնոկրոնական քաղաքականությունը բավականին արդյունավետ է երկրի առաջնային արտաքին քաղաքական նպատակին՝ մոնոէթնիկության և հաջող ինտեգրացիայի հասնելու, էթնոկրոնական հողի վրա երկրի փլուզման նոր գործընթացները լրիվ բացառելու համար: Կասկած չկա, որ այս ոլորտում փորձագիտական տարբեր խմբերի, որոնք մշակում են երկրի էթնոկրոնական քաղաքականությունը, իրենց նախագծերով և խորհուրդներով օգնում են արևմտյան գործընկերները, որոնք «հաջող» ձուլման փորձ ունեն:

Տաշիր գավառին բնագրավումը¹

Ռուբեն Տեր-Մինասյան²



Ռուբեն Տեր-Մինասյան

Տաշիրը՝ անուն մը, որ այժմ չի գործածվիր, մեր հին Գուգարքի մեկ գավառն է, որ հետո Լոռի կոչվեցավ, Լոռիի բերդին անունով և հիմա ծանոթ է իբրև Բորչալու:

Հայաստանի այդ հյուսիսային գավառը երբեմն առանձին հայկական թագավորություն է ունեցած, բայց ընդհանրապես եղած է հյուսիսային բղջիխության մեկ մասը և Հայաստանի պաշտպանը ընդդեմ «Հյուսիսականաց»:

Մեզ շատ հեռուն պիտի տաներ, եթե պատ-

- 1 «Դրօշակ», 1926 թ., թիվ 3: Հոդվածն արտատպվել է նաև հետևյալ գրքում. Ռուբեն Տեր-Մինասյան, հոդվածների ժողովածու, Երևան, 2002, էջ՝ 81-91, կազմող՝ Խաչատուր Ստեփանյան: Ներկա հրատարակությունը կատարվում է լեզվական աննշան շտկումներով՝ ձգտելով հնարավորինս հարազատ մնալ Ռուբեն Տեր-Մինասյանի լեզվաոճական առանձնահատկություններին: Հետագա բոլոր ծանոթագրությունները Ռ. Տեր-Մինասյանին են:
- 2 Ռուբեն (Մինաս) Տեր-Մինասյան (1882-1951): Ծնվել է Ջավախքում՝ Ախալքալաք քաղաքում: Հաճախել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանը, այնուհետև՝ Մոսկվայի Լազարյան ճեմարանը: Որպես Հայ Յեղափոխական Դաշնակցության գործիչ անցնում է Վան՝ Արամ Մանուկյանի մոտ, ապա՝ Սասուն, օգնելու Գևորգ Չաուշին, որի նահատակվելուց հետո (1907թ.), Ռուբենը դառնում է դաշնակցական ուժերի ղեկավար: Երիտթուրքական սահմանադրության հաստատման օրերին մեկնում է Ժնև՝ ուսումը շարունակելու: Վերադառնալով Մուշ՝ Ռ. Տեր-Մինասյանը վարում է Սասնո 1915թ. հերոսամարտը թուրքական բանակի դեմ: Վերջինիս հաջողվում է ճեղքել թշնամու ուժերի շղթան և փոքր խմբով անցնել Կովկաս: Ռ. Տեր-Մինասյանը եղել է Հայոց Ազգային Խորհրդի անդամ, ապա Հայաստանի առաջին Հանրապետության Ռազմական (Պաշտպանության) նախարար: 1920թ. բոլշևիկյան ապստամբության ճնշման օրերին Ռ. Տեր-Մինասյանը մասնակցում է անձամբ՝ ընկերանալով Արագածի ուժերի հետ: Բազմաթիվ անգամներ մասնակցել է ՀՅԴ Ընդհանուր ժողովներին և բազմիցս ընտրվել ՀՅԴ Բյուրոյի անդամ: Մահացել է Ֆրանսիայում՝ 69 տարեկան հասակում:

մեինք Տաշիրի փառավոր անցյալը: Անոր պատմությունն այնքան ճոխ է ու բազմազան և այնքան շաղկապված Հայաստանի ընդհանուր պատմության հետ, որ սկսիլ անցյալեն, կնշանակի Մամիկոնյանց, Գուգարաց, Բագրատունյաց տոհմերու պատմությունն ամփոփել:

Տաշիրի գավառը պատմականորեն բնորոշելու համար կրճառք առանց չափազանցության բաղդատել զայն Տարոնի հետ: Եթե Տարոնը տեղավորված է Տավրոսի մեջտեղը, Սասունի լեռներուն և Մուշի դաշտերուն մեջ, Տաշիրը նստած է Փոքր Կովկասին մեջտեղը՝ Լոռիի լեռներուն և Բորչալուի մեծ դաշտին մեջ: Եթե Տարոնը հարավի թշնամիներուն դեմ կանգնած է, Տաշիրն ալ հյուսիսականաց դեմ ծառայած է: Եթե հոն Մուշեղ, Վասակ Մամիկոնյանները ծնած են, հոս ալ Վահան Մամիկոնյանները թև առած են: Եթե Տարոնի մեջ Ս.Սահակները երգած են Հայոց հոգևոր կյանքը, այստեղ ալ Օհան Օձնեցիները նույն դերը կատարած են: Եթե Մուշի Ս.Կարապետ վանքը հայկական կեդրոն դարձած էր, ապա Տաշիրի մեջ անոր դերը կկատարեին Հաղբատն ու Սանահինը:

Այսօր Տաշիրի չորս գավառներեն երեքը կգտնվին Վրաց սահմանի մեջ և միայն մեկ գավառակը, Ջալալ Օղլու (այժմ Ստեփանավան), կցված է Հայաստանի: Ինչու՞ այս անջատումը:

Ինչպես դիտել տված ենք նախորդ հոդվածներով, պատերազմեն առաջ ռուս կայսրությունը իր վարչական բաժանումները չէր վարեր ոչ պատմական, ոչ ազգագրական և ոչ ալ տնտեսական ու աշխարհագրական պայմաններով, այլ ավելի հակակշռելու քաղաքականությանը և պատահական տրամադրություններով: Այդ նկատումով ալ Բորչալուի գավառը կկազմվի նախկին Տաշիր գավառեն և կմիացվի Թիֆլիզի նահանգին: Մանավանդ 1905-ի հեղափոխութենեն հետո, երբ Անդրկովկասյան ժողովուրդները գիտակցության գալով ինքնավարության(զենստվո) խնդիր կոնեին, հայերն ալ Բորչալուն Թիֆլիզին միացնելը անբնական գտնելով, առաջարկեցին Բորչալուն բաժանել Թիֆլիզեն և միացնել Ալեքսանդրապոլի նոր կազմվելիք նահանգին, որի բնական բաղկացուցիչ մաս կհամարեին աշխարհագրականորեն, պատմականորեն, ազգագրական և ուրիշ տեսակետներով: Այդ ձգտումին դեմ չէին և վրաց ղեկավար մենշևիկները և ռուս կառավարությունը: 1917-ին սահմանային փոփոխման ծրագիրը ընդունվեցավ Կերենսկիի կառավարության կողմե, որուն կմասնակցեին վրացի մենշևիկ Ծերեթելի, Զխենկելի և այլն: 1918-ին, երբ ստեղծվեցան անկախ Վրաստանը և Հայաստանը և թուրքերը ծանր կացության մատներ էին մեզ՝ առնելով Կարսը, Ալեքսանդ-

րապուլը, Ղարաքիլիսե-Դիլիջան ճանապարհը և թնդանոթները զետեղեր էին Երևանի դիմաց ու ամեն վայրկյան կսպառնային բնաջնջել հայության և Հայաստանի վերջին մնացորդը, վրացական զորքերը կմտնեն Տաշիր և Ջավախք և կատարված իրողության առաջ կդնեն Հայաստանը՝ գրավելով այդ գավառները: Թուրքերու գրավման հետևանքով, անհնար էր պաշտպանել այդ հողերը: Վրաստան, օգտվելով առիթեն, սկսավ բռնություններ կատարել իր գրաված գավառներու մեջ: Տեղական ժողովրդին ատելությունը սաստկանալով, հանգեցավ Լոռի գավառին ապստամբության, որ պայթեցավ թուրքերու Ալեքսանդրապոլի շրջանեն քաշվելու օրերուն: Ապստամբությունը ծավալվեցավ ամբողջ Տաշիր գավառին մեջ. Հայկական փոքրաթիվ զորքերը հասան օգնության. Վրացիները պարտվեցան և բազմաթիվ զերիներ ու մեծաքանակ ռազմական նյութեր ձգելով հեռացան: Անգլիացիներու միջամտությամբ զինադադար կնքվեցավ, որպեսզի բարեկամությամբ լուծվեր վիճելի խնդիրը: Սկսան 1918-ի բանակցություններ, որոնք որևէ դրական արդյունք չտվին: Բուլշևիկները հասնելով տիրեցին թե Հայաստանի և թե Վրաստանի, բայց Տաշիրի վիճելի խնդիրը ձգեցին այնտեղ ուր մնացած էր Հայաստանի դաշնակցական և Վրաստանի մենշևիկ կառավարությանց ատեն: Բուլշևիկները տվին Հայաստանեն այն, ինչ Դաշնակցականները զենքով ետ առեր էին Վրաստանեն և միայն մեկ-երկու գյուղախումբ, որ չեզոք զոտի կկազմեին Ալլահվերտիի շրջանին մեջ՝ միացուցին Հայաստանի. Իսկ Վրացիներուն թողուցին Տաշիրի երեք գավառակները, ուր դեռ չէին ամրացած հայկական զորքերը:

Ուրեմն, այսօր ալ Տաշիրի խնդիրը կմնա անլույծ Հայաստանի և Վրաստանի միջև, և հայ-վրացական հարաբերությունները կգտնվին նույն անբաղձալի վիճակին մեջ, ինչ որ հինգ տարի առաջ:

Համառոտակի ներկայացնենք Տաշիրի աշխարհագրական դիրքը:

Տաշիրի սահմանը կկազմեն արևմուտքեն՝ Ախալքալակը, հարավեն՝ Շիրակն ու Փամբակը, արևելքեն՝ Հին Ձորափորի (ներկա Դիլիջան) գավառները, հյուսիսեն՝ Թիֆլիզի գավառը: Ուրիշ խոսքով՝ երեք կողմը հայկական գավառներ են, իսկ միայն հյուսիսը՝ Վրաստանի սահմանին է կցված: Գավառը ամբողջությամբ կիյնա Փոքր Կովկասի վրա, զրեթե մեջտեղը և նույն դիրքն ունի, ինչ որ Դիլիջանի գավառը, այսինքն անոր պես կնայի դեպի մեծ Կովկասը, դեպի հյուսիս, և իր բոլոր ջուրերը կհոսին դեպի հյուսիս՝ Կուր գետը: Այդ երկիրը լեռներու, անդունդներու ամբողջ հյուսվածք մըն է, որ մեկ-երկու վայրերու մեջ միայն փոքրիկ լեռնադաշտեր կկազմե, իսկ

ընդհանրապես ամենի ձորերու, բարձր կատարներու քառս մը ներկայացնելով հանդերձ, ընդհանուր գիծ մը կպահե և դեպի հյուսիս կխոնարհի և հասնելով Խրամ գետին, դաշտ մը կծնացնե և այնտեղ կվերջանա: Այդտեղ ալ կվերջանա Հայաստանը: Այս կետեն ծնունդ կառնեն նոր կլիմա և երկու նոր տեսարան: Այն մասը, որ դեպի արևելք կերթա, դաշտային է, տաք ու չոր և բնակիչները Թաթարներն են. իսկ այն մասը, որ դեպի հյուսիս կերթա, կբարձրանան թավուտ Թրիալեթի լեռները. Կլիման խոնավ է, բնակչությունը՝ վրացի: Ուրեմն Տաշիր գավառը իր երեք կողմերեն թեև շրջապատված է Հայաստանով, բայց իր չորրորդ կողմով փաստորեն սահման կկազմե երկու տարբեր կլիմաներու, երկու տարբեր ժողովուրդներու և երկու տարբեր պետությանց՝ Վրաստանի և Ադրբեյջանի: Աշխարհագրականորեն դժվար չէ որոշել թե ուր կսկսի և ուր կվերջանա Տաշիր գավառը. բնությունը բացորոշապես ճշտած է սահմանները: Երեք կողմերեն կբարձրանան հայկական լեռնաշղթաներ և ծնունդ կուտան երկու մեծ գետերու՝ Դեբետին(Ձորագետ) և Խրամին: Առաջինը կերթա հարավեն հյուսիս, երկրորդը՝ արևմուտքեն արևելք, և իրարու հետ եռանկյուն մը կկազմեն, որու մեջ ինկած տարածությունն է Տաշիր գավառը, ակոսված խոր անդունդներով և բազմաթիվ գետակներով: Եթե Դեբետ գետը իր բոլոր գետակներով կբխի հայկական լեռներեն, Խրամ գետը, որ արևմուտքեն-արևելք կերթա, նույն հարագատ ծագումը չունի. իր աջ կողմեն եկած գետակները հայկական բարձրավանդակեն կուգան, իսկ ձախ կողմեն եկածները բոլորն ալ Վրացական՝ Թրիալեթի լեռներեն: Այս խառնածին գետը աջ կողքով հայկական է, իսկ ձախով՝ Վրացական, և ճիշտ սահմանը կկազմե Վրաստանի և Հայաստանի: Խրամի ակունքեն մինչև Կուրը թափվելու վայրը զրեթե զուգահեռաբար կձգվին երկու շղթաներ,- հարավեն՝ Փոքր Կովկասը, Բզովտալեն ցածնալով, իջնելով կհանգչի և կվերջանա Խրամի աջ ափը. իսկ ձախ ափեն կսկսին Թրիալեթի լեռնաշղթային ոտքերը, որոնք բարձրանալով, կհասնին Թիֆլիզի և Գորիի սահմանները: Այս երկու զուգահեռ շղթաները տարբեր են թե բնությամբ, թե բուսականությամբ և թե ազգաբնակչությամբ:

Բնական այդ սահմանավորումն է եղած պատճառը, որ հին ժամանակներե, նույնիսկ վրացական պատմագիրներու վկայությամբ, Խրամն է եղած սահմանը Հայաստանի և Վրաստանի, Տաշիրի և Թիֆլիզի (Վախուշտիի աշխարհագրություն, Brosset, <<Description>> Georgie au s. du Kour): Բայց աշխարհագրական ամբողջությունը նկատի չէ առնված ոչ ցարերու կառավարության և ոչ ալ այժմ բուլշևիկներու կողմ: Ցարական կառավարությունը ձեռնարկած էր

անբնական գործողության մը, Թիֆլիզի գավառի հյուսիսային մասերեն քանի մը կտորներ միացնելով Տաշիրին: Այդպիսով Թրիալեթի լեռներեն կտոր մը, և Թրիալեթի ստորոտի դաշտավայրերու և մաս մըն Կարաեագի դաշտեն Կուրի աջ ափեն անբնականորեն միացված և Բորչալուն ընդարձակված է ի հաշիվ Թիֆլիզի գավառին: Երբ ցարական իշխանությունը հեռացավ և մենչևկիկները եկան, անոնք առաջադրեցին մինչև Բզովտալ Վրաստանին միացնել: Այդ ձգտումը ճիշտ էր աշխարհագրականորեն, քանի որ կուզեին միացնել աշխարհագրական ամբողջություն մը, հասնելով Փոքր Կովկասի կատարները: Բայց այդ ձգտումը խափանվեցավ հայկական զորքի և հայ ժողովուրդի կամքով: Իսկ երբ բուլչևկիկներն եկան, անոնք ալ ինկան ցարական կառավարության մյուս ծայրահեղության մեջ. Դեբետի ափունքները տվին Հայաստանին, ամբողջ Խրամի հովիտը տվին Վրաստանին, այսինքն, Փոքր Կովկասեն հովահարի մամն դեպի Խրամ ձգված բազմաթիվ հովիտներ կիսեցին խաչածն. Հովիտներու հյուսիսի մասը թողին Վրացիներուն, հարավի մասը՝ Հայոց: Այս ավելի քան անբնական բաժանումով, ոչ միայն աշխարհագրական ամբողջությունը խաթարվեցավ, այլ և մեկ հովիտեն մյուսի հետ կապը խիստ դժվարացավ և տնտեսական, ազգագրական ամբողջությունն ալ անբնականորեն կիսվեցավ, քայքայվեցավ: Բայց ի՞նչ էր նպատակը այս անբնական բաժանման: Ինչո՞ւ վրացի մենչևկիկները կձգտեին դեպի Բզովտալ և կես ճամբան ստիպվեցան կանգնիլ, ինչո՞ւ անոնց հաջորդ բուլչևկիկները նորեն կանգ առին կես ճամբան և աչքերը հառած են նորեն Բզովտալ:

Վրաստանը կազմավորման առաջին օրեն իսկ, սկսավ մասնավոր ուշադրություն դարձնել դեպի Օսեթիա և դեպի Տաշիր: Առաջին ակնարկով տարօրինակ կթվի այս պարագան: Պարզենք պատճառը-Վրաստանը կիյնա մեծ և փոքր Կովկասներու միջին տարածութեան վրա. այդ ամեհի, անանցանելի լեռնաշղթաները կփակեն Վրաստանի ճամփան հյուսիսեն և հարավեն: Մեծ Կովկասը մեկ անցք ունի դեպի Վլադիկավկազ, ուր կբնակին օսերը. Իսկ Փոքր Կովկասը նույնպես մեկ անցք ունի դեպի հարավ՝ Դեբետի հովիտով: Ուրեմն իր հյուսիսային դուռը- դեպի Ռուսաստան-Օսեթիան է, հարավային դուռն ալ, դեպի Հայաստան՝ կներկայացնե Տաշիրի գավառը: Այս դուռները գրավելու բուռն տենչով էր որ մենչևկի կառավարությունը մեկ կողմեն կոմբակոծեր Օսեթիան, մյուս կոմե օդանավերով, զրահապատներով կոմբակոծեր Դաղեթեն մինչև Շուլավեր, Ուզունլար, Տաշիրի կարևոր կեդրոնները: Բուլչևկիկները գրավելու մեթոտը փոխեցին. Օրժոնիկիձենները իմաստորեն օգտագործե-

ցին Հայաստանի մեղկությունը և անոր ղեկավարներուն միամտությունը և «եղբայրաբար» հաստատվեցան երկու կարևոր դուռներուն վրա. ներքին Օսեթիան որոշ ինքնավարություն ստացավ և դրվեցավ Վրաստանի իշխանության տակ. վերին Օսեթիան մինչև Ինգուլեթիա, մինչև Վլադիկավկազ բանակցություններով կջանա միացնել Վրաստանին. իսկ հարավեն Տաշիրի գավառի բոլոր անցքերու գլուխը, Ծալկան, Շուլավերը, Օպոթի և այլ շրջանները միացված են, Հայաստանի ձգելով միայն Ջալալ Օղլուի շրջանը: Ուրիշ խոսքով թե հյուսիսային Կովկասի և թե Հայաստանի դուռներուն տիրապետած են Վրացիները:

Թողունք Օսեթիան և խոսինք Տաշիրի մասին:

Ինչպես ըսի վերը, միակ դուռը, որ Հայաստանը երկաթուղով կկապե Վրաստանի, Ռուսաստանի և Ադրբեջանի հետ, հյուսիսի կողմեն է,- Տաշիրի գավառը, որ ճամբա կբանա Խրամի աջ ափեն դեպի Ադրբեջան-Գանձակի շրջանները և այստեղեն Բաքու-Ռուսաստան. իսկ Հյուսիսի կողմեն դեպի Վրաստան և հյուսիսային Կովկաս: Վրաստանի գրավման տակ, Խրամի աջ ափը հետևյալ պատկերը կներկայացնե.-

1. Հայաստանը անմիջական հաղորդակցութեն կզրկվի բանուկ ճանապարհներով Ադրբեջանի, Բաքվի, Ռուսաստանի հետ, հետևաբար իր կապը պիտի պահե Թիֆլիզի վրայով և ընդմիշտ Վրաստանը պիտի դառնա Ադրբեջանի, Ռուսաստանի և Հայաստանի միջև փոխանցման, «տրանզիտի» շրջան մը: Այս հանգամանքը երկու առաքելություն կուտա անոր-ա.Քաղաքական և բ. Տնտեսական: Քաղաքական՝ այն մտքով, որ Հայաստանը չի կրնար անմիջականորեն կապվիլ Ռուսիո և Ադրբեջանի հետ, և հետևաբար Հայաստանի քայլերը միշտ Վրաստանի հակակշռին ենթակա պիտի ըլլան, իսկ տնտեսական կողմեն Հայաստանը բացարձակորեն կախում պիտի ունենա Վրաստանի բարյացակամութենեն:

Ատկե զատ Վրաստանը պիտի դառնա մեծ ճամբու վրա նստած հարկահավաք մը: Այսօր իսկ, երբ Անդրկովկասը դաշնակցություն է, Վրաստանը փութի վրա տուրք կգանձե Հայաստանեն, այդ միակ ճամբով կատարված արտածումներուն և ներածումներուն համար: Այդ վիճակը միևնույն ատեն Վրաստանին կուտա գերակշիռ դիրք մը, զայն կդարձնե թելադրողը Անդրկովկասյան ժողովուրդներու քաղաքական և տնտեսական անկախության: Եվ իսկապես, այսօր Վրաստանի կամքն է, որ կիշխե Անդրկովկասի մեջ:

Եթե փոքրիկ տարածություն մը- Լամբալ-Հայաստանի սահմանեն մինչև Խրամ, ընդամենը 15 վերստ, միացվի Հայաստանի և Խրամը

դառնա հայկական սահմանը, այդ դժվարություններն ամբողջ պիտի վերանան. Ալեքսանդրապոլ-Սատախլուեն երկաթուղագիծը եթե ձգվի դաշտերով մինչև Ադրբեջանի սահմանը, Ադրբեջանը և Հայաստանը իրենց տնտեսական, քաղաքական անկախությունը կստանան և կազատին Վրաստանի միջնորդի դերեն և հարկատվութենեն:

Վրաստան ամուր կառչած է Տաշիրի գավառեն նաև ուրիշ պատճառով: Իր ձեռքը պահելով Խրամի աջ ափը, ամրացված կըլլա Ախալքալակի բռնագրավումը և վտանգված Գուգարքի մյուս գավառները- հին Ձորափորը, արդի Դիլիջանը իբրև դնակ մը կախված կմնա Ադրբեջանի և Վրաստանի միջև. մեկ դանակով երկուքեն մեկը կրնա դյուրությամբ կտրել Հայաստանի այդ թանկագին գավառը. իսկ ավելի հեռու, դեպի հարավ, դեպի Ալեքսանդրապոլի ճամբաները կբացվին Վրաստանի առջև և հարմար ատենին, երբ որ կուզեն առանց արգելքի մտնել հայկական բարձրավանդակի սիրտը: Հիմա այս ռազմական գերակշռությունը նախատեսելով է, որ վրացիները կձգտին Բզովտալ հասնիլ:

Կարելի չէ ըսել, թե Վրաստանը Տաշիրը գրաված է հողային և այլ հարստություններե շլացած: Ավելի շատ Տաշիրի հաղորդակցական միջոցները շահագործելու տեսակետեն է, որ վճռական դերը կկատարեն այս բռնագրավման մեջ: Տաշիրի գավառը Վրաստանի համար դարձեր է դյուրին եկամտի աղբյուր մը: Բայց նույն տնտեսական շահագործություններն ունի և Հայաստանը. ան ալ կուզեն օգտվիլ Տաշիրի հաղորդակցության միջոցներեն, իր տնտեսությունը զարգացնելու համար, կուզեն օգտվիլ Տաշիրի հանքային, հողային և այլ հարստություններեն: Բայց այս երկու միատեսակ շահագործություններու մեջ տարբերություն մը կա: Մինչ Վրաստանը նստելով Խրամի աջ ափին վրա կուզեն Հայաստանի ճամբան փակել դեպի Ադրբեջան և այդպիսով տուրքի տակ դնել Հայաստանը և Ադրբեջանը, Հայաստանը, ընդհակառակը, չուզեր ատով տուրքի ենթարկել Վրաստանը, այլ միայն ազատիլ հարկատվութենեն: Մինչ Վրաստան Տաշիրը համարելով Սոմխեթիա (Հայաստան), կուզեն ուրիշ հողեն, հանքեն և ջուրեն օգտվիլ, Հայաստանը իրեն համարելով գայն, իր երկրի և Վրաստանի շահերեն, կա և Տաշիրի բնիկ ժողովրդին շահը զոր անտես չպիտի առնենք: Խրամի աջ ափը գտնվող դաշտաբնակները և լեռան ստորոտի բնակիչները պետք ունին Ջալալ Օղլուի լեռներուն, իրենց ամառանոցներուն համար, իրենց բերքերը ծախելուն համար և ընդհակառակը լեռնցի Դսեղցին կարիք ունի Շուլավերին, Սատախլուին- թե աշխատանքի և թե հողի ու հարուստ բերքերու համար: Երկրին ամբողջությամբ է, որ բնակիչները պիտի կրնան

մեկ հավաքական տնտեսություն ստեղծել, և եթե տեղական ժողովրդին շահերը նկատի առնվեին, ներկա անբնական սահմանները պիտի համարվեին տնտեսական մահվան գիծեր Տաշիրի ազգաբնակչության համար:

Բայց հիմնականը՝ ժողովուրդներու ինքնորոշման իրավունքի տեսակետն է: Իբրև այդ քննենք Տաշիրը.-

Համաձայն 1913-ի Կովկասյան Տարեգրքին՝ Բորչալուի գավառը կբռներ 6036 քառ. վերստ տարածություն, 155.900 ազգաբնակչությամբ, որմե

Ռուս և աղանդավոր	9.840
Եվրոպացի	3.453
Վրացի	7.533
Հայ	63.148
Հուլն	27.543
Շիա	17.930
Սուննի	26.910

Այս թվերը ցույց կուտան, որ ցարերու վարչական բաժանումով բացի Տաշիրեն, անոր վրա ավելցած են և թիֆլիզ գավառեն մասեր, որ կգտնվին Խրամեն դեպի հյուսիս, անոր ծախ ափը, ուր նորեն հայերը կկազմեն մեծամասնություն: Մինչ ամբողջ բնակչության 4.8 %-ը կմերկայացնեն վրացիները, հայերը 46.9 % են: Ուրեմն ազգագրական տեսակետով ամբողջ Բորչալուն հայերու պիտի պատկաներ, բայց եթե նկատի առնենք և աշխարհագրական ամբողջությունը և տնտեսական կապակցությունը, այդ պարագային պետք էր դուրս ձգել Խրամեն դեպի հյուսիս գնացող հողամասերը իրենց ազգաբնակչությամբ, որով Բորչալուն պիտի մտներ իր աշխարհագրական սահմաններու մեջ. Այդ հաշվով Ծալկայեն (Թրիալեթի գավառակ) պետք է դուրս ձգել Առջևան, Սարվանի, Բաշքեյի, Բեշթաշի, Գոնիա Կազի գյուղախմբերը և միացնել Թիֆլիզի գավառին: Եկատերինֆելտի գավառակեն անջատել Կիզիլ Աջիլի, Սարվանի գյուղախմբերը և միացնել Թիֆլիզի գավառին և վերջապես Բորչալուի գավառակեն ալ պետք է դուրս ձգել Բայտարի, Գեավուրարիսի, Դեմուրչի Հասնալիի գյուղախմբերը և միացնել նորեն Թիֆլիզ գավառին: Այդ պարագային պիտի ստացվեր բնական, ազգագրական և տնտեսական միավոր մը նախկին Տաշիրի սահմաններով, եզերված Խրամ գետով և ազգաբնակչության հետևյալ կազմով.

Ռուս և աղանդավոր	9.840 կամ 7.9%
Եվրոպացի	3.453 ,, 2.8%
Վրացի	7.533 ,, 6.1%
Հայ	63.148 ,, 50.7%
Հուլյն	15.546 ,, 12.4%
Շիա և Սուննի	25.038 ,, 20.1%
Գումարը՝	124.658 ,, 100%

Այս է բնական սահմաններով բաժանված և տնտեսապես շաղկապված Տաշիրը, որ մեր իրավունքն է ոչ միայն պատմական, աշխարհագրական, տնտեսական, այլև ազգագրական տեսակետով, քանի որ հայերը բացարձակ մեծամասնություն են (50.7%), իսկ վրացիները (9.1%), միայն գերմանացիներն ավելի են և շատ ողորմելի թիվ կներկայացնեն: Եթե ազգերու ինքնորոշման սկզբունքը կրնողունին վրացի, հայ կամ ռուս բուլշևիկները, ինչո՞ւ այդ երկրամասը ամբողջությամբ չեն միացներ Հայաստանի: Միացում մը կատարված է Դաշնակցության հարկադրանքին տակ, Տաշիրի գավառակներն Ջալալօղլին իր շրջանով (2182 քառ, վերստով 45.119 ազգաբնակչությամբ) կցված է Հայաստանի. Սակայն անկատար է այդ միացումը. Հայաստանի կցված մասը լեռներ, կատարներ էին, զուրկ հարստություններ. այդ աղքատ երկրամասին ճամբարները կուղղվին դեպի Խրամ, բոլոր ճամբարներու գլխուն կանգնած է Վրաստանը, իսկ այդ լեռներուն վրա կեդրոնացած է զուտ հայությունը: Այս ձևի բաժանման հիմնական նպատակն է՝ նախ տնտեսապես տկարացնել Ջալալօղլի շրջանը (Ստեփանավան), և երկրորդ՝ Հայերու տոկոսը պակսեցնել Վրաստանի բռնագրաված երեք մյուս գավառներուն մեջ: Ահա այս մաքիավեյան հաշիվներով է, որ ի վերջո Օրժոնիկիձեները ողորմելի մաս մը զիջած են Հայաստանի: Այսպես թե այնպես, քանի որ Վրաստանի կողմեն Ջալալօղլիի 2182 քառ. վերստ տարածությունը և 45.119 ազգաբնակչությունը Հայաստանի մաս կհամարեն և մյուս կողմեն քանի որ մենք ևս ակնկալություններ չունինք Խրամի ձախ ափը գտնվող երկրամասերուն վրա, տեսնենք թե Խրամի և ներկա Հայաստանի միջև եղած վիճելի հողամասը ինչ տարածություն կբռնեն և ինչ ազգագրական պատկեր կներկայացնեն (Տեսնել քովի էջը – Ա.):

(Թիվերը կառնենք 1913 թվականի Կովկասյան Տարեցույցն)

Գավառակ	Գյուղախումբ ³	Գյուղ	Հայ	Վրացի	Մահմեդական	հուլյն	Մլավոն	Գերմանացի	Գումարը	Տարածութ. քառ. վերստ
Բորչալու	7	40 ⁴	14.398	1.282	8.106	- ⁴	-	-	23.786	300 ⁵
%	-	-	62%	5%	33%	-	-	-	100%	-
Եկատերինֆետ	8	44	3.168	-	11.224	-	-	2.595	17.008	700
%	-	-	18.1%	-	66.4%	-	-	15.5%	100%	-
Ծաղկա	11	94	11.283	6.351	6.143	14.000	875	786	39.438	1.900
%	-	-	30%	16%	15%	35.5%	2%	1.5%	100%	-
Ամրոզ վիճելի մասամբ	25	183	28.843	7.633	26.495	14.000	875	3.381	81.233	2.900
%	-	-	35.5%	9.5%	32.6%	17.2%	1.1%	4.1%	100%	-

Ահա այս է այն հողամասը, որ Վրաստանը տարբեր միջոցներով և ձևերով հաջողած է գրավել Հայաստանեն. այս է և այսօրվա վիճելի երկրամասը, բացի Ախալքալակի գավառեն: Իբր երկրամաս մեծ պատառ չի ներկայացներ այդ հողը, մոտ 3000 քառ. վերստ, բայց եթե ան քիչ նշանակություն ունի Վրաստանի համար իբր տարածություն, Հայաստանի համար խոշոր երկիր մըն է, համեմատած իր

- 3 Ծանոթ. Գյուղախումբերն են 1.Բորչալուեն.-Կաջագան, Օփրեթ, Սատախու, Չոչկանի մնացածը, Շուլավեր, Կըրըխի, Սառայլ. 2.Եկատերինֆեկեն.-Սարուխի, Բուլոնի Քափանան, Եկատերինֆետ, Կվեշ, Սարաչի, Ֆախրալո, Դարբազ. 3.Ծաղկայեն-Ավրալի, Ալեքսանդրաֆետ, Ամամլի, Աշկալա, Բարմակսըզ, Բաշեգիտ, Գումարեթ, Դեմուրբուլաղ, Դումանիս, Կամարլիսկ, Նարտեվան:
- 4 Ծանոթ. Բորչալու գավառեն Տինիխի երկու հայ, Քյորփալուի երկու թուրք գյուղերը և Չոչկանի երկու հայ գյուղերը միացված են Հայաստանի. Այն, ինչ տարօրինակապես նույն գյուղախումբի մնացած հայ գյուղերը միացված են Վրաստանին. Այդպիսով համայնքի կեսը կիյնա Վրաստանի, կեսը՝ Հայաստանի մեջ:
- 5 Ծանոթ. Տարածությունները առնված են մոտավոր հաշվով, բայց տարբերությունը չի կրնար անցնիլ 100-150 վերստը:

հողային աղքատության հետ: Այստեղ միայն հողի խնդիր չկա, այլ և այդ հողերու բնակեցման խնդիր, որ ավելի հրամայական է Հայաստանի- քան որ և է երկրի համար: Վրաստանի մեջ 300.000 հայություն ունինք, որուն մեկ խոշոր մասը տարագիր է, առանց հաշվելու թրքահայ գաղթականներու հարցը, որ այսպես թե այնպես պիտի ծանրանա Հայաստանի վրա: Սակայն ավելի հրամայական պահանջ կդառնա այդ փոքրիկ տարածության Հայաստանի կցելը, երկրի ամբողջականության և Հայաստանի արտաքին աշխարհի հետ կապակցության տեսակետներն:



Վրաստանի լեռներից Դմանիսի, հեռվում՝ Ճակայի տեսարանները

ամբողջությամբ կհասցվի հայությունը փոքրամասնություն դարձնել մնացած երեք շրջաններու մեջ, բայց այդ մասամբ կազդե համեմատության վրա և նորեն հայերը կմնան մեծամասնություն: 28.849 հայերու թիվը պետք է համարել նվազագույնը, քանի որ զայն առած ենք 1912-ի վիճակագրական հաշիվներեն: Այսօր այդ թիվը բարձրացած է առնվազն 35-40.000-ի, մեր ժողովուրդին համար զգալի է այդ կորուստը: Քիչ քանակությամբ կորուստներ, ինչն էլ այս անտեղի վնասը: Հողի այդ միացումով հայ ժողովուրդին հավաքման խնդիրն ալ կթեթևանա 40.000-ով: Ինչ կվերաբերի վրացիներուն, անոնք բոլոր գավառակներու մեջ ոչինչ թիվ կկազմեն: Մեկին մեջ բնավ չկան, երկրորդի մեջ ողորմելի, երրորդին մեջ մինչև 16 %, ընդամենը ամբողջ վիճելի մասին մեջ 7.633 հոգի(9.5 %) : Ինչն էլ այդ ողորմելի քանակության համար 81.000 ժողովուրդ 3000 քառ, վերստ տարածությամբ պիտի միանա Վրաստանի: Ինչու՞ այդ անարդարությունը: Եթե Վրաստանի համար թանկ են 7.633 վրացիները, նույնքան և ա-

Ազգաբնակչության տոկոսային հարաբերություններն կտեսնենք, որ հայերը, բացի Եկատերինֆելտ գավառակեն բացարձակ կամ համեմատական մեծամասնություն կկազմեն, իսկ ամբողջ վիճելի մասին մեջ՝ համեմատական մեծամասնություն: Այդպես, չնայելով որ Ջակալոլիի շրջանը բաժնելով իր

վելի թանկ են մեր 30-40.000 հայրենակիցները: Եթե Վրաստանը բնավ չուզեր, որ իր ցեղակիցները ինձան Հայաստանի սահմաններուն մեջ, այդ պարագային մենք ալ նույն տեսակետներով պիտի պահանջենք ոչ միայն Բորչալուն, այլ և Թիֆլիզ գավառը և քաղաքը, քանի որ մենք ենք մեծամասնությունը իրենց մայրաքաղաքին և ամբողջ գավառին մեջ: Միայն այդ գավառին մեջ մենք ունինք 92-100.000 հայություն, առանց հաշվելու Վրաստանի այլ մասերու մեջ ձգված 200.000-ի նոտ հայությունը: Եթե մենք բարեկամութեն մղված պատմական, ազգային տեսակետներ հարց չենք բարձրացներ հայացված Թիֆլիզը Հայաստանի մաս կամ միջազգային քաղաք դարձնելու մասին, ինչպես երբեմն կընդունեն ժողովուրդները, ինչու՞ վրացիները մեր արդար, բնական իրավունքներու դեմ երթալով չպիտի գիջեն 7-8000 վրացիներ ձգել մեր սահմաններուն մեջ: Ինչ որ ալ ըլլա. այդ հողամասը ազգագրական տեսակետով բնավ չեն կրնա մաս դառնալ Վրաստանի: Վրացիներն ավելի իրավունք ունին հույները, որոնք մեկ գավառակի մեջ 35 % կկազմեն, իսկ ամբողջը՝ 17.2 %: Հույները բնավ նպատակ չունին ոչ ինքնավարություն ստանալու և ոչ ալ կիստաքրքրվին Հայաստանով կամ Վրաստանով. անոնց հետաքրքրությունը միայն Մեծ Հունաստանն է և անեն կերպ կուզին փոխադրվիլ հոն և արդեն



Ռուբեն Տեր-Մինասյանի անվան թիվ 5 միջնակարգ դպրոցն Ախալքալաքում

մասով մը փոխադրված են և իրենց բռնած հողերը նոսրացրած: Ո՞վ պիտի գրավե հայկական այդ երկրամասի դատարկված կամ դատարկվելիք հողերը: Վրացիները թե հայերը. բնականաբար հայերը, քանի որ նախ՝ այդ երկիրը մերն է եղած և հույները՝ մեր երկրի հյուրերը, երկրորդ՝ Վրաստանի մեջ իսկ կան 50-60.000 անհող հայեր, որոնցմե շատ չեն ախորժիր Վրաստանի ղեկավարները: Ահա ճանփա մը ևս թե Վրաստանն հեռացնելու այդ տարագիրները և թե հայ գաղթականական խնդիրը թեթևցնելու:

Ամփոփելով բոլոր տվյալները՝ կունենանք հետևյալ եզրակացությունը՝

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ա) Տաշիրի գավառը պատմականորեն կպատկանի Հայաստանի:
բ) Անոր բնական սահմանները կսկսին Խրամեն և կվերջանան Փոքր Կովկասի կատարներուն վրա:

գ) Այդ տարածությունը, 5000-5500 քառ. վերստ, մեկ ամբողջություն կկազմե տնտեսական, աշխարհագրական և ազգագրական տեսակետներե:

դ) Այդ ամբողջական միությունը Հայաստանի օրգանական մասը կկազմե, քանի որ կիյնա հայկական Կովկասի վրա և բնակչությամբ հայ է:

ե) Այդ գավառը դուռն է Հայաստանի. այդ դռան բանալիները իր ձեռքն ունենալով է, որ ան կրնա ապահովել իր անկախ տնտեսությունը և անկախ քաղաքականությունը հանդեպ Վրաստանի, Ռուսաստանի և Ադրբեջանի:

զ) Քանի ուրիշի ձեռքն է այդ դուռը, բոլորովին կորած պետք է համարել Ախալքալակը, կորսվելու վտանգին ենթակա՝ Դիլիջանի, Իջևանի շրջանները և անապահով նույն իսկ Շիրակը:

է) Հայաստանի համար խիստ կարևոր է իր գավառներու միացումը հայկական նահանգներուն:

Անհրաժեշտ է լրացնել այս տարրական պահանջը, վերջնապես արմատախիլ ընելու համար ժողովրդական դժգոհությունները: Օրժոնիկիծները չպիտի կրնան ոչ սվիններով և ոչ ալ կեղծավոր ճառերով մթագնել միտքերը, իսկ հայ բուլշևիկները դժվար թե հաջողին տևականացնել իրենց տիրապետությունը խմբական բանտարկություններով և քստորներով: Ատոր կհասնին միայն այն ատեն, երբ հայ ժողովուրդը ամբողջությամբ քշեն դեպի Ռուսաստանի սառնամանիքները: Իսկ եթե իրենց նպատակն է հայ ժողովուրդին հարազատ կուսակցությունը դառնալ, պետք է այդ անմիտ, փորձված միջոցները մեկ կողմ նետելով ջանան գոհացնել ազգային հիմնական պահանջները:

ԱՌԱՋԱԲԱՆ	3
Ինչո՞ւ է Ախալցխան Ջավախքի վարչաքաղաքական կենտրոն դարձնելն այդքան հրատապ: Ջավախքը խարխափումների լաբիրինթոսում	8
Ջավախքին հարկավոր է մշակութային վերածնունդ	33
Ջավախքում ստեղծվելիք հայկական պետական բուհը հայության համար պետք է դառնա համազգային խնդիր	43
Չաբախա-Ջավախքը՝ Հայոց Հայրենիք	54
Վրաստանի էթնոժողովրդագրական քաղաքականությունը երկրի քարթվեական և ոչ քարթվեական ժողովուրդների նկատմամբ	61
Տաշիր գավառին բնագրավումը	76

**Հայոց հյուսիսային դարպասները.
ՋԱՎԱԽՔ
ԼՈՌԻ**

(հողվածների ժողովածու)

Շապիկին պատկերված քարտեզի հեղինակ՝ Գ. Մ. Բադալյան

Հրատարակիչ տնօրեն՝ **Ռուզան Սահակյան**
Խմբագիր և սրբագրիչ՝ **Հայկազուն Ալվրջյան**
Համակարգչային ձևավորումը՝ **Արթուր Բոյախյանի**

Ստորագրված է տպագրության 20.05.2009: Չափսը՝ 60 x 84 1/32:
Թուղթը՝ օֆսեթ- 1: Տառատեսակը՝ «Arial Armenian»:
Տպագրությունը՝ օֆսեթ: Ծավալը՝ 5,625 տպ. մամուլ:

Տպաքանակը՝ 150 օրինակ:

Տպագրվել է «Գևորգ - Հրայր» ՍՊԸ



հրատարակչությունում

Երևան, Գրիգոր Լուսավորչի 6:
Հեռ.՝ 52-79-74, 52-79-47:
Էլ. փոստ lusakn@rambler.ru